ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՓԻՐՈՒՄՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԱՐԱՅԻԿԻ

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Թ. 00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Է. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ……3

ԳԼՈՒԽ 1. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱՑՈՒՅՑ

1.1. *Հանդուրժողականություն* հասկացության ծագումնաբանությունը, բովանդակությունն ու պատմափիլիսոփայական էվոլյուցիան ……12

1.2. Հանդուրժողականությունը որպես սոցիոմշակութային տարածության կառուցարկման եղանակ ……34

1.3. Հանդուրժողականությունը որպես վստահության և երկխոսության հաստատման պայման……45

ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. Հանդուրժողականությունը որպես քաղաքական համակարգի սոցիոմշակութային բնութագիր……58

2.2. Հանդուրժողականության հիմնախնդիրը ազատական-ժողովրդավարական արժեքների համակարգում……75

ԳԼՈՒԽ 3. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

3.1. Մշակութային երկխոսությունը «բազմամշակութային հասարակության» նախագծի իրագործման և ձախողման համատեքստում……91

3.2. Հանդուրժողականությունը որպես «Յուրայինի» և «Օտարի» միջև փոխհարաբերության հաստատման սոցիոմշակութային նորմ……110

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……131

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……135

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի քաղաքակրթական և սոցիոմշակութային փոխակերպումները, որոնց հետևանքով աշխարհը գնալով դառնում է խճանկարային և անկանխատեսելի, հարուցում են անորոշության և տագնապի զգացումներ: Հանգամանք, որը սոցիոմշակութային տարածության կառուցարկման և նոր պայմաններին ու հանգամանքներին համարժեք վարք դրսևորելու խնդիրը դարձնում է արդիական ու հրատապ: Առավել ևս, որ ժամանակակից աշխարհում մի կողմից կարևորվում է սոցիալական համակարգի կայունության ու կարգի խնդիրը, մյուս կողմից, սակայն, սոցիոմշակութային կյանքում տեղի են ունենում այնպիսի փոխակերպումներ և իրարամերժ գործընթացներ, որոնք վտանգում են երբեմնի հաստատված համակեցության կարգը՝ խաթարելով համակարգի արդյունավետ գործառությունն ու զարգացումը: Այս առնչությամբ ժամանակակից աշխարհում հանդուրժողականության հիմնախնդիրը ձեռք է բերել տեսական և գործնական մեծ հնչեղություն և ընկալվում է որպես սոցիոմշակութային այնպիսի նորմ, որը ոչ միայն պարզապես այլոց կարծիքները, գաղափարները, ապրելակերպը, ազգային, մշակութային առանձնահատկությունները հարգելու և ընդունելու միջոց է, այլև էթնիկ և սոցիալական տարբեր խմբերի, կրոնների, մշակույթների նկատմամբ համբերատարության դրսևորման պատրաստակամություն:

Հանդուրժողականության հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նաև ներկա սոցիոմշակութային տարածությանը բնորոշ երկու իրարամերժ միտումներով: Մի կողմից՝ համաշխարհայնացման բարդ գործընթացներով, որոնք էական ազդեցություն են թողնում արդի սոցիալական իրականության կառուցարկման վրա և մեծապես նպաստում տարբեր երկրների ու մշակույթների այնպիսի արժեքների և սկզբունքների միավորմանը, որոնք անհրաժեշտ են համակեցության և առաջընթացի, ազատ զարգացման համար (խաղաղության մշակույթ, ոչ բռնության ռազմավարություն, երկխոսություն, վստահություն, համբերատարություն և այլն), մյուս կողմից՝ ժամանակակից աշխարհում մշակութային համահարթեցման գործընթացները սկսել են լրջորեն սպառնալ

ազգային ինքնությանն ու հոգեկերտվածքին, քանզի հանդուրժողականության քողի տակ, ըստ էության, իրականացվում է մշակութային ագրեսիա և պարտադրանք: Ըստ այդմ նշված իրարամերժ միտումների արագացման, մշակութային բազմազանության, կրոնական և էթնիկ հակամարտությունների պայմաններում հանդուրժողականությունը դիտվում է որպես սոցիալական կեցության համակարգաստեղծ այնպիսի մեխանիզմ, որը կարող է այս կամ այն չափով կարգավորել և ուղղորդել սոցիալական համակարգերի գործառնական արդյունավետությունը:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Հանդուրժողականության հիմնախնդրի վերլուծությանն անդրադարձել են դեռևս անտիկ շրջանի փիլիսոփաներից շատերը (Կոնֆուցիոս, Հերակլիտես, Սոկրատես, Պլատոն, Արիստոտել, Ցիցերոն, Սենեկա և այլն), սակայն հիշյալ մտածողների աշխատություններում հանդուրժողականության խնդիրը հիմնականում քննարկվել է երկխոսության հաստատման համատեքստում: Հիմնախնդիրը սկսվեց համակարգային վերլուծության ենթարկվել հատկապես արդիականության դարաշրջանում, թեև այդ շրջանի մտածողները հանդուրժողականությունը մեկնաբանել են կրոնական տարբեր հայացքներ ունեցող հանրույթների միջև կոնֆլիկտների բացառման և հաղթահարման տեսանկյունից (Թ. Հոբս, Ջ. Լոկ, Շ. Մոնտեսքյո, Ժ. Ժ. Ռուսո, Ֆ. Վոլտեր, Է. Կանտ, Գ. Հեգել և այլն):

Հիմնախնդրի հետազոտության արդիականությունն առավել կարևորվեց հատկապես 19-20-րդ դարերում, որը պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանին բնորոշ այլատյացության զանգվածային դրսևորումներով (լոկալ և համաշխարհային պատերազմներ, ցեղասպանություններ, միջկրոնական պատերազմներ, ահաբեկչություններ և այլն):

Հանդուրժողականության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումներն ու հայեցակարգերը պայմանականորեն կարելի է բաժանել ըստ այն գործընթացների, որոնց համատեքստում քննարկվել է հիմնախնդիրը: Մասնավորապես.

- քաղաքակրթական զարգացումների համատեքստում (Մ. Բախտին, Ջ. Գրեյ, Ա. Թոյնբի, Է. Թոֆլեր, Յու. Լոտման, Մ. Կագան, Ս. Հանթինգթոն, Հ. Մարկուզե, Կ. Պոպեր, Մ. Վեբեր և այլն),

- սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում (Վ. Բրաուն, Գ. Գադամեր, Յու. Հաբերմաս, Մ. Հայդեգեր, Կ. Յասպերս, Ա. Շյուց, Թ. Պարսոնս, Բ. Սուտոր և այլն),

- «Յուրայինի» և «Օտարի» միջև փոխհարաբերությունների և երկխոսության հաստատման համատեքստում (Ն. Բերդյաև, Ու. Էկո, Է. Լևինաս, Մ. Հայդեգեր, Է. Հուսեռլ, Մ. Ռաց, Ռ. Մերտոն, Ա. Սաբլ, Ժ. Սարտր, Բ. Վալտեր, Ս. Վիդմալմ, Մ. Ուոլցեր, Ա. Քամյու և այլն),

- համաշխարհայնացման արդի գործընթացների համատեքստում (Զ. Բաուման, Պ. Բերգեր, Է. Գիդենս, Տ. Լուկման, Ս. Կարա-Մուրզա, Ա. Պանարին, Ի. Վալերստայն, Մ. Քինգ, Ֆ. Ֆուկույամա):

Հանդուրժողականության հիմնախնդրի վերլուծությունն ուղղակիորեն առնչվում է մարդու ապակառուցողական վարքի այն դրսևորումներին (ահաբեկչություն, ծայրահեղականություն, հարկադրանք, այլատյացություն և այլն), որոնց հետազոտությամբ զբաղվել են հայտնի տեսաբաններ Ժ. Բոդրիարը, Ս. Ժիժեկը, Վ. Կանտորը, Ս. Կարա-Մուրզան, Մ. Կինգը, Յու. Կլեիբերգը, Ռ. Մերտոնը, Ա. Նազարեթյանը, Է. Ֆրոմը, Մ. Ֆուկոն և այլք: Հենց վերջիններիս հիմնարար գաղափարներն ու մոտեցումներն էլ ընկած են սույն ատենախոսության հիմքում:

Ինչ վերաբերում է հայ սոցիալ-փիլիսոփայական մտքին, ապա հարկ է նկատել, որ թեև հիմնախնդրի առանձին կողմերին (համաշխարհայնացման գործընթացներ, մշակութային երկխոսություն, բազմակարծություն, սոցիոմշակութային փոխակերպումներ, արդի ազատական-ժողովրդավարական արժեքներ, քաղաքացիական հասարակություն, ազգային ինքնություն, անվտանգություն) հայ տեսաբանները որոշ չափով անդրադարձել են (Է. Աթայան, Է. Հարությունյան, Մ. Հարությունյան, Ա. Հովսեփյան, Վ. Միրզոյան, Ա. Մկրտիչյան, Գ. Սողոմոնյան և այլք), սակայն հանդուրժողականության՝ որպես արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հարացույցի և սոցիոմշակութային տարածության

կառուցարկման մեխանիզմի, հիմնախնդիրը չի ենթարկվել սոցիալ-փիլիսոփայական համակարգային վերլուծության:

Հետազոտության օբյեկտն արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման գործընթացում հանդուրժողականության ֆենոմենն է:

Հետազոտության առարկան հանդուրժողականությունը որպես արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման մեխանիզմների գործառույթների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունն ու հիմնավորումն է:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը հանդուրժողականության՝ որպես արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հարացույցի, ինչպես նաև սոցիոմշակութային տարածության և կյանքի մշակույթի կառուցարկման մեխանիզմների, վերլուծությունն է, ինչը կանխորոշել է վերլուծության տրամաբանությունը և հնարավորություն է տվել հիմնախնդրի շրջանակներում առանձնացնելու տեսական և գործնական նշանակություն ունեցող երեք կարևոր ենթահարցեր.

- հանդուրժողականությունը որպես արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հարացույց,
- քաղաքական մշակույթ և հանդուրժողականություն,
- հանդուրժողականության հիմնախնդիրը համաշխարհայնացման գործընթացների համատեքստում:

Նշված ենթահարցերի ուսումնասիրման և դրանց առանձնահատկությունների բացահայտման նպատակով առաջադրվել են հետազոտական մի շարք խնդիրներ.

- վերլուծել հանդուրժողականության գաղափարի ծագումը, բովանդակությունը, էվոլյուցիան, տեղն ու դերը սոցիոմշակութային արդի փոխակերպումների համատեքստում,
- հետազոտել հանդուրժողականության զանազան ընկալումներն ու դրսևորումները՝ համբերատարություն, անտարբերություն, այլոց աշխարհայացքը ճանաչելու հակվածություն, ներողամտություն և այլն,
- հանդուրժողականությունը դիտել սոցիոմշակութային իրականության կառուցարկման եղանակ, հասարակության խաղաղ համակեցության ապահովման

կարևոր պայման և գրավական, սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ և համակարգող արժեք,

- հանդուրժողականությունը դիտարկել իբրև վստահության և երկխոսության պայման թե՛ միջանձնային և թե՛ հանրային փոխհարաբերություններում,

- հետազոտել արդի ազատական-ժողովրդավարական արժեքների համակարգում հանդուրժողականության տեղն ու դերը որպես ժողովրդավարական քաղաքական համակարգի առանցքային բնութագրիչի,

- հանդուրժողականությունը դիտել որպես ժողովրդավարական, քաղաքական մշակույթի կարևոր տարր և քաղաքացիական հասարակության ձևավորման բարոյահոգեբանական գլխավոր սկզբունք,

- հետազոտել հանդուրժողականության հիմնախնդիրը համաշխարհայնացման պայմաններում որպես քաղաքակիրթ փոխզիջման նորմ միմյանց հետ մրցակցող մշակույթների միջև, մշակութային բազմազանության ու մշակութային երկխոսության ապահովման կարևոր նախապայման,

- դիտել հանդուրժողականությունը որպես «Յուրայինի» և «Օտարի» միջև փոխհարաբերության հաստատման սոցիոմշակութային նորմ,

- բացահայտել հանդուրժողականության կառուցողական և ապակառուցողական գործառույթները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության հիմնական մեթոդաբանական հիմք են ծառայել պատմահամեմատական, համադրական-վերլուծական և կառուցվածքաբանական մեթոդները, որոնց միջոցով իրականացվել է հանդուրժողականության՝ որպես արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման մեխանիզմի, վերլուծությունը համաշխարհայնացման և արդի սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում: Պատմահամեմատական մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել ուսումնասիրել «հանդուրժողականություն» հասկացության ծագումը, բովանդակությունն ու պատմափիլիսոփայական էվոլյուցիան: Կատարվել է պատմահամեմատական վերլուծություն՝ բացահայտելու համար «հանդուրժողականություն» հասկացության ընկալման կրած իմաստափոխությունը պատմական տարբեր դարաշրջաններում և

սոցիոմշակութային տարբեր տարածություններում: Համադրական-վերլուծական մեթոդի կիրառմամբ իրականացվել է ուսումնասիրվող օբյեկտի տարրաբաժանումը ենթամասերի, դրանց վերլուծությունը և համադրումը: Կառուցվածքաբանական մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել բացահայտել սոցիալ-փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական, մշակութաբանական, քաղաքագիտական տարբեր հետազոտություններում հանդուրժողականության և համբերատարության, հանդուրժողականության և անտարբերության, հանդուրժողականության և հնազանդության, կրոնական, քաղաքական, սոցիոմշակութային հանդուրժողականությունների երևութաբանական նմանություններն ու տարբերությունները:

Հետազոտությունում կիրառվել են նաև մշակութաբանական, քաղաքագիտական, սոցիալ-փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական, սոցիոլոգիական միջգիտակարգային մոտեցումներ և հետազոտական սկզբունքներ, որոնց շնորհիվ վեր են հանվել արդի հասարակություններին բնորոշ սոցիոմշակութային հիմնական գործոնները, ներքին օրինաչափությունները և զարգացման սոցիալ-փիլիսոփայական առանձնահատկությունները:

Հետազոտության գիտական նորույթը: Հիմնախնդիրը համաշխարհայնացման գործընթացների և սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում հետազոտելով որպես արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հարացույց՝ ատենախոսության մեջ առաջադրվել են գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական կարևորություն ունեցող մի շարք դրույթներ.

- Հետազոտելով հանդուրժողականության իմաստափոխության էվոլյուցիան՝ կրոնական հանդուրժողականությունից քաղաքակրթական հանդուրժողականության անցումը դիտվել է որպես ազատական-ժողովրդավարական արժեքների գիտակցման և ճանաչման, մարդու իրավունքների և ազատությունների ընդունման, համակեցության, մշակութային բազմազանության և երկխոսության նորմի ձևավորման նախադրյալ ու հիմք:

- Հանդուրժողականությունը դիտարկելով որպես երկխոսության, փոխզիջման և փոխըմբռնման, վստահության սկզբունք՝ առաջադրվել է այն դրույթը, որ

հանդուրժողականությունն արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման կարևոր մեխանիզմ է:

- Բազմակողմանիորեն ներկայացնելով քաղաքակրթական և սոցիոմշակութային արդի փոխակերպումները, հիմնավորվել է այն դրույթը, որ ժամանակակից աշխարհին բնորոշ ապակառուցողական և սոցիոմշակութային տեսակետից վտանգ ներկայացնող այնպիսի միտումներ, ինչպիսիք են ազգամիջյան և միջէթնիկական բախումները, սոցիալական այս կամ այն շերտի իրավունքների ոտնահարումը, ազգային, կրոնական, մշակութային խտրականության դրսևորումները և այլն, պայմանավորված են տարբեր հասարակություններում հանդուրժողականության, որպես սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ նորմի, բացակայությամբ:

- Համաշխարհայնացման արդի միտումների հետևանքով տեղի ունեցող ժողովրդագրական փոփոխությունների վերլուծությունից եզրակացվել է, որ հանդուրժողականության հաստատումը կարող է նպաստել ինչպես սոցիոմշակութային անվտանգության և սոցիալական կայունության հաստատմանը, այնպես էլ արդի հասարակություններին սպառնացող վտանգավոր միտումների առաջացմանը:

- Մշակութային բազմազանության և բազմակարծության, մշակութային երկխոսության և բազմամշակութային հասարակության պայմաններում հանդուրժողականության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հանդես է գալիս որպես համաշխարհայնացման գործընթացներում միմյանց հետ մրցակցող սոցիոմշակութային տարբեր համակարգերի միջև քաղաքակիրթ փոխզիջման նորմ:

- Քաղաքական տարբեր համակարգերում (օրինակ՝ բաց և փակ) առկա հանդուրժողականությունների համեմատական վերլուծություններից առաջադրվում է այն դրույթը, որ կախված հասարակության բնույթից մի դեպքում (օրինակ՝ բաց հասարակության պարագայում) հանդուրժողականությունը կարող է կատարել դրական, կառուցողական գործառույթ և նպաստել հասարակական համակարգի բարելավմանն ու զարգացմանը, իսկ մեկ այլ դեպքում (օրինակ՝ փակ հասարակություններում), ընդհակառակը, նպաստել ավտորիտար և ամբողջատիրական կարգերի հաստատմանն ու ամրապնդմանը:

- Շնորհիվ այս ամենի ատենախոսության մեջ հստակեցվել են հանդուրժողականության կառուցողական և ապակառուցողական դրսևորումները, ճշգրտվել նրա դրսևորման հնարավորություններն ու սահմանները:

Պաշտպանության ներկայացված դրույթները: Ուսումնասիրելով հանդուրժողականության՝ որպես արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման մեխանիզմի սոցիալ-փիլիսոփայական ասպեկտներն ու առանձնահատկությունները, պաշտպանության են ներկայացվում տեսական հետևյալ դրույթները.

- Հաշվի առնելով հասարակական կյանքի կազմակերպման ու կանոնակարգման գործառույթները՝ ատենախոսության մեջ հանդուրժողականությունն առաջին անգամ դիտարկվում է որպես սոցիոմշակութային տարածության կառուցարկման մեխանիզմ:

- Հիմք ընդունելով համակեցության կարգավորման գործում հանդուրժողականության ունեցած տեղն ու դերը՝ առաջադրվել է այն դրույթը, որ կախված ենթատեքստային և համատեքստային մի շարք առանձնահատկություններից՝ հանդուրժողականությունը կարող է կատարել ոչ միայն կառուցողական, այլև ապակառուցողական գործառույթներ:

- Տարատեսակ սոցիալական համակարգերում առկա հանդուրժողականությունների հնարավորությունների ու սահմանների համեմատական վերլուծության հիման վրա ատենախոսը եզրակացնում է, որ հանդուրժողականության աստիճանն ուղիղ համեմատական է տվյալ հասարակության զարգացման աստիճանին:

- Անկախ հանդուրժողականության հնարավոր բացասական հետևանքներից՝ մշակութային բազմազանության և բազմակարծության, կրոնական և էթնիկ հակամարտությունների պայմաններում հանդուրժողականությունը դիտարկվել է որպես սոցիալական կեցության համակարգաստեղծ մեխանիզմ, որպես խաղաղ համակեցությունն ապահովող որոշակի աշխատակարգ: Ըստ այդմ հանդուրժողականությունը զարգացած, առաջադեմ հասարակություններում

խաղում է հիմնականում կառուցողական, իսկ, ընդհակառակը, հետամնաց, բռնակալական երկրներում՝ գերազանցապես ապակառուցողական դեր:

- Հիմք ընդունելով նախորդ դրույթները՝ ատենախոսը պաշտպանում է այն տեսակետը, որ բազմամշակութային հասարակության ձևավորման նախագծում հանդուրժողականությունը կարող է դառնալ ոչ միայն բազմամշակութային հասարակության կառուցարկման անհրաժեշտ պայման և արժեք, երկխոսության իրականացման միջոց և մշակութային բազմազանության ընդունման եղանակ, այլև բազմամշակութային հասարակության նախագծի ձախողման հիմնական պատճառ:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱՑՈՒՅՑ

1.1. *Հանդուրժողականություն* հասկացության ծագումնաբանությունը, բովանդակությունն ու պատմափիլիսոփայական էվոլյուցիան

Ժամանակակից աշխարհի սոցիոմշակութային առանձնահատկություններից մեկը հանդուրժողականության՝ որպես կառուցվածքաստեղծ նորմի կիրառման առաջնայնության սկզբունքն է: Հանդուրժողականության սկզբունքի կիրառման կարևորությունը դրսևորվում է արդի աշխարհի գրեթե բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, իրավական, սոցիալական, կրոնական և այլն: Որպես սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ նորմ՝ հանդուրժողականության սկզբունքը ենթարկվել և ենթարկվում է իմաստային փոփոխությունների: Եթե հանդուրժողականության սկզբունքի առաջնայնության կարևորությունը թվում է անվիճելի, ապա հանդուրժողականության էության և սահմանման խնդիրները թերևս վիճահարույց են նաև այժմ: Հասկանալու համար, թե ինչ գործառույթ է կատարում հանդուրժողականությունն արդի աշխարհի սոցիոմշակութային նախադրյալների համատեքստում և ինչպիսի դերակատարում ունի արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման գործընթացում, պետք է նախ և առաջ անդրադառնալ *հանդուրժողականություն* հասկացության ծագումնաբանությանը, բովանդակությանն ու պատմական զարգացմանը: *Հանդուրժողականությունն* ինքնին բարդ և բազմաբովանդակ սոցիոմշակութային երևույթ է: Թեև *հանդուրժողականություն* հասկացության սահմանումն առաջին հայացքից շատ պարզ է թվում, սակայն իրականում այն այնքան էլ միանշանակ չէ, քանի որ ծագում է կոնկրետ նախապայմաններից և հանգեցնում է տարբեր հետևանքների: Այն սերտորեն կապված է փիլիսոփայական հիմնարար այնպիսի հարցերի հետ, որոնք ուղղված են մարդկային էության բացահայտմանը, նրա ինքնությանը, հնարավորությունների, իմացության ու

փոխըմբռնման սահմաններին[1]: Սակայն խնդիրն այն է, որ մասնագիտական գրականությունում չկա *հանդուրժողականություն* հասկացության հստակ սահմանում: Հանդուրժողականության սկզբունքի սահմանման համար նախ և առաջ հարկ է նկատել, որ այն ցանկացած հասարակության, սոցիալական խմբի, քաղաքացու մշակույթի որակն է (բարոյական, իրավական, քաղաքական)՝ անկախ տարիքից, սեռից, կրոնական, էթնիկ և ռասայական պատկանելությունից: Այն ունի դրսևորման տարբեր ձևեր՝ անհատական, հասարակական՝ արտացոլված բարոյական նորմերի, հասարակական հոգեբանության, գիտակցության մեջ և պետական՝ արտացոլված քաղաքական պրակտիկայում[2]:

Ըստ *հանդուրժողականություն* հասկացության լեզվաբանական վերլուծության՝ լատիներեն «tolerantia» բառն ունի մի քանի սահմանումներ: Առաջին՝ որպես օրգանիզմի իմունոլոգիական հակազդման ամբողջական կամ մասնակի բացակայություն, այսինքն՝ կենդանու կամ մարդու օրգանիզմի կողմից հակամարմիններ արտադրելու կարողության բացակայություն կամ նվազում՝ ի պատասխան հակածինների առկայության: Երկրորդ՝ որպես դեղաբանական եզրույթ կիրառվում է բնութագրելու դեղի կամ կենսաբանական ակտիվ նյութի ազդեցության նվազումը կամ բացակայությունն օրգանիզմի վրա, երրորդ՝ որպես սոցիոմշակութային եզրույթ՝ համբերատար վերաբերմունք ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի նկատմամբ[3]: Առանձնացվում է հանդուրժողականության բժշկագիտական վերլուծության երկու մոտեցում.

1. իմունային հանդուրժողականություն - օրգանիզմի իմունային համակարգի համբերատարությունն է փոխպատվաստվող օտար հյուսվածքների նկատմամբ[4], օրգանիզմի անկարողությունը՝ պայքարելու օտար մարմինների՝ հակածինների դեմ, օրգանիզմի այնպիսի վիճակ, երբ իմունային համակարգը ընդունում է օտար մարմինները կամ բջիջները որպես սեփական՝ առանց հակազդելու վերջիններիս;

---

[1] Տե՛ս **Лекторский В. А.**, О толерантности, плюрализме и критицизме// Вопр. Философии, М., 1997, № 11, էջ 46:

[2] Տե՛ս «Толерантность», Обш. ред. **М. П. Мчедлова**, М., Республика, 2004, էջ 10:

[3] Տե՛ս Современный словарь иностранных слов, М., Русский язык, 1993, էջ 610:

[4] Տե՛ս **Капустина Н. Г.,** Формирование толерантности в структуре этического мировоззрения, Известия Уральского государственного университета, № 60, Екатеринбург, 2008, էջ 61:

2. հանդուրժողականությունը դեղագիտության մեջ – դեղերի, թմրանյութերի կամ հոգեմետ միջոցների կրկնակի ներմուծման նկատմամբ ազդեցության նվազումն է, կամ այլ կերպ՝ օրգանիզմի ընտելացումը դեղերի կրկնակի ներմուծման ժամանակ, որի դեպքում ցանկալի ազդեցության հասնելու համար պահանջվում է նույն դեղանյութի ավելի մեծ դեղաչափ: Որոշ դեպքերում դեղերի ազդեցության ուժն օրգանիզմի վրա կարող է նվազել բուժման ընթացքում որպես դեղերի կրկնակի կիրառման հետևանք՝ ստեղծելով հարաբերական հանդուրժողական վիճակ տվյալ դեղի նկատմամբ[5]:

Ինչպես տեսնում ենք, եթե սոցիոմշակութային, հոգեբանական, կրոնական հանդուրժողականության դեպքում հանդուրժողականությունն ունի դրական իմաստ, ապա բժշկագիտական հանդուրժողականության դեպքում այն ունի ընդգծված բացասական բովանդակություն:

Տարբեր լեզուներում հանդուրժողականությունն ունի տարբեր ընկալումներ՝ պայմանավորված տվյալ ազգի մշակութային, պատմական, ազգային և մի շարք այլ առանձնահատկություններով:

Աղյուսակ 1-ում տարբեր լեզուներով ներկայացված է հանդուրժողականության սահմանման տարբեր մեկնաբանություններ և համեմատական վերլուծություններ[6]:

Աղյուսակ 1

***Հանդուրժողականություն* հասկացության սահմանումը տարբեր լեզուներով**

Ռուսերեն	Терпимость	Հաշվի առնել այլոց կարծիքները, լինել ընդունակ ինչ-որ բան կամ ինչ-որ մեկի տանելու, լինել զուսպ, դիմացկուն, կարողանալ համակերպվել ինչ-որ բանի գոյության հետ:
Անգլերեն	Tolerance	Անտարբեր, համբերատար լինելու պատրաստակամություն:

[5] Տե՛ս **Bertram G. Katzung**, Basic and clinical pharmacology, Singapore, Tenth Edition. International Edition, Mc Graw Hill, 2007, էջ 30:

[6] Տե՛ս **Рянжина М. Н.**, Толерантность как феномен культуры, социальной действительности и воспитания// Среднее профессиональное образование: Ежемесячный теоретический и научно-методический журнал, М., 2011, №3, էջ 23:

Ֆրանսերեն	Tolerance	Հարաբերություն, ըստ որի ընդունվում է, որ այլոք կարող են մտածել կամ գործել այլ կերպ:
Իսպաներեն	Tolerancia	Սեփական և այլոց գաղափարների և մտքերի տարբերություններն ընդունելու կարողություն:
Արաբերեն	Tasamul	Ներում, բարեգթություն, ապրումակցում, համբերատարություն, հեզություն, հաշտության պատրաստակամություն:

Աղյուսակից երևում է, որ հանդուրժողականության ընկալումն ու մեկնաբանումը տարբեր հասարակություններում և մշակույթներում տարբեր են, սակայն տարբերություններից զատ կան նաև էական ընդհանրություններ: Տարբեր հասարակություններում և մշակույթներում հանդուրժողականության սոցիոմշակութային արժեքի ըմբռնման և ընկալման առանձնահատկություններից հետևում է, որ լայն իմաստով այն կարելի է մեկնաբանել որպես մարդկանց վարքի, սովորույթների, ավանդույթների, կենսակերպի, հավատալիքների, կարծիքների, գաղափարների, ինչպես նաև ազգության, սեռի, ռասայի, կրոնի նկատմամբ համբերատարություն:

Բնութագրական է նաև այն, որ մի շարք փիլիսոփայական բառարաններում *հանդուրժողականություն* հասկացությունը նույնացվում է *համբերատարություն* հասկացության հետ, ուստի հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ: Չնայած իմաստային բազմաթիվ ընդհանրություններին, այնուամենայնիվ դրանց միջև կան նաև մի շարք էական տարբերություններ: Մասնագիտական վերլուծություններում *հանդուրժողականություն* հասկացության իմաստային կիրառելիության դաշտը շատ ավելի լայն է, քան հանդուրժողականության՝ միայն որպես համբերատարության դիտարկումը: Բանն այն է, որ հանդուրժողականությունն այլոց նկատմամբ միայն սոցիալական համբերատար վերաբերմունքի ձև չէ, այլ շատ ավելի բարդ ու բազմաբովանդակ երևույթ է: Եթե համբերատարությունը կարելի է դիտել նաև որպես անընդունելի օբյեկտների նկատմամբ հաշտվելու, հարմարվելու վերաբերմունքի ձև, ապա այլ է վիճակը, երբ գործ ունենք հանդուրժողականության հետ: Համբերատար

վարքագիծը ենթադրում է նաև թաքնված թշնամանք ու ատելություն համբերատարության օբյեկտի նկատմամբ, ինչն անհատի սեփական ինչ-ինչ շահերի և կողմնորոշումների ճնշման և անտեսման հետևանք է: Ի տարբերություն համբերատարության՝ հանդուրժողականությունը ենթադրում է անհատի սեփական ինքնավարության և կամարտահայտման իրավունքի և ազատության պահպանում: Որպես անհատի հատկություն՝ հանդուրժողականությունը ենթադրում է երկխոսության և համագործակցության պատրաստակամություն, «օտարի», «ուրիշի» ճանաչում[7]: Սակայն եթե հանդուրժողականությունը ենթադրում է այլոց՝ որպես ենթակա-անհատների ճանաչում, ապա համբերատարությունն ամենևին էլ կարող է չճանաչել այլոց ենթակայական հատկությունները: Հարկ է նկատել նաև, որ համբերատարությունն ավանդաբար ընկալվել է որպես այլոց կարծիքների նկատմամբ ներողամիտ վերաբերմունք: Մինչդեռ հանդուրժողականությունը ենթադրում է ոչ թե ներողամտություն, այլ բարյացակամություն, երկխոսություն և համագործակցության պատրաստակամություն: Այն նույնական չէ համբերատարության հետ: Թվում է, թե երկու դեպքում էլ գործ ունենք սոցիոմշակութային կարևոր կառուցվածքաստեղծ արժեքների հետ, սակայն իրականում եթե հանդուրժողականությունն իսկապես կառուցվածքաստեղծ արժեք է, ապա համբերատարությունը կարող է սոցիալական ապակառուցողական երևույթների առաջացման պատճառ դառնալ, քանզի համբերատարության դեպքում սոցիալական և անհատական տեսանկյունից բացասական երևույթներն ու լիցքերը կարող են արտամղվել հանրային կյանքից, օտարվել, սակայն չչքանալ և կուտակվել անհատի կամ հասարակության ինչ-որ խմբի՝ այլոց նկատմամբ վերաբերմունքի դիրքորոշման պաշարում, ինչն ինքնին վտանգավոր սոցիոմշակութային վիճակ է:

Հանդուրժողականությունը սոցիալական արժեք է, որն ապահովում է մարդու հիմնարար իրավունքների իրացումը, ազատությունը և անվտանգությունը: Այն ակտիվ սոցիալական վարքի դրսևորում է, անհրաժեշտություն, որին մարդ հանգում է ինքնակամ և գիտակցաբար: Առաջանալով հասարակական գիտակցության մեջ՝ հանդուրժողականությունը ձևավորվում է որպես հասարակական իդեալ, գոյության

[7] Տե՛ս Словарь философских терминов/ науч. ред. **В. Г. Кузнецов.** М., ИНФРА-М., 2005, էջ 590-591:

անհրաժեշտ նախապայման և ենթադրում է հասարակության կողմից տարբեր դիրքորոշումների ընդունում: Սոցիոմշակութային վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ *հանդուրժողականություն* հասկացությունն իմաստափոխվել է՝ կրոնական հանդուրժողականությունից անցում կատարելով դեպի սոցիոմշակութային և քաղաքական հանդուրժողականություն: Ուստի հանդուրժողականության նշանակությունը ևս փոփոխություն է կրել, և ներկայումս ընկալվում է որպես քաղաքական սկզբունք և արդի աշխարհի գլխավոր ունիվերսալ արժեքներից մեկը: Պատմամշակութային զարգացման արդյունքում հանդուրժողականության՝ որպես չարի նկատմամբ համբերատար վերաբերմունքի ձևի ընկալումը փոխարինվում է ակտիվ կառուցողական հանդուրժողականության ընկալմամբ[8]: Այս դեպքում համբերատարությունը՝ ի տարբերություն հանդուրժողականության, սոցիալական վարքի դրսևորման ավելի պասիվ եղանակ է: Մինչդեռ հանդուրժողականությունն ամենևին էլ այլոց նկատմամբ պասիվ-կրավորական վարքի ձև չէ, ինչը բնութագրական է համբերատարությանը:

Հանդուրժողականության խնդրին հանգամանալից կերպով անդրադարձել է Վ. Ա. Լեկտորսկին, որն առաջարկում է հանդուրժողականության ըմբռնման չորս հիմնական մոտեցումներ: Ըստ առաջին ըմբռնման՝ հանդուրժողականությունը դիտվում է որպես անտարբերություն. սա հանդուրժողականության պատմական առաջին, դասական ձևն է: Ըստ այս մոտեցման՝ գոյություն ունեն այնպիսի տեսակետներ, որոնց ճշմարտացիությունը միանշանակ հնարավոր չէ ապացուցել: Խոսքը նախ և առաջ կրոնական հայացքների, մետաֆիզիկական, որոշ էթնիկ համոզմունքների, տարբեր մշակութային արժեքների մասին է: Նմանատիպ կողմնորոշումները մարդկանց կողմից ընդունվում են ոչ ռացիոնալ մակարդակում, որի ժամանակ հանդուրժողականությունը դրսևորվում է որպես անտարբերություն: Հաջորդ ըմբռնման տեսանկյունից հանդուրժողականությունը դիտվում է որպես փոխըմբռնման անհնարինություն: Ըստ հետևյալ մոտեցման՝ բոլորը, անկախ իրենց ռասայից, սեռից և ազգությունից, ունեն ֆիզիկական գոյության և մշակութային զարգացման հավասար իրավունքներ: Այս դեպքում հանդուրժողականությունը հարգանք է Ուրիշի այլության

[8] Տե՛ս **Кораблева А. А.,** Аксеологический подход к определению толерантности, Ярославский педагогический вестник, Ярославль, 2012, № 2, էջ 43:

նկատմամբ: Հանդուրժողականության ըմբռնման երրորդ տեսակը ներողամտությունն է: Պատմական փաստ է, որ այս կամ այն հասարակություններում, անկախ տվյալ դարաշրջանում գերիշխող գաղափարախոսությունից և արժեհամակարգից, տարբեր մշակութային համակարգերի, սովորույթների միջև ընթանում է պայքար կամ այլ կերպ՝ մրցակցություն, որի ընթացքում փորձ է արվում հաստատել սեփական մշակույթի կամ արժեհամակարգի գերազանցությունը: Այն հանգամանքը, որ անհատը՝ որպես մշակութային որևէ արժեհամակարգի ներկայացուցիչ, չի ընդունում այլոց հայացքները, չի համաձայնում այլոց այլընտրանքային փաստարկների հետ, խոսում է այն մասին, որ վերջինս սոցիոմշակութային որոշակի հարաբերություններում չունի այլոց հետ փոխհարաբերվելու համապատասխան վարքի ձև: Տվյալ դեպքում անհատը «հարկադրված» է հանդուրժել համապատասխան վարքի և վարվեցողության ձև չունեցողների հայացքները, որոնց հետ նա համակարծիք չէ: Ուստի հանդուրժողի տեսանկյունից անիմաստ է նման մարդկանց հետ քննադատական բանավեճի մեջ մտնելը: Նման մոտեցման դեպքում հանդուրժողականությունը ներողամտություն է ուրիշների թուլությունների և անկատարության նկատմամբ: Եվ, ի վերջո, հանդուրժողականության չորրորդ տեսակը ենթադրում է սեփական փորձի ընդլայնում և քննադատական երկխոսություն: Տարբեր մշակութային համակարգեր և արժեքներ ոչ միայն պայքարի մեջ են գտնվում միմյանց հետ՝ այդ ընթացքում փորձելով ցույց տալ սեփական առավելությունը մյուսների նկատմամբ, այլև փորձում են հաշվի առնել ուրիշների փորձը և հնարավորինս օգուտ քաղել նրանցից՝ ընդլայնելով սեփական փորձի սահմանները, ինչի մասին է վկայում նաև պատմական փորձը, քանի որ պատմության մեջ ամենահետաքրքիր գաղափարներն առաջացել են հենց տարբեր ինտելեկտուալ հարացույցների բախման արդյունքում: Այս դեպքում քննադատական երկխոսության միջոցով հայացքների փոխադարձ փոփոխման համատեքստում հանդուրժողականությունը հարգանք է ուրիշների տեսակետների նկատմամբ[9]: Ասվածից ակնհայտ է դառնում, որ հանդուրժել նշանակում է ընդունել աշխարհում տիրող տարբերություններն ու բազմազանությունները (մշակութային, քաղաքական, կրոնական, գաղափարական), հարգել և ներողամիտ լինել Ուրիշների կարծիքների,

[9] Տե՛ս **Лекторский В. А.**, նշվ. աշխ., էջ 48-54:

փորձի, կենսակերպի նկատմամբ, քանի որ չհասկանալն ու չընդունելն ամենևին էլ թշնամանքի և ատելության պատճառներ չեն:

Լեկտորսկու հիշյալ սահմանումներին կարելի է ավելացնել նաև հանդուրժողականության Ուոլցերի սահմանումը, այն է՝ հանդուրժողականությունն իբրև համակերպում այլոց տարբերությունների հետ՝ հանուն սոցիալական խաղաղ համակեցության ապահովման[10]: Ըստ նպատակադրության՝ առանձնացվում է հանդուրժողականության դրսևորման երկու եղանակ՝ պասիվ (համբերատարություն, անտարբերություն և այլն) և ակտիվ: Պասիվ հանդուրժողականության դեպքում հանդուրժողը (սուբյեկտը), չունենալով չհանդուրժելու, չհամակերպվելու այլընտրանք, ընդունում և հաշտվում է Ուրիշի (օբյեկտի) այլության կամ ուրիշության հետ, ընդ որում՝ համակերպումը կարող է պատճառավորված լինել ինչպես հանդուրժողի անտարբերությամբ, այնպես էլ Ուրիշի կողմից գործադրվող հարկադրանքով, անգամ բռնությամբ: Այս դեպքում հանդուրժողականությունն ունի ապակառուցողական նշանակություն, քանի որ նպաստում է սոցիալական լարվածության աճին, ինչը կարող է լինել ծայրահեղականության, ահաբեկչության, բռնության այլ ձևերի առաջացման պատճառ: Ապակառուցողական հանդուրժողականության հիմքում ընկած է ոչ թե Ուրիշի տարբերության, այլության ընդունման ճանապարհով «ազատություն հանուն» սկզբունքի հաստատումը, այլ «ազատություն ինչ-որ բանից» սկզբունքը (տվյալ դեպքում՝ «ազատություն ընդվզելու, ըմբոստանալու վտանգներ պարունակող հետևանքից» սկզբունքը): Մինչդեռ ակտիվ կամ կառուցողական հանդուրժողականության հիմքում ընկած է Ուրիշի այլությունը գիտակցաբար ընդունելու, Ուրիշին հասկանալու սկզբունքը: Ակտիվ, կառուցողական հանդուրժողականության դեպքում հանդուրժողը զուտ կրավորական ենթակա չէ, այլ ներգործական սուբյեկտ է, որի հանդուրժողականությունն ուղղված է «ազատություն հանուն» սկզբունքի հաստատմանն ու կայացմանը, բազմազանության ընդունմանն ու խթանմանը, սոցիալական լարվածության նվազեցմանն ու չեզոքացմանը: Ըստ էության՝ ակտիվ կառուցողական հանդուրժողականությունը ենթադրում է ոչ միայն բռնության բացառում, Ուրիշի այլության հետ համակերպում, այլև Ուրիշի այլության

[10] Տե՛ս **Уолцер М.,** О терпимости, М., Идея-Пресс, Дом интеллектуальной книги, 2000, էջ 25:

ճանաչման անհրաժեշտություն, հարգանք այլոց աշխարհայացքների և տարբերությունների նկատմամբ: Եթե ակտիվ հանդուրժողականության հիմքում ընկած են մարդուն բնորոշ այնպիսի որակներ, ինչպիսիք են գթասրտությունը, ապրումակցումը, ճանաչողությունը և այլն, ապա ապակառուցողական հանդուրժողականությունը հանգեցնում է սոցիալական և անձնային փոխհարաբերությունների վատթարացմանը, ինչի հետևանքով ձևավորվում է անառողջ սոցիալական միջավայր, և աճում է սոցիալական լարվածությունը՝ իր բացասական հետևանքներով:

Լեկտորսկու չորրորդ սահմանումը և Ուոլցերի սահմանումը կառուցողական հանդուրժողականության օրինակներ են, ինչը ենթադրում է հանդուրժողի (սուբյեկտի) ակտիվ ներառվածություն, հետաքրքրվածություն, որի նպատակը ինչպես սոցիալական խաղաղ համակեցության ապահովումն է, այնպես էլ՝ այլոց աշխարհայացքների և մշակութային առանձնահատկությունների ճանաչման շնորհիվ ինքնազարգացումն ու ինքնակատարելագործումը: Մինչդեռ ապակառուցողական հանդուրժողականությունը նպաստում է տագնապի, անորոշության, ամենաթողության, բռնության զանազան դրսևորումների տարածմանը: Ապակառուցողական հանդուրժողականության մեկ այլ դրսևորման եղանակ է նաև անխտրական հանդուրժողականությունը, որի դեպքում հանդուրժելիի և անհանդուրժելիի սահմանները հստակորեն սահմանազատված չեն. իրավիճակ, երբ տարերային հանդուրժողականությունը տարածվում է անխտիր ամեն տարբերության նկատմամբ, ընդհուպ մինչև ամենաթողությունը, բարոյական որևէ սկզբունքի բացակայությունը, հանրության համար վտանգ ներկայացնող վարքի ձևերը և այլն: Ընդ որում՝ հաճախ անխտրական հանդուրժողականության ջատագովները գտնում են, որ հնարավոր չէ հստակորեն սահմանել հասարակության համար վտանգավոր տարբերությունները, որպեսզի սահմանազատվի նաև հանդուրժելիի և անհանդուրժելիի սահմանները, ինչն էլ թերևս ընկած է անխտրական հանդուրժողականության հիմքում: Մինչդեռ հասարակության համար վտանգ ներկայացնող վարքի ձևերը կարելի է սահմանել հետևյալ կերպ՝ հասարակության համար վտանգ են ներկայացնում վարքի բոլոր այն դրսևորումները, որոնց հիմքում ընկած է հասարակական կարգի նպատակաուղղված խաթարումը, այլոց վնասելու

նպատակադրությունը, որոնք ուղեկցվում են բռնություններով կամ բռնության հնարավոր դրսևորումներով:

Հանդուրժողականության ըմբռնման տարբեր մոտեցումներ է առաջարկել նաև ռուս տեսաբան Ա. Ասմոլովը, ըստ որի՝ հանդուրժողականությունը տարբերությունների և փոխակերպվող իրականության ընդհանրության պահպանման նորմ է: Այն հարգանքի և հավասարության ընդունում է, գերիշխանության և բռնության հրաժարում, մշակութային, կրոնական բազմազանության ընդունում, մարդկային բնութագրիչ և կարևոր հատկություն, որի միջոցով մարդիկ փորձում են հարմարվել և ճանաչել միմյանց: Նա առանձնացնում է հանդուրժողականության երեք տեսակ՝ 1.դիմադրողականություն, տոկունություն, 2.համբերատարություն, 3.թույլատրելիություն, թույլատրելի շեղում[11]: Արդի աշխարհում բազմազանությունն ու տարբերությունը դիտելով որպես անխուսափելի երևույթներ՝ Ասմոլովը միաժամանակ ընդգծում է, որ հանդուրժողականությունը տարբերությունների մահ չէ, այլ տարբերությունների ընկալում և պահպանում է[12]:

Հանդուրժողականության սկզբունքով սոցիոմշակութային իրականության կառուցարկման անհրաժեշտությունը միջազգային իրավական նշանակություն ձեռք բերեց շնորհիվ 1995թ.-ի նոյեմբերի 16-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակագրի: Հիշյալ հռչակագրի համաձայն՝ յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 16-ը նշվում է որպես հանդուրժողականության միջազգային օր: Հռչակագրում բազմակողմանիորեն և բովանդակալից կերպով սահմանվում է հանդուրժողականության բուն էությունը: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված «Հանդուրժողականության սկզբունքների հռչակագրի»՝ հանդուրժողականությունը հարգանք է, հարուստ մշակութային բազմազանության ընդունում և ընկալում, մարդկային անհատականության ինքնարտահայտման յուրօրինակ ձև: Հանդուրժողականությանը բնորոշ են իմացություն, հրապարակայնություն, հաղորդակցում, մտքի, խղճի, դավանանքի և համոզմունքի ազատություն: Այն ներդաշնակություն է բազմազանության մեջ: Հանդուրժողականությունը ոչ միայն բարոյական պարտք է, այլ նաև քաղաքական և

---

[11] Տե՛ս **Асмолов А. Г.,** Толерантность от утопии к реальности// На пути к толерантному сознанию/ Отв. ред. А. Г. Асмолов, М., Смысл, 2000, էջ 6:

[12] Տե՛ս **Асмолов А. Г.,** Историческая культура и педагогика толерантности// Мемориал, 2001, № 24, էջ 63:

իրավական պահանջ: Հանդուրժողականությունը պատերազմի մշակույթից անցում է խաղաղության մշակույթի: Այն ամենևին էլ զիջում և անտարբերություն չէ: Հանդուրժողականությունը մերժում է դոգմատիզմը, ճշմարտության բացարձականացումը: Հանդուրժողականությունն ամենևին էլ չի ենթադրում հանդուրժող վերաբերմունք սոցիալական անարդարությունների նկատմամբ կամ հրաժարում սեփական տեսակետից: Թեև մարդիկ տարբերվում են միմյանցից արտաքին տեսքով, կարգավիճակով, վարքով, արժեհամակարգով, այնուամենայնիվ բոլորն էլ հավասարապես իրավունք ունեն ապրելու և պահելու սեփական ինքնությունը: Ոչ մի դեպքում մեկի տեսակետը չի կարող պարտադրվել նաև մյուսներին[13]: Ինչպես երևում է հռչակագրից, հանդուրժողականությունը դեմ է ամեն տեսակ միօրինակությանը, միաչափությանն ու կարծրատիպերին, ինչի շնորհիվ սոցիալական կյանքին հաղորդվում է մշակութային և անհատական բազմազանություն, ընգծվում և կարևորվում է տարբեր անհատների միջև տարբերությունների առկայությունն ու անհրաժեշտությունը: Ընդունելով հանդուրժողականության մասին հռչակագիրը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն նպատակ էր հետապնդում աշխարհը զերծ պահել կրոնական, քաղաքական, մշակութային, սոցիալական, տնտեսական հնարավոր պատերազմներից, որոնք անխուսափելի են համաշխարհայնացման միտումներ ունեցող արդի աշխարհում: Հանդուրժողականության սկզբունքի կիրառումն է, որ հնարավորություն է տալիս հաստատել խաղաղության մշակույթ և դիմակայել ժամանակակից աշխարհում տիրող մարտահրավերներին:

Սակայն մինչ հիշյալ հռչակագրի ընդունումը հանդուրժողականությունը տարբեր կերպ է ընկալվել և մեկնաբանվել պատմական տարբեր ժամանակաշրջաններում՝ կրելով մի շարք իմաստային փոփոխություններ: Հանդուրժողականության սահմանման և իմաստավորման գործընթացն ունի հետաքրքիր և բովանդակալից պատմություն: Դեռևս անտիկ դարաշրջանի փիլիսոփաներից ոմանք (Հերակլիտես, Սոկրատես, Պլատոն, Արիստոտել, Կոնֆուցիոս, Սենեկա, Ցիցերոն և այլք) անդրադարձել են հանդուրժողականության խնդրին: Հանդուրժողականության անտիկ շրջանի ընկալման

[13] Մանրամասն տե՛ս **Декларация принципов толерантности,** Принята резолюцией 5.61 Генеральной конференции ЮНЕСКО от 16 ноября 1995 года
http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/toleranc.shtml (11.07.2015)

համաձայն՝ հանդուրժողականությունը դրսևորվում է հասարակական կյանքի երեք հիմնական ոլորտներում՝ պետական-քաղաքական, կրոնական և փիլիսոփայական: Պետական-քաղաքական ոլորտում հանդուրժողականության գլխավոր գործառույթը քաղաք-պետությունների համագործակցության պրակտիկայի հաստատումն էր, դրանցից յուրաքանչյուրի ինքնավարության ապահովումը: Կրոնական ոլորտում հանդուրժողականությունը սեփական աստվածների փոփոխման և նոր աստվածների հաստատման համատեքստում ազգամիջյան հարաբերություններում ներդաշնակության և փոխըմբռնման ապահովման միջոց էր (օրինակ՝ հռոմեացիները, նվաճելով նորանոր տարածքներ, միաժամանակ նվաճում էին նորանոր աստվածներ): Փիլիսոփայության մեջ հանդուրժողականությունը ենթադրում էր մարդկանց հավասարության և ազատության սկզբունքների գերակայություն (Պլատոն, Արիստոտել)[14]: Այսպիսով, թեև անտիկ շրջանին բնորոշ էին բռնությունը, ստրկությունը, մարդու իրավունքների և արժանապատվության ոտնահարումը, որոնք հակադրվում էին հանդուրժողականության սկզբունքին, այնուամենայնիվ հենց հանդուրժողականությամբ է պայմանավորված եղել անտիկ աշխարհի մշակութային հարուստ արժեքների և մշակութային բազմազանության գոյությունը:

Թեև դեռևս անտիկ շրջանի մի շարք փիլիսոփաների կողմից քննարկվել է հանդուրժողականության խնդիրը, այնուամենայնիվ առավել համակարգված և խորը կերպով *հանդուրժողականություն* հասկացությունը մշակվել է 17-րդ դարի անգլիացի փիլիսոփա Ջ. Լոկի կողմից: Այդ է պատճառը, որ շատ հաճախ նրան համարում են հանդուրժողականության հասկացության հիմնադիր: Սակայն «հանդուրժողականություն» բառը լատիներենից ֆրանսերենին անցել է մոտավորապես 16-րդ դարում, և ինչպես նշում է ֆրանկֆուրտյան դպրոցի հայտնի ներկայացուցիչ փիլիսոփա Յու. Հաբերմասը, այդ ժամանակահատվածում այն ուներ բավականին սահմանափակ իմաստ և համարժեք էր կրոնական հանդուրժողականությանը[15]: Իր «Ե՞րբ պետք է լինենք հանդուրժող» հոդվածում Յու. Հաբերմասը մեջբերում է Շ. Մոնտեսքյոյի հետևյալ միտքը. «Երբ որոշ երկրներ մի շարք կրոնների թույլտվության

---

[14] Տե՛ս **Розин В. М.** Предпосылки и особенности античной культуры., М., ИФРАН, 2004, էջ 254-258:

[15] Տե՛ս **Хабермас Ю.** Когда мы должны быть толерантными? О конкуренции видений мира, ценностей и теорий// Социологические исследования, М., 2006, № 1, էջ 45:

օրենք ընդունեցին, նրանք պետք է պարտադրեին փոխադարձ հանդուրժողականության դրսևորում ևս»[16]: Իրավամբ, կրոնը մի հզոր ուժ է, որը կարող է ինչպես միավորել, համախմբել, ապրելու և գոյատևելու ուժ տալ հասարակությանը, այնպես էլ հասարակության մասնատման, պառակտման և, ի վերջո, կազմաքանդման պատճառ դառնալ: Այս իմաստով կրոնը կարող է լինել ինչպես համակարգաստեղծ գործոն, այնպես էլ իրականացնել ապակառուցողական գործառույթներ: Պատահական չէ, որ արդի աշխարհում մի շարք ահաբեկչությունների, պատերազմների հիմքում ընկած է հենց կրոնական անհանդուրժողականությունը: Արյունահեղ պատերազմներ են տեղի ունենում կրոնական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների միջև՝ պատճառ դառնալով տարբեր ազգերի, պետությունների, սոցիալական խմբերի մասնատմանն ու պառակտմանը: Կրոնական բազմազանության պայմաններում կրոնական անհանդուրժողականության դրսևորումը կարող է հանգեցնել հասարակության՝ որպես ամբողջական համակարգի կազմաքանդմանը: Մյուս կողմից էլ կրոնական հանդուրժողականությունը շատ կարևոր է ժամանակակից հասարակությունների միջև երկխոսության հաստատման գործում: Բանն այն է, որ կրոնական ոլորտն անձնական տարածության մի մաս է, որը չի կարող սահմանափակվել հանրային որևէ արգելքով[17]: Լայն իմաստով կրոնական հանդուրժողականությունը հարգանք է այլոց կրոնական հավատալիքների, կրոնական բազմակարծության, հայացքների, արժեքների նկատմամբ: Կրոնական հանդուրժողականությունն ամենևին էլ չի ենթադրում սեփական կրոնական պատկանելությունից հրաժարում: Կրոնական հանդուրժողականությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր անհատ ունի կրոնական ազատություն, իրավունք ընտրելու այն կրոնը, որին նա նախապատվություն է տալիս, այսինքն՝ կրոնական հանդուրժողականության պայմաններում հարգվում է մարդու խղճի ազատության իրավունքը: Ճիշտ է, հաճախ կրոնն անհանդուրժողականության, կոնֆլիկտների, ագրեսիայի, բռնության դրսևորման պատճառ է դառնում, սակայն ասվածից ամենևին էլ չի բխում, որ կրոնը կարող է վտանգել հանդուրժողականության գոյությունն

[16] Նույն տեղում, էջ 46:
[17] Տե՛ս **Clarke S., Powell R.,Savulescu J**., Religion, Intolerance and conflict, Oxford University Press, Oxford, 2013, էջ 5:

առհասարակ, քանի որ յուրաքանչյուր կրոնի արժեհամակարգում մի շարք սկզբունքների հետ միաժամանակ գոյություն ունի մի դրույթ, որը համբերատարության, մարդասիրության, բարության և խաղաղության կոչ է անում: Ուստի կրոնական հանդուրժողականությունը շատ կարևոր է ժամանակակից հասարակությունների գոյության, միասնականության և անվտանգության ապահովման գործում: Մինչդեռ կրոնական հանդուրժողականության բացակայության պայմաններում կրոնական ուղղությունների, հայացքների, հավատալիքների բազմազանությունն ու տարբերությունը կարող են հասարակության պառակտման պատճառ դառնալ:

Սակայն խնդրահարույց է հատկապես այն հանգամանքը, որ կրոնական անհանդուրժողականությունն ու ծայրահեղականությունը բազմաթիվ պատերազմների և բռնության այլ դրսևորումների պատճառ են դառնում: Բազմաթիվ են կրոնական անհանդուրժողականության դրսևորումները հատկապես քրիստոնյա հանրության, այդ թվում նաև հայերի նկատմամբ: Քրիստոնեական մշակութային արժեքների ոչնչացմանն են նպատակաուղղված Նախիջևանում և Ադրբեջանում պարբերաբար ընթացող վանդալիզմի դրսևորումները, որոնք այդպես էլ չեն արժանանում միջազգային հանրության ուշադրությանը և չեն ենթարկվում որևէ պատժիչ գործողությունների: Խոսքը հայ մշակութային ժառանգության նկատմամբ բռնության դրսևորումների մասին է, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքում հայկական դարավոր մշակութային արժեքների բարբարոսաբար ոչնչացման մասին: Ջուղայում այլադավանների կողմից ոչնչացվեցին 9-ից 16-րդ դարերի հայկական միջնադարյան խաչքարերը, որոնք հայ ժողովրդի մշակութային ինքնության և պատմական ժառանգության առհավատչյաներն էին: Նմանատիպ կրոնական անհանդուրժողականության և վայրագության դեպք տեղի ունեցավ նաև Սիրիայում 2014 թ.-ի սեպտեմբերի 21-ին, երբ իսլամական ծայրահեղական խմբավորման ահաբեկիչների կողմից պայթեցվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված, եղեռնի զոհերի մասունքներն ամփոփող Սիրիայի հյուսիս-արևելքում գտնվող Դեր Զորի հայկական Սրբոց Նահատակաց եկեղեցին:

Կրոնական հանդուրժողականության և առհասարակ հանդուրժողականության խնդիրն առաջին անգամ ծագել է Ռեֆորմացիայի ժամանակաշրջանում: 16-17-րդ

դարերում եվրոպական մի շարք երկրներում՝ Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, Շվեյցարիայում սկսվում են կրոնական արյունահեղ պատերազմներ կաթոլիկների և բողոքականների միջև, որոնք ուղեկցվում են դաժան ռազմական գործողություններով: Կրոնական այս հզոր շարժումը հայտնի է «Ռեֆորմացիա» անվանմամբ, որի կարևոր գաղափարներից մեկը հանդուրժողականության՝ որպես կրոնական կոնֆլիկտների լուծման կարևոր գործոնի ընդունումն է: Ջ. Լոկը առաջիններից էր, որ ձևակերպեց կրոնական հանդուրժողականության դասական տեսությունը: Իր աշխատություններում նա առաջադրել է «ազատություն-օրենք-բանականություն» բանաձևը: Ըստ այս բանաձևի՝ «ազատություն-բանականություն-հանդուրժողականություն» հարաբերակցությունում բանականությունը հնարավոր չէ առանց ազատ մտքի, կրոնական ազատության, առանց այլ կրոնների նկատմամբ հանդուրժողականության դրսևորման: Ջ. Լոկը եկել է այն եզրահանգմանը, որ մտքի, խոսքի, կրոնական համոզմունքների ազատությունը համարվում է սոցիալական այլ ոլորտների ազատության ապահովման գլխավոր երաշխիքներից մեկը: Իր «Ուղերձ կրոնական հանդուրժողականության մասին» աշխատությունում, որն ուղղված էր անգլիական եկեղեցու կղերականների դեմ, Ջ. Լոկը կրոնականության համատեքստում *հանդուրժողականություն* հասկացությունը դիտարկում է որպես հասարակական դաշինքի հաստատման նախապայման, և գտնում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է հստակ տարբերակել պետական և կրոնական հարցերը, և պատշաճ կերպով հստակեցնել եկեղեցու ու պետության միջև գոյություն ունեցող սահմանները: Լոկը պաշտպանում էր պետությունից եկեղեցու հստակ տարանջատման գաղափարը, այդ թվում նաև խղճի ազատության՝ իբրև անհատի անձնական ազատության իրավունքի մասին հիմնադրույթը: Ըստ նրա՝ եթե պետությունը մարդկային հանրույթ է, որի գլխավոր գործառույթը քաղաքացիական բարիքների պաշտպանությունն ու պահպանումն է[18], ապա կրոնական հանրույթի գլխավոր նպատակն Աստծո համատեղ պաշտամունքն է և դրա միջոցով

[18] Տե՛ս **Локк Дж.,** Послание о веротерпимости// Сочинение в 3 т, Т. 3, М., Мысль, 1988, էջ 94:

հավիտենական կյանքի ձեռքբերումը[19]: Ջ. Լոկը ձևակերպում է կրոնական հանդուրժողականության չորս հիմնական դրույթ.

- ելնելով կրոնական հանդուրժողականության հիմնական սկզբունքներից՝ ոչ մի եկեղեցի պարտավոր չէ իր հովանու ներքո պահել նրան, ով համառորեն խախտում և ոտնահարում է տվյալ համայնքի կողմից ընդունված և հաստատված օրենքները, քանի որ եթե որևիցե մեկին թույլատրվի անպատժելիորեն խախտել դրանք, հանրույթը կմահանա: Սակայն չպետք է թույլ տալ, որ վերջինիս վտարումը կամ պատիժն ուղեկցվի վիրավորական խոսքերով կամ բռնի գործողություններով, որոնք այս կամ այն ձևով կարող են ֆիզիկական վնաս հասցնել կամ հենց օրենքը խախտողին, կամ նրա սեփականությանը: Ուժի կիրառման ցանկացած դրսևորման իրավունք պատկանում է միայն կառավարչին և ոչ մի մասնավոր անձի՝ բացառությամբ բոլոր այն դեպքերի, երբ անհրաժեշտություն է լինում պաշտպանվել բռնությունից,

- ոչ մի առանձին անհատ չի կարող ոտնահարել դիմացինի քաղաքացիական իրավունքներն ու վնաս հասցնել վերջինին՝ ելնելով թեկուզ միայն նրանից, որ նա հրաժարվել է կրոնական ծեսերից կամ կրոնից առհասարակ: Սրբորեն պետք է պահպանվեն նման անձի բոլոր քաղաքացիական իրավունքները՝ անկախ այն հանգամանքից, թե վերջինս որևէ առնչություն ունի կրոնի հետ, թե ոչ, քրիստոնյա է, թե հեթանոս, ոչ մի դեպքում չպետք է թույլատրվի որևէ բռնություն և անօրինականություն,

- կրոնական հանդուրժողականություն պետք է ցուցաբերել անգամ նրանց նկատմամբ, ովքեր իրենց եկեղեցական գործառույթներով տարբերվում են մյուսներից՝ լինի դա եպիսկոպոս, քահանա, թե հոգևոր սպասավոր: Կրոնական ոլորտում պետք է բացառել հոգևոր իշխանության և հեղինակության պարզաբանման որևէ հարց: Ինչպիսին էլ լինի այդ իշխանությունը, այն ամեն դեպքում եկեղեցական իշխանություն է և պետք է սահմանափակվի եկեղեցու շրջանակներում և ոչ մի դեպքում չտարածվի քաղաքացիական ոլորտ, քանի որ ինքնին եկեղեցին ամբողջովին առանձնացված է պետությունից: Պետության և կրոնի միջև սահմանները հստակորեն հաստատված են և անխախտելի,

[19] Տե՛ս նույն տեղում, էջ 99:

- կրոնական հանդուրժողականության գործընթացում բավականին մեծ ուժ և դերակատարում ունի կառավարիչը: Միայն կառավարիչն է ի զորու բոլորից պահանջել հետևել և պահպանել եկեղեցու հիմնական կանոններն ու օրենքները, իր ուժով և ազդեցությամբ թույլ չտալ որևէ մեկին խառնվել կրոնական հարցերին[20]:

Ինչպես տեսնում ենք, ըստ Լոկի՝ բոլորի հանդեպ չէ, որ պետք է հանդուրժող լինել: Հանդուրժողականություն պետք է ցուցաբերել միայն նրանց նկատմամբ, ովքեր իրենք էլ հանդուրժող են:

Հանդուրժողականության խնդրին անդրադարձել են նաև Լոկի ժամանակակից փիլիսոփաները՝ Թ. Հոբսը, Ժ. Ժ. Ռուսոն, Ֆ. Վոլտերը, Ի. Կանտը: Մասնավորապես Վոլտերը կրոնական հանդուրժողականության և առհասարակ հանդուրժողականության սկզբունքի կիրառման ջատագովներից էր: Նրան է պատկանում. «Ես համաձայն չեմ Ձեր ասածներին, բայց կյանքս կզոհեմ՝ պաշտպանելու սեփական կարծիքի ազատ արտահայտման Ձեր իրավունքը»,- հայտնի խոսքերը, որտեղ Վոլտերը արտահայտում է հանդուրժողականության բուն էությունը: Իր «Տրակտատ կրոնական հանդուրժողականության մասին» (1763թ.) աշխատությունում Վոլտերը նախապատվություն չի տալիս որևէ կրոնի, այլ փորձում է ցույց տալ, որ բոլոր կրոնական ուղղություններն էլ՝ անկախ իրենց հիմնական սկզբունքներից և արժեքներից, հավասարապես գոյություն ունենալու իրավունք ունեն, բոլոր կրոններն էլ իրենց արժեհամակարգում նախ և առաջ գթասրտություն և մարդասիրություն են ենթադրում: Վոլտերը քննադատում է ոչ թե առանձին կրոններ, այլ կրոնական անհանդուրժողականությունը՝ ցույց տալով կրոնական հանդուրժողականության հրատապությունն ու անհրաժեշտությունը: Կրոնական հանդուրժողականությունը դիտելով որպես խաղաղության հաստատման հիմնական միջոց՝ Վոլտերը գտնում է, որ յուրաքանչյուր պետության իրական ուժը, հարստությունն ու երջանկությունը պայմանավորված է նրանում իշխող ներդաշնակ հասարակական հարաբերություններով: Ուստի կրոնական հանդուրժողականությունն անհրաժեշտություն է երկրի արդյունավետ կառավարման գործում՝ առավել ևս, երբ

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 99-106:

խոսքը վերաբերում է մեծ պետություններին[21]: Այսինքն՝ կրոնական հանդուրժողականությունն անհրաժեշտություն է ոչ միայն մարդկային հարաբերություններում մարդասիրության, բարոյականության դրսևորման համար, այլ նաև պետության կառավարման գործում:

Կրոնական դոգմատիզմին և կրոնական պատերազմներին դեմ էր նաև ֆրանսիացի մտածող Ժ. Ժ. Ռուսոն: Նա առաջիններից էր, որ հանդուրժողականությունը դիտարկում է ոչ միայն կրոնական տեսանկյունից, այլև՝ քաղաքացիական՝ հասարակության ողջ պատմությունը բաժանելով երկու շրջանի՝ բնական և քաղաքացիական: Ըստ նրա բնական վիճակում բոլորն իրավահավասար են, մարդիկ ապրում են ազատ և ներդաշնակ, մինչդեռ քաղաքացիական վիճակում, երբ առաջ է գալիս մասնավոր սեփականության սկզբունքը, բոլորը պատերազմում են բոլորի դեմ, որն ուղեկցվում է անհանդուրժողականությամբ և բռնությամբ: Բռնության և անհանդուրժողականության կանխման նպատակով մարդիկ արդեն կարիք ունեն ստեղծելու քաղաքացիական հասարակություն: Ռուսոն առաջ է քաշում «հասարակական դաշինքի» տեսությունը, որի համաձայն հասարակության անդամների միջև հասարակական դաշինքի հաստատման շնորհիվ մարդկությունը բնական վիճակից անցում է կատարում քաղաքացիական վիճակի: Պետությունն ու քաղաքացիական հասարակությունն առաջանում են ժողովրդի և իշխողների միջև դաշինքի կնքմամբ: Այն դեպքում, երբ իշխանությունը խախտում է «հասարակական դաշինքը», ժողովուրդը կարող է տապալել իշխանությունը: Ժողովուրդն իրավասու է սահմանափակել, փոխել կամ վերանայել գործադիր իշխանությունը, եթե վերջինս թերանում է կատարել իր պարտականությունները: Քաղաքացիական վիճակում մարդը «հարկադրված է» վերագտնել իր ազատությունը, որն ուներ բնական վիճակում: «Հասարակական դաշինքի» արդյունքում մարդը կորցնում է իր բնական ազատությունը և անսահմանափակ իրավունքն այն ամենի նկատմամբ, ինչին վերջինս կարող էր տիրապետել՝ փոխարենը ձեռք բելելով քաղաքացիական ազատություն և սեփականության իրավունք[22]: Պետությունը չպետք է սահմանափակի քաղաքացու

---

[21] Տե՛ս **Вольтер Ф.,** Философские трактаты и диалоги. М., Эксмо, 2005, էջ 138-141:

[22] Տե՛ս **Руссо Ж.-Ж.**, Об общественном договоре или принципы политического права. М., Соцекгиз, 1938, էջ 17:

ազատություններն ու իրավունքները, եթե վերջինիս կյանքը կազմակերպված է օրենքի տառին համապատասխան կանոններով և սկզբունքներով: Ընդ որում, ազատությունն անմիջականորեն ենթադրում է օրենքի առկայություն: Նույնիսկ բնական վիճակում մարդն ազատ է շնորհիվ բնական օրենքի, որով կառավարվում են բոլորը: Ազատ ժողովուրդը ենթարկվում է, բայց չի ծառայում, նրանց կառավարում են, բայց նրանք չունեն տերեր: Այսպիսով, ըստ Ռուսոյի՝ պետության կատարելագործման և քաղաքացիական հասարակության ձևավորման գործում անգնահատելի է հանդուրժողականության դերը:

19-րդ դարում ձևավորվում է հանդուրժողականության օգտապաշտական մոտեցումն անգլիացի փիլիսոփա Ջ. Ս. Միլի կողմից իր «Ազատության մասին» (1859թ.) աշխատությունում: Լինելով ուտիլիտարիստ մտածող՝ նա փորձում է օգտապաշտությունը համադրել հանդուրժողականության հետ՝ հանդուրժողականությունը դիտարկելով որպես համընդհանուր բարիք: Հասարակական ներդաշնակ հարաբերությունների հաստատման համար մարդիկ պետք է առաջնորդվեն ոչ միայն անհատական շահերով և հետաքրքրություններով՝ մտածելով միայն սեփական բարիքի և օգուտի մասին, այլ նաև հաշվի առնեն ուրիշների կարծիքները, շահերն ու պահանջները: Դիտարկելով հանդուրժողականության և ազատության փոխհարաբերության հարցը՝ Ջ. Ս. Միլը գտնում է, որ դրանք ամենևին էլ չեն հակադրվում միմյանց. հանդուրժողականությունն ամենևին էլ ազատության սահմանափակում չէ, ընդհակառակը՝ այն ազատության բաղկացուցիչ և անհրաժեշտ մաս է: Քննադատելով միօրինակությունն ու համընդհանրությունը, որոնք խոչընդոտում են հասարակական առաջընթացին և զարգացմանը, նա գտնում է, որ ազատությունն ու հանդուրժողականությունը այն հիմնարար արժեքներն են, որոնք ապահովում են բազմազանության և տարբերության գոյությունը, որոնք էլ իրենց հերթին զարգացման և առաջընթացի կարևորագույն նախապայմաններն են: Միայն անհատական ազատության դեպքում մարդիկ կարող են կատարելագործվել և հասնել զարգացման: Կարելի է ասել՝ սա անհատական ազատության անհրաժեշտության գլխավոր փաստարկն է[23]: Փաստորեն Ջ. Ս. Միլն

[23] Տե՛ս **Mill J. S.**, On Liberty, Batoche Books, Kitchener, 2001, էջ 59:

առաջիններից էր, որ հանդուրժողականությունը դիտարկում է որպես հասարակական հարաբերությունների կառուցվածքաստեղծ և համակարգաստեղծ գործոն:

20-րդ դարում հանդուրժողականության մասին պատկերացումները էապես փոխվում են: Հանդուրժողականության իմաստային դաշտն էլ ավելի է ընդլայնվում, ինչն առավել ակնհայտ է դառնում հատկապես նախորդ դարավերջին: 20-րդ դարի 90-ական թվականներին *հանդուրժողականություն* հասկացությունը սկսում է կիրառվել որպես քաղաքական խնդիրների, կրոնական և էթնիկ կոնֆլիկտների խաղաղ լուծման ճանապարհ: Վերջին տասնամյակներում այս հասկացությունը հաստատուն կերպով մուտք է գործում գիտական ոլորտ, և դառնում է տարբեր գիտակարգերի ուսումնասիրության առարկա, ինչը պայմանավորված է հանդուրժողականության հակասական բնույթով: Հանդուրժողականությունը երկու այլընտրանքային ուղղությունների շարժիչ գործոն է՝ մի կողմից խաղաղության և համաձայնության, ներառման և արդիականացման ձեռքբերման, մյուս կողմից՝ երբեմն նպաստում է մասնատող ու պառակտիչ գործընթացների ինտենսիվացմանը[24]: Եվ եթե նախկինում հանդուրժողականության բովանդակությունը համընկնում էր միայն կրոնական հանդուրժողականության հետ (բոլոր կրոններում հանդուրժողականությունը, հնազանդությունը համարվում են անհրաժեշտ և կարևոր առաքինություններ) և դիտվում էր որպես խաղաղության հաստատման միջոց հատկապես կրոնական կոնֆլիկտների և կրոնական պատերազմների կարգավորման ընթացքում, ապա այժմ հանդուրժողականությունը դիտվում է նաև որպես համաշխարհայնացման պայմաններում միմյանց հետ մրցակցող մշակույթների միջև քաղաքակիրթ փոխզիջման միջոց, պատրաստակամություն ընդունելու և հասկանալու «Ուրիշներին»: Հանդուրժողականությունը՝ որպես քաղաքակրթական փոխըմբռնման կարգավորիչ գործոն, տարբերությունների պահպանման աշխատակարգ է, որի կիրառման դեպքում հիմնական շեշտը դրվում է մշակութային բազմազանության, ազատական-ժողովրդավարական արժեքների գիտակցման և ընդունման, մարդու իրավունքների և ազատությունների ճանաչման, այլընտրանքների և տարբերությունների խրախուսման, այլոց նկատմամբ հարգալից վերաբերմունքի վրա: Այս համատեքստում կանադացի

[24] Տե՛ս **Артемьева В. А., Данилова М. В.,** Анализ понятия «толерантность» в современной научной литературе/ В. А. Артемьева, М. В. Данилова, Казань, Молодой ученый, № 2, 2015, էջ 471:

քաղաքագետ Ջ. Գրեյը գտնում է, որ ավանդականության շրջանում հանդուրժողականությունը հիմնված էր այն համոզմունքի վրա, որ չնայած հանդուրժողականության «օբյեկտի» ոչ ընդունված լինելուն՝ այն իրավունք ունի գոյություն ունենալ, և մարդիկ պետք է հանդուրժողական լինեն վերջինիս նկատմամբ[25]: Փաստորեն ժամանակակից աշխարհում արդեն հանդուրժողականությունը դիտվում է ոչ միայն որպես հասարակության համար կառուցվածքաստեղծ գործառույթ կատարող կարևոր գործոն, այլ նաև որպես բազմազանության հաստատման և պահպանման կարևորագույն երաշխիք: Հանդուրժողականության ժամանակակից ընկալումն արդեն պայմանավորված է ոչ միայն կրոնական, քաղաքական, այլ նաև մշակութային և սոցիալական գործոններով:

Եվ այսպես՝ հանդուրժողականությունը որպես սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ նորմ, առաջին անգամ համընդգրկուն ուսումնասիրության առարկա է դարձել կրոնական հարաբերությունների կարգավորման համատեքստում: Նոր շրջանի փիլիսոփաների կողմից իսկ սկսած հանդուրժողականությունը, դիտվելով որպես կրոնական հարաբերությունների կարգավորման կարևոր նախապայման, քննարկվում է նաև քաղաքական հարաբերությունների կարգավորման համատեքստում: Պատահական չէ, որ Ռուսոն, Վոլտերը և այլք որպես հասարակության քաղաքական կյանքի կարգավորման կարևորագույն նախապայման առաջ էին քաշում հանդուրժողականության սկզբունքը, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր հասարակության քաղաքական կյանքում հասարակության բոլոր անդամների ներառումն ու մասնակցությունը: 20-րդ դարից սկսած հանդուրժողականությունը դիտվում է նաև որպես ընդհանրապես սոցիոմշակութային հարաբերությունների հաստատման, խաղաղության և բազմազանության ապահովման անհրաժեշտ գործոն: Իսկ ժամանակակից աշխարհին բնորոշ տեղեկատվական տեխնոլոգիաների, քաղաքական, տնտեսական անկառավարելի ցնցումներով պայմանավորված միգրացիոն հոսքերի, մշակութային երկխոսության սերտացման և մի շարք այլ սոցիոմշակութային գործոնների պատճառով հանդուրժողականության սկզբունքը ձեռք է բերում առանձնակի կարևորություն: Արդի քաղաքակրթությունում

[25] Տե՛ս **Грей Дж.,** Поминки по Просвещению: Политика и культура на закате современности, М., Праксис, 2003, էջ 45-47:

հանդուրժողականության կայացման խնդիրը կարևորվում է առաջին հերթին գլխավորապես ժամանակակից աշխարհին բնորոշ քաղաքական կյանքի կազմակերպման ազատական-ժողովրդավարական մշակույթի, բազմամաշկութային հասարակության նախագծի, բաց հասարակության նախագծի, մարդու իրավունքների հաստատման գործընթացներում ի հայտ եկող խնդիրների լուծման և կարգավորման համատեքստում:

1.2. Հանդուրժողականությունը որպես սոցիոմշակութային տարածության կառուցարկման եղանակ

Հանդուրժողականությունը հասարակության խաղաղ համակեցության ապահովման կարևոր նորմ և գրավական է: Այն ոչ միայն սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ նորմ է, այլև բարոյական իդեալ ինչպես առանձին անհատների, այնպես էլ հասարակության համար: Մշակութային բազմազանության և երկխոսության, բազմակարծության գաղափարներով առաջնորդվող արդի աշխարհում հանդուրժողականության դերն էլ ավելի է կարևորվում: Ժամանակակից բազմաբևեռ աշխարհում հանդուրժողականությունը սոցիալական անվտանգության, հասարակության գոյատևման և զարգացման կարևորագույն պայման է, քանի որ սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում դրսևորվող տարբերություններն ու բազմազանությունները դառնում են արդի հասարակության հիմնական բնութագրիչները, ավանդական վարքի ձևերը կորցնում են իրենց բնորոշ նախկին կայունությունը՝ դառնալով բարդ և անորոշ: Հասարակության տարբեր խմբերի, շերտերի, անդամների միջև գոյություն ունեցող սահմանները կորցնում են իրենց որոշակիությունը: Սոցիոմշակութային նմանատիպ փոխակերպումների պայմաններում փոխվում են նաև հասարակության անդամների սոցիալական դերերը, որոնց իրագործումը դառնում է բազմազան և տարաբնույթ: Արդի աշխարհում մարդիկ կարող են միաժամանակ համատեղել այնպիսի սոցիալական դերերի կատարումը, ինչը նախկինում անիրագործելի էր համարվում: Վարքի դրսևորման ձևերը դառնում են ոչ միայն բազմաբնույթ, այլև խիստ անհատականացված, ինչն ուղեկցվում է սոցիոմշակութային կառուցվածքային փոխակերպումներով: Եվ հաճախ սոցիոմշակութային նման փոփոխությունները խիստ բացասական արձագանք են գտնում հասարակության անդամների կողմից: Սոցիոմշակութային արդի փոխակերպումների պայմաններում հանդուրժողականությունը դառնում է ոչ միայն հասարակության կառուցարկման և սոցիալական կյանքում հասարակության

անդամների ներառման արդյունավետ միջոց, այլև հասարակության մեջ անհատի ապահով գոյատևման անհրաժեշտ պայման[26]:

Վերջին տասնամյակներում նկատվող ազգամիջյան բախումների, քաղաքական կոնֆլիկտների, էթնիկ հակամարտությունների և անհանդուրժողական վարքի այլ դրսևորումների պայմաններում աշխարհը ձեռք է բերել անկայունության, անկանխատեսելիության և անորոշության որոշակի հատկանիշներ: Էթնիկ անհանդուրժողականությունը վերածվել է հակադրման յուրօրինակ միջոցի ընդդեմ մշակութային ագրեսիայի, համահարթեցման և ազգային ինքնության կորստի: Սոցիալական և քաղաքական տեսանկյուններից բարդ և ռիսկային ժամանակակից աշխարհում հանդուրժողականությունը հաճախ ընկալվում է որպես տվյալ հանրույթի սոցիոմշակութային անվտանգությունն ապահովող երաշխիք և կառուցվածքաստեղծ գործոն: Բանն այն է, որ ցանկացած հանրույթի սոցիոմշակութային կազմակերպման հիմքում ընկած է սոցիալական ամբողջի հետ նույնականանալու համընդհանուր գիտակցությունը: Մարդիկ միավորվում են մեկ միասնական հանրույթում նրանց հետ, ովքեր կիսում են իրենց համոզմունքները, խոսում են միևնույն լեզվով կամ ունեն միևնույն մշակույթը, նրանց հետ, ովքեր պատկանում են միևնույն էթնիկական կամ սոցիալական խմբի: Մարդկային ողջ պատմության ընթացքում միասնական լեզուն, միևնույն էթնիկական հանրույթին պատկանելությունը, պատմական անցյալի, պատմական հիշողության ընդհանրությունը, պատմական ժառանգությունը ծառայել են որպես համայնքի, ազգի, հանրույթի ձևավորման և պահպանման հիմք: Էթնիկական ցանկացած հանրույթ առաջին հերթին մարդկային կյանքի բնականոն զարգացման արդյունք է, որը հենվում է մարդածին հատկությունների վրա և որոշ իմաստով ինքնաբավ է: Սակայն, «չանտեսելով էթնոսի բնական-ծագումնաբանական գործոնների բնորոշ առանձնահատկությունները՝ հարկ է նկատել, որ էթնոսը նաև սոցիոմշակութային ընդհանրությունների սոցիալական կազմակերպման ձև է և բնականորեն տրված որակների հետ մեկտեղ ունի նաև պատմականորեն ձևավորված

[26] Տե՛ս **Клименко Е. В.,** Толерантность и различие в социокультурном пространстве современной России, Вестник Санкт-Петербурского университета культуры и искусств, № 1, СПб., 2011, էջ 65:

և մշտապես վերարտադրվող սոցիոմշակութային տիպական որակներ»[27]: Այդ տիպական սոցիոմշակութային որակները որդեգրվում են հասարակության տվյալ սերնդի ներկայացուցիչների կողմից և ժառանգվում են հաջորդներին: Այս իմաստով ամեն էթնիկական սերունդ նախորդ սերունդների սոցիոմշակութային արժեքների և ավանդույթների կրողն է, ինչով տարբերվում է էթնիկ այլ միավորներից: Սոցիոմշակութային արժեքների և ավանդույթների տարբերության հետևանքով էթնիկ տարբեր միավորների միջև շփման ընթացքում առաջանում են կոնֆլիկտային իրավիճակներ, երբ մի էթնոսի ներկայացուցիչը չի կրում և հրաժարվում է ընդունել մեկ այլ էթնոսի ներկայացուցչի արժեքներն ու աշխարհայացքը, ինչի հետևանքով այդ կոնֆլիկտները հաճախ վերաճում են հակամարտությունների:

Էթնիկ հակամարտությունները հաճախ նպաստում են միգրացիոն շարժման ակտիվացմանը, որն իր հերթին ուղեկցվում է էթնիկ բախումներով և անհանդուրժողականության դրսևորմամբ, իսկ սա արդեն ինքնըստինքյան դառնում է սոցիոմշակութային տարածության ապակառուցողական գործոն: Այս իմաստով բնակչության միգրացիան ժամանակակից հասարակության առավել բնորոշ հատկանիշներից մեկն է: Հանդուրժողականության դրսևորումը հատկապես կարևոր է ներգաղթյալների համար, ովքեր հեռանալով սեփական սոցիոմշակութային տարածությունից, մշակույթից՝ հարկադրված են հարմարվել նոր սոցիալական համակարգի և մշակույթի առանձնահատկություններին: Որպես կանոն, ներգաղթողներն իրենց հետ նոր սոցիալական համակարգ են բերում այնպիսի մշակութային արժեքներ, նորմեր, սկզբունքներ, որոնք հակասության մեջ են հայտնվում տվյալ սոցիալական համակարգի հիմնական արժեքների և սովորությունների հետ: Դրանք նպաստում են տվյալ համակարգի ապակառուցողական և կազմաքանդիչ գործոնների ի հայտ գալուն՝ հասարակության մեջ ծնելով անհանդուրժողականության մթնոլորտ: Կարծրատիպերը հասարակությանը բաժանում են փակ խմբերի՝ առաջացնելով նաև էթնիկ բախումներ: Ժամանակակից հասարակությունը, որը բաժանված է ներքին սահմաններով, չի կարող մնալ կայուն, հանդուրժող և ժողովրդավարական, քանի դեռ չունի խաղաղ զարգացման իրական

[27] Տե՛ս **Հարությունյան Է.Ա.,** Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր., Մակմիլան-Արմենիա, 2004,էջ 7:

հնարավորություններ: Այս իմաստով ժամանակակից հասարակություններին բնորոշ միգրացիոն հոսքերն ուղեկցվում են սոցիալական, քաղաքական և սոցիոմշակութային մի շարք խնդիրներով: Բանն այն է, որ մշակութային և էթնիկ բազմազանությունը հանրային կյանքը դարձնում է ճգնաժամային, իսկ ազգամիջյան հարաբերությունները՝ լարված: Օտար մշակույթի մուտքը նոր սոցիալական համակարգ անխուսափելիորեն ենթադրում է դիմադրություն: «Յուրայիններն» ու «Օտարները» միավորվում և ձևավորում են մի բարդ հանգույց, որն առաջին հայացքից ստեղծում է մի շարք անլուծելի հակասություններ՝ տարբեր մշակույթների համագործակցության անհրաժեշտություն, էթնիկ և ազգային ինքնության պահպանում, մշակութային և ընդհանրապես սոցիոմշակութային շեղումների անխուսափելիություն, էթնիկ անվտանգության ձգտում, ազգամիջյան շահերի հավասարակշռության պահպանում: Այս խնդիրները նպաստում են ազգամիջյան անհանդուրժողականության առաջացմանը, որն ուղեկցվում է կոնֆլիկտներով, ագրեսիայով, բռնությամբ և խոչընդոտում հասարակական կարգի ձևավորման գործընթացին: Բնական է՝ հանդուրժողականություն ցուցաբերելու անհրաժեշտություն է առաջանում նաև տեղի բնակիչների մոտ, ովքեր, անկախ այն հանգամանքից, ցանկանում են, թե ոչ, հարկադրված են հարաբերվել և հաղորդակցվել ներգաղթյալների հետ: Անհանդուրժողականությունը հենվում է այն համոզմունքի վրա, որ մի սոցիալական խմբի կենսակերպը, արժեհամակարգը գերակա են այլոց նկատմամբ[28]: Այն դեպքում, երբ ծայրահեղ վտանգավոր է անհանդուրժողականության դրսևորումը, հանդուրժողականությունը կարող է դիտվել որպես խոնարհություն, հնազանդություն, անգամ բռնություն սեփական «ես»-ի նկատմամբ: Նման դեպքերում հանդուրժողականությունն ունի կրավորական, նույնիսկ բացասական երանգավորում: Սակայն, եթե անհատական մակարդակում հանդուրժողականության նման դրսևորումը կարող է պակաս ապակառուցողական հետևանքներ ունենալ սոցիալական կարգի պահպանման տեսանկյունից, ապա էթնիկ հակամարտությունների պայմաններում այն կարող է սոցիոմշակութային իրական վտանգների առաջացման պատճառ դառնալ:

[28] Տե՛ս **Солдатова Г. У., Шайгерова Л. А., Шарова О. Д.,** Тренинг “Учимся толерантности” // в книге На пути к толерантному сознанию, М., Смысл, 2000, էջ 183:

Բանն այն է, որ էթնիկ հակամարտությունների և լարվածությունների հաղթահարումն անմիջականորեն պայմանավորված է հասարակական տարբեր կազմակերպությունների միջև հանդուրժողական գիտակցության ձևավորմամբ և զարգացմամբ: Հանդուրժողականությունը դառնում է միջանձնային և միջխմբային հարաբերությունների կայունացման անհրաժեշտ պայման՝ ապահովելով վերջինիս կառուցվածքային ամբողջականությունը:

Այս համատեքստում սոցիոմշակութային իրականության կառուցարկման հետաքրքիր սխեմա է առաջադրվել սոցիոլոգներ Պ. Բերգերի և Տ. Լուկմանի կողմից: Նրանք սոցիալական կառուցարկման գործընթացը բնութագրում են չորս հիմնարար հասկացություններով: Էթնիկ ինքնության սոցիոմշակութային կառուցարկման առաջին գործընթացը տիպավորումն է: Էթնիկ ինքնության սոցիոմշակութային կառուցարկման գործընթացը միշտ չէ, որ ռեֆլեքսիայի արդյունք է և անպայմանորեն ճանաչելի է. այն առավել հաճախ ընկալվում է որպես նախօրոք տրված սոցիալական գործընթաց: Հասարակությունները (էթնոսները, ազգերը և այլն) ունեն որոշակի պատմություն, և մարդը, սոցիալականացվելով, որդեգրում է այդ պատմությունը՝ դառնալով այդ պատմության, նույնն է թե տվյալ սոցիումի ինքնության կրողը[29]: Սակայն տիպավորումն ինքնուրույն չի կարող առաջանալ, այլ այն իրականացվում է էթնիկ ինքնության սոցիոմշակութային կառուցարկաման երկրորդ մեխանիզմի՝ հաբիտուլիզացման միջոցով: Մարդկային յուրաքանչյուր գործողություն ենթարկվում է հաբիտուլիզացման: Հաճախ կրկնվող մարդկային յուրաքանչյուր գործողություն դառնում է վարքի մոդել, սովորույթ: Ըստ հաբիտուլիզացման սկզբունքի՝ վերոնշյալ գործողություններն ապագայում ևս կարող են նույն մոդելով և նույն պրակտիկ ջանքերով իրականացվել[30]: Էթնիկ ինքնության սոցիոմշակութային կառուցարկաման երրորդ գործընթացն ինստիտուցիոնալացումն է: Երրորդ անձի ի հայտ գալը «Ա»-ի և «Բ»-ի միջև փոխում է նրանց միջև գոյություն ունեցող սոցիալական փոխազդեցության ձևը և կշարունակի փոխել այնքան ժամանակ, քանի դեռ նոր անհատներ կհայտնվեն: Այստեղ տիպավորումը և հաբիտուլիզացիան դառնում են պատմականորեն ձևավորված

---

[29] Տե՛ս **Бергер П., Лукман Т.,** Социальное конструирование реальности. Трактат по социологии знания, М., Медиум, 1995, էջ 281-283:

[30] Տե՛ս նույն տեղը, էջ 89-90:

ինստիտուտներ: Այդ ինստիտուտներն արդեն ընկալվում են որպես սեփական իրականություն ունեցող օբյեկտներ, այնպիսի իրականություն, որին անհատը բախվում է որպես արտաքին և հարկադրված փաստ[31]: Էթնիկ ինքնության սոցիոմշակութային կառուցարկման վերջին աշխատակարգը լեգիտիմացումն է, որի գլխավոր գործառույթն ինստիտուցիոնալացման սահմանած կարգի օրինականացումն է: Ինստիտուցիոնալացվող աշխարհը կարիք ունի լեգիտիմացման: Պ. Բերգերը և Տ. Լուկմանը գտնում են, որ լեգիտիմացումն ինստիտուցիոնալ աշխարհը բացատրելու և արդարացնելու միջոց է. լեգիտիմացումն արդարացնում է ինստիտուցիոնալ կարգը՝ վերջինիս նորմատիվային բնույթը դարձնելով պրակտիկ հրամայական[32]:

Էթնիկ ինքնության սոցիոմշակութային կառուցարկման տիպավորման փուլին անդրադարձել է նաև Շյուցը: Արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկումը պայմանավորված է ոչ թե ընթացող իրականության ապրումներով, այլ պատմական անցյալով: Նման տարածության կառուցարկումը հիմնվում է սեփական փորձի և անցյալի կուտակած փորձի վրա, որի արդյունքում տեղի է ունենում նոր փորձի տիպավորում և կանոնակարգում[33]: Այն ենթադրում է անցյալի վերապրում: Սոցիալական իրականության նորովի կառուցարկումը որոշարկվում է անցյալի փորձով:

Սոցիոմշակութային տարածության կառուցարկման խնդրի վերաբերյալ մասնագիտական գրականությունում չկան ընդհանրական մոտեցումներ: «Սոցիոմշակութային տարածություն» եզրույթի սահմանման համար հարկավոր է նախ տարբերակել «սոցիալական տարածություն» և «մշակութային տարածություն» հասկացությունները: Ըստ ֆրանսիացի հայտնի սոցիոլոգ և փիլիսոփա Պ. Բուրդյեի՝ սոցիալական տարածությունը ոչ թե լոկ ֆիզիկական տարածություն է, այլ այն փորձում է լիարժեքորեն իրացվել ֆիզիկական տարածությունում: Նա նաև նշում է, որ սոցիալական տարածությունը վերացական տարածություն է, որը բաղկացած է առանձին ենթատարածություններից, դաշտերից կամ ոլորտներից (տնտեսական, քաղաքական, ինտելեկտուալ և այլն), որոնց կառուցվածքն էլ իր հերթին ձևավորված է կապիտալի առանձին տեսակների անհավասարաչափ բաշխվածության շնորհիվ,

[31] Տե՛ս նույն տեղում, էջ 97-98:
[32] Տե՛ս նույն տեղում, էջ 153:
[33] Տե՛ս **Шютц А.,** Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии, М., Институт фонда «Общественное мнение», 2003, էջ 155-156:

որոնց միջոցով և հանուն որոնց հասարակության անդամները մրցակցում են միմյանց հետ[34]: Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ սոցիալական տարածությունը վերացական կառուցվածք է, որը ձգտում է իրացվել ֆիզիկական տարածությունում, բազմաշերտ է (այսինքն՝ բաղկացած է տարբեր դաշտերից, ոլորտներից), ունի սահմաններ, որոնց միջև սոցիալական խմբերը կամ անհատները գտնվում են որոշակի փոխհարաբերությունների և փոխազդեցության մեջ: Ինչ վերաբերում է մշակութային տարածության սահմանմանը, ապա նախ հարկ է նկատել, որ մշակութային տարածությունն ինքնատիպ աշխատակարգ է, որի միջոցով տեղի է ունենում բնական միջավայրի մշակութայնացումը: Այս համատեքստում ռուս մշակութաբան Յու. Լոտմանը մշակութային տարածությունը նույնացնում է ընդհանրապես մարդու գործունեական տարածության հետ՝ նշելով, որ մարդու՝ որպես մշակութային էակի յուրօրինակությունը պահանջում է բնական աշխարհի հետ հակադրություն[35]: Այս համատեքստում պրոֆեսոր Է.Ա.Հարությունյանը իրավացիորեն նկատում է, որ «սոցիոմշակույթը, իր դրսևորման կոնկրետ ձևերով, կանոնների ավանդույթների որոշումների բարդ կազմավորում է, որի օգնությամբ կարգավորվում են սոցիալական սուբյեկտների տնտեսական, իրավական, սոցիալական, բարոյական, տեղեկատվական, քաղաքական, գեղագիտական հարաբերությունները, որն էլ ընդհանուր առմամբ ապահովում է մարդու սոցիալականությունը»[36]: Ռուս մեկ այլ հայտնի սոցիոլոգ և փիլիսոփա Պ. Սորոկինը «հասարակություն» և «մշակույթ» եզրույթները հաճախ կիրառում է որպես միմյանց փոխլրացնող եզրույթներ, իսկ սոցիալականն ու մշակութայինը ընդհանրացնում է մեկ եզրույթի շրջանակներում՝ սոցիոմշակութային: Սորոկինը սոցիոմշակութային տարածությունը սահմանում է որպես այնպիսի երևույթ, որը բաղկացած է մի շարք տարրերից (նշանակություններ, արժեքներ և նորմեր, հաղորդիչներ և սոցիալական գործակալներ) և «չափումներից», և

---

[34] Տե՛ս **Бурдье П.**, Социология социального пространства, М.-СПб., Институт экспериментальной социологии, Алетейя, 2007, էջ 53-54:

[35] Տե՛ս **Лотман Ю.М.**, Семиосфера: культура и взрыв. Внутри мыслящих миров. Статьи. Исследования. Заметки, СПб., “Исскуство-СПб”, 2000, էջ 20-25:

[36] Տե՛ս **Հարությունյան Է.Ա.,** Վարքի սոցիոմշակութային շարժառիթների մարդաբանական բնութագիրը, Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ, Պրակ 5, Եր., Լիմուշ, 2008, էջ 13:

ունի սոցիալական որոշակի աստիճանակարգություն[37]: Եվ այսպես՝ սոցիոմշակութային տարածությունը զուտ սոցիալական և մշակութային տարածությունների հանրագումարը չէ, այլ ինքնատիպ վերացական և բազմաչափ կառույց է, որն ընդգրկում է և՛ մշակութային, և՛ սոցիալական տարրեր ու գործոններ: Սոցիոմշակութային տարածությունը սահմանագծվում է ինչպես մշակութային բաղադրիչներով (արժեքներ, նորմեր, նշանակություններ և այլն), այնպես էլ՝ սոցիալական (բազմաբնույթ սոցիալական խմբերի և անհատների միջև փոխազդեցություն): Սոցիոմշակութային տարածության նման սահմանման համատեքստում հանդուրժողականությունն ինչպես սոցիալական բաղադրիչ է, որն ապահովում է սոցիալական խմբերի և անհատների միջև համագործակցության, փոխհարաբերության հաստատումը, խաղաղությունն ու իրավահավասարությունը, այնպես էլ՝ մշակութային բաղադրիչ, որն արդեն մշակութային արժեք և նորմ է, տվյալ հանրույթի կամ անհատի մշակութային արժեհամակարգի մաս:

Սոցիոմշակութային տարածության կառուցարկման համատեքստում հանդուրժողականության խնդրի ուսումնասիրությունն էապես պայմանավորված է սոցիալական հաղորդակցմամբ, որի ձևավորումը հանդուրժողականության ձեռքբերման անհրաժեշտ քայլ է: Հաղորդակցման դաշտի ստեղծումը հասարակության բոլոր անդամներին այդ դաշտ ազատ մուտք գործելու և նրանց միջև գոյություն ունեցող մշակութային, կրոնական, ռասայական և մի շարք այլ տարբերությունների մասին ազատ երկխոսելու հնարավորություն է ընձեռնում՝ հաղթահարելով հասարակության անդամների միջև գոյություն ունեցող պատնեշները. պայման, որի առկայությունն անհրաժեշտ է հանդուրժող հասարակություն ձևավորելու գործընթացում: Արդի հասարակության անդամների միջև սոցիալական հաղորդակցման արդյունավետ իրականացման խնդիրը ձեռք է բերել տեսական և գործնական մեծ հնչեղություն: Սոցիալական հաղորդակցումը՝ որպես սոցիալական փոխազդեցության երևույթ, համարվում է մշակույթի և հասարակության կառուցարկման գլխավոր մեխանիզմ: Սոցիալական հաղորդակցմամբ է պայմանավորված սոցիալական բոլոր կապերի և հարաբերությունների բնույթը. այն ոչ միայն միջնորդ է սոցիալական սուբյեկտների

[37] Տե՛ս **Сорокин П.А.**, Человек. Цивилизация. Общество, М., Политиздат, 1992, էջ 175-191:

փոխազդեցությունների միջև, այլև այդ սուբյեկտների գոյության հիմք, այն ոչ միայն արդի սոցիոմշակութային տարածության ընկալման միջոց է, այլ նաև վերջինիս կառուցարկման մեխանիզմ: Սոցիալական հաղորդակցման աշխատակարգի շնորհիվ մարդը ստեղծում է սոցիոմշակութային կարգ և կազմակերպվածություն, ինչի շնորհիվ միջմշակութային հաղորդակցումը դառնում է սոցիալական հաղորդակցման անհրաժեշտ մաս:

Սոցիալական հաղորդակցման հիմնական հասկացությունները (հակամարտություն, կարծրատիպեր, հանդուրժողականություն) նոր բովանդակություն են ձեռքբերում՝ պայմանավորված արդի աշխարհի սոցիոմշակութային մի շարք առանձնահատկություններով: Հարց է առաջանում. կարո՞ղ են արդյոք հանդուրժողական հարաբերությունները դառնալ սոցիալական հաղորդակցման հիմք արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման գործընթացում: Էթնիկական, մշակութային, կրոնական բազմազանություններն ու տարբերությունները, որոնցով պայմանավորված է հասարակության զարգացման ուղղությունն ու դինամիկան, լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծում և դժվարացնում սոցիալական հաղորդակցման իրականացումը: Նման իրավիճակում հանդուրժողականության սկզբունքի կիրառումն ապահովում է սոցիալական հաղորդակցում իրականացնելու հնարավորություն սոցիալական փոխազդեցության բոլոր ոլորտներում: Սոցիալական հաղորդակցումը՝ որպես սոցիալական փոխազդեցության երևույթ, սոցիոմշակութային տարածության կառուցարկման գլխավոր մեխանիզմ է: Բազմամշակութայնության և բաց հասարակության արժեքներով առաջնորդվող ժամանակակից աշխարհում սոցիալական հաղորդակցման իրականացումը ստանում է կենսական նշանակություն, իսկ սոցիալական հաղորդակցման և երկխոսության հաստատումը, ինչպես արդեն նշվեց, հնարավոր է միայն հանդուրժողականության՝ որպես սոցիոմշակութային արժեքի որդեգրման դեպքում:

Ասվածից ակնհայտ է դառնում, որ հանդուրժողականությունը կարող է խաղալ տարբեր դերեր: Ոմանց համար այն տարբերությունների հաստատում է, անխուսափելի առաքինություն, որի դեպքում հանդուրժող հասարակությունը դառնում է նպատակ: Մյուսների համար հանդուրժողականությունը կամ հարկադրանք է, կամ էլ գոյատևման

ժամանակավոր միջոց: Սոցիալական հանդուրժողականությունն ի վերջո վերածվում է շահերի և հետաքրքրությունների բախման և ներդաշնակության հավասարակշռման պայմանի: Հավասարակշռության նման ապահովումը պայմանավորված է հասարակության մեջ առկա վստահության և փոխզիջման գնալու պատրաստակամության աստիճանով, սեփական նպատակներին հասնելու կարողությամբ՝ հաշվի առնելով այլոց կարծիքները, համոզմունքները, հավատալիքները, սովորությունները և այլն: Հանդուրժողականությունը անձնական և հասարակական շահերի բախման ենթատեքստում կոնֆլիկտներից խուսափելու միջոց է: Որպես սոցիալական խնդիր՝ հանդուրժողականությունը ենթադրում է «մենքի» և «ուրիշի» միջև փոխըմբռնում և համաձայնեցում: Սոցիալական համակարգի ներքին գործառնական տրամաբանությունից ելնելով՝ հասարակության անդամները հաճախ հայտնվում են կոնֆլիկտային վիճակներում, որի հաղթահարման համար անհրաժեշտ է լինում մշակել հասարակության խաղաղ համակեցությունն ապահովող որոշակի աշխատակարգեր: Սակայն միշտ էլ առկա է կարծիքների բախում, ինչը, որպես կանոն, ուղեկցվում է մի շարք կոնֆլիկտային իրավիճակներով: Կոնֆլիկտները հասարակական կյանքի շարժիչ ուժեր են դառնում միայն այն դեպքում, երբ կոնֆլիկտող կողմերից որևէ մեկի մոտ չկա սեփական կամքի ու կարծիքի պարտադրանք և անհանդուրժողականության դրսևորում այլախոհների նկատմամբ: Շատ կարևոր և արժեքավոր է համաձայնության գալու ընդունակությունը, բայց ոչ երբեք հարկադրանքի ճանապարհով: Հարկադրանքի ճանապարհով համաձայնության ձեռքբերումն ամենևին էլ չի վերացնում կոնֆլիկտային վիճակ ծնող նախապայմանները, այլ ժամանակավորապես քողարկում կամ հետաձգում է կոնֆլիկտը: Իսկ հանդուրժողականության սկզբունքի գերակայության դեպքում կոնֆլիկտները դառնում են հաղթահարելի, քանզի հանդուրժողականությունը փոխադարձ հարգանք է. հանդուրժողականություն ցուցաբերող կողմերը հարգում են միմյանց որպես ինքնավար անհատներ, հասարակության իրավահավասար անդամներ: Հանդուրժողականությունն արժեքների ընդունում է. այն ոչ միայն դրսևորվում է տարբեր մշակույթների և կրոնական համայնքների հանդեպ հարգանքի ձևով, այլև ցուցաբերում է վերջիններիս համոզմունքների և պրակտիկայի նկատմամբ

որոշակի գնահատական և վերաբերմունք: Հանդուրժողականությունը բարոյական հատկություն է, որին բնորոշ է համբերատար վերաբերմունքն այլ մարդկանց հետաքրքրությունների, համոզմունքների, հավատալիքների, սովորույթների նկատմամբ: Հանդուրժողականությունը քաղաքացիական հասարակության և ժամանակակից քաղաքակրթությունների ձևավորման, գոյատևման և զարգացման հիմնարար ազատական-ժողովրդավարական արժեք է: Որպես սոցիալական հարաբերությունների հատկություն՝ այն տարբեր մշակույթների և քաղաքակրթությունների միջև փոխազդեցության, մշակույթների միջև երկխոսության իրականացման կարևոր միջոց է: Նման իրավիճակում հասարակության մեջ հանդուրժողականության գիտակցության ձևավորումը և զարգացումը դառնում են հրատապ ու արդիական: Հանդուրժողականությունը կառուցողական նշանակություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ ի վիճակի է ապահովել միասնություն և փոխըմբռնում՝ առաջնայնությունը միշտ տալով մարդու իրավունքներին, ազատությանը և անվտանգությանը: Այսպիսով, հանդուրժողական գիտակցությունը միջմշակութային հանդուրժողականության և արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման կարևորագույն նախապայման է, իսկ հանդուրժողական գիտակցության ձևավորումը և զարգացումն այն անհրաժեշտ նախապայմանը, առանց որի անհնար է պատկերացնել ժամանակակից հասարակության բնականոն կյանքը:

1.3. Հանդուրժողականությունը որպես վստահության և երկխոսության հաստատման պայման

Ժամանակակից աշխարհում անհանդուրժողականության և անվստահության արմատական դրսևորումները դարձել են մարդկային համակեցությանը սպառնացող լուրջ մարտահրավերներ: Առավել ևս, որ ապակառուցողական նմանատիպ գործընթացները, որպես կանոն, ուղեկցվում են զանգվածային բռնություններով, ահաբեկչություններով, պատերազմական գործողություններով, քաղաքական, ռազմական, սոցիալական, կրոնական անկառավարելի գործընթացներով, արտագաղթով և նմանատիպ այլ աղետներով: Չմանրամասնելով արդի քաղաքակրթական և մարդաբանական ճգնաժամի խորքային պատճառները՝ նշենք միայն, որ հիշյալ մարտահրավերների համատեքստում հանդուրժողականության, վստահության, երկխոսության հաստատման հիմնախնդիրները ձեռք են բերել սկզբունքորեն տեսական և գործնական մեծ հնչեղություն: Հասարակական կյանքում հանդուրժողականության և վստահության սոցիոմշակութային ու բարոյահոգեբանական մթնոլորտի հաստատումը ենթադրում է, որ դրանց զուգահեռ՝ սոցիալական համակարգը կդառնա առավել հուսալի, անվտանգ, կայուն, խաղաղ ու համերաշխ: Դժվար չէ նկատել, որ թվարկված այս արժեքները ցանկացած հասարակական համակարգի օպտիմալ գործառության անհրաժեշտ պայմաններն են, առավել ևս, որ վստահության մթնոլորտում երկխոսության պատրաստկամությունը հասարակական կյանքի վերարտադրման և զարգացման կարևոր մեխանիզմ է:

Ինչպես նախկինում, այնպես էլ մեր օրերում Ուրիշին չհանդուրժելու խնդիրն իրական մարտահրավեր է, որի հաղթահարումը հասարակական կյանքի կառուցարկման համար ունի կենսական նշանակություն: Նկատենք նաև, որ սոցիալական համակարգի ամբողջականությունը ձևավորվում է սոցիալական, քաղաքական և մշակութային երկխոսության միջոցով: Այդ իմաստով տարբեր անհատների, հասարակական խմբերի, մշակույթների, քաղաքակրթությունների, կրոնների և երկրների միջև երկխոսության մշակույթի ձևավորումն առավել քան արդիական է և հնարավոր է միայն այնտեղ, ուր գործում է հանդուրժողականության

սկզբունքը: Հանդուրժողականությունն ուրիշների հետ համատեղ ապրելու ընդունակություն և յուրօրինակ «արվեստ» է, որը նպաստում է ինչպես հասարակության սոցիոմշակութային կարգի կայացմանը, այնպես էլ տվյալ հասարակության անդամների մշակութային և անհատական որոշակիության պահպանմանը: Անշուշտ, մարդիկ տարբերվում են միմյանցից իրենց անհատական որակներով, բայց նրանք նաև սոցիալական էակներ են, ապրում են հանրային կյանքով, ինչը նրանց տալիս է ընդհանուր կյանքի մշակույթ և համակեցության կենսափիլիսոփայություն: Մարդը մշտապես երկխոսում է այլոց հետ, նրանց հետ մշտական սոցիոմշակութային հարաբերությունների մեջ է, ինչը նշանակում է, որ երկխոսությունը մարդու սոցիալականության կարևոր դրսևորումներից է: Իսկ դա նշանակում է, որ ներդաշնակ համակեցություն ձևավորելու համար հասարակության ներսում նախապես անհրաժեշտ է հաստատվի երկխոսություն ծավալելու շուրջ փոխհամաձայնության որոշակի մակարդակ: Փաստորեն փոխհամաձայնությունը երկխոսային հարաբերությունների կարևոր ձևերից է և աչքի է ընկնում մի շարք երանգներով ու տարատեսակներով[38]: Փոխհամաձայնության հիմքով երկխոսությունը «Ես»-ի և «Ուրիշի» միջև սոցիոմշակութային հարաբերությունների հաստատման ձև է: Միայն «Ուրիշի» հետ երկխոսելով և փոխհարաբերվելով է, որ «Ես»-ը կարողանում է ճանաչել և բացահայտել ինքն իրեն, զգալ իրեն որպես ամբողջականություն, որպես իրապես ապրող, շնչող, գոյություն ունեցող, մտածող, բանական էակ:

Մարդկանց միջև պայմանավորվածություններ ձեռք են բերվում երկխոսության միջոցով, ինչը, իր հերթին, մեծապես պայմանավորված է վստահության մթնոլորտի առկայությամբ: Վստահությունը հասարակական հարաբերությունների բնութագրական հատկություններից է և արտահայտվում է ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական մակարդակներում: Վստահությունը սոցիալական առաքինություն է, սոցիալականության կարգավորիչ գործոն, որը նպաստում է սոցիոմշակութային հարաբերությունների կառուցարկմանը: Մարդկային համակեցության փորձը հաստատում է, որ մարդկանց միջև փոխհարաբերությունների ներդաշնակությունն անմիջականորեն պայմանավորված է տվյալ հասարակությունում

[38] Տե՛ս **Бахтин М. М.,** Эстетика словесного творчества, М., Искусство, 1986, էջ 320-321:

տիրող վստահության աստիճանով: «Հասարակական վստահության գլխավոր գործառույթը հասարակության ինքնակազմակերպման ապահովումն ու սոցիալական կառույցների վերարտադրությունն է: Այն համարվում է մարդկանց համակեցության գլխավոր հիմքը»[39]: Պատահական չէ, որ ժամանակակից աշխարհում վստահությունը, հանդուրժողականությունը, համաձայնության գալու պատրաստակամությունը դիտվում են հասարակական առաջընթացի, զարգացման, հասարակական հարաբերությունների կանոնակարգման ելակետային պայմաններ: Առանց վերոնշյալ նախադրյալների անհնար է հասարակության՝ որպես ամբողջական համակարգի բնականոն գործունեությունը: Հասարակությունը չի կարող գործառել և զարգանալ, եթե լրջորեն զբաղված չէ հասարակական փոխհարաբերությունների տարբեր մակարդակներում ու ոլորտներում վստահության ամրապնդման գործով: Վստահությունն այն արժեքն է, որի հիման վրա ձևավորվում են սոցիալական կապերը, ամրապնդվում և ամբողջականում է ցանկացած սոցիալական օրգանիզմ[40]: Ի մի բերելով ասվածը՝ կարող ենք նշել, որ վստահությունը՝ որպես փոխադարձ պայմանավորվածություն և համաձայնություն ձեռք բերելու նախապայման, արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման գլխավոր աշխատակարգերից է: Կարելի է ասել, որ վստահությունը մարդկանց բարոյական գիտակցման երկարատև զարգացման արդյունք է և մշակութային յուրաքանչյուր համակարգում ունի իրեն բնորոշ մի շարք առանձնահատկություններ: Այստեղ հարկ է նկատել, որ վստահությունը, որպես սոցիալական կապիտալ, ի հայտ է գալիս այն հասարակություններում, որտեղ սոցիալական լարվածության մակարդակը գտնվում է ստորին, իսկ անվտանգության ու բարեկեցության մակարդակը՝ վերին աստիճանում: Հակառակ դեպքում, երբ հասարակության սոցիոմշակութային կարգը երերուն է, իսկ վստահության առկայությունը պայմանավորող սոցիալական գործոններն (անվտանգություն, ապահովվածություն և այլն) բացակայում են, ապա ապարդյուն է նաև տվյալ հասարակության ադամներից ակնկալել, որ նրանք կդրսևորեն

---

[39] **Купрейченко А.Б., Мерсиянова И.В.,** Проблема оценки уровня и содержания социального доверия // Доверие и недоверие в условиях развития гражданского общества, отв. ред. **Купрейченко А.Б., Мерсиянова И.В.**, М., Издательский дом НИУ ВШЭ, 2013, с. 31.

[40] Տե՛ս **Смирнов А. И.,** Факторы формирования доверия к российской армии, Социологические исследования. № 12, М., 2009, էջ 100:

հանդուրժողական վերաբերմունք Ուրիշի, Օտարի ազգային, մշակութային, սոցիալական կամ քաղաքական յուրահատկությունների նկատմամբ: Այս առումով տվյալ հասարակության սոցիոմշակութային կարգում վստահության մակարդակից է կախված տվյալ հասարակության և տվյալ պետության սոցիալական հավաքականության, համախմբվածության ապահովման հնարավորությունը:

Հարաբերվելով այլոց հետ՝ մարդուն մշտապես ուղեկցում են վախի, անհանգստության, կասկածի զգացումները, որոնց հաղթահարումը հնարավոր է միայն վստահության հաստատման միջոցով, քանի որ այն անվտանգություն և հանգստություն է ներշնչում փոխհարաբերության մեջ գտնվող սուբյեկտներին: Հայտնի սոցիոլոգ և փիլիսոփա Է. Գիդենսը վստահության զգացումը անմիջականորեն կապում է գոյաբանական անվտանգության հետ՝ անվտանգության հենց այս տեսակը համարելով առավել կարևոր մարդու համար[41]: Վստահությունը մասնավորապես ենթադրում է փոխադարձ սոցիալական պատասխանատվություն, ինչն էլ պահանջում է հանդուրժողականության բարձր աստիճան: Վստահություն կարող է լինել ինչպես առանձին անհատների, այնպես էլ հասարակական մեծ խմբերի, քաղաքական ինստիտուտների, միջազգային կազմակերպությունների և այլ կառույցների միջև: Վստահությամբ է պայմանավորված տարբեր սոցիալական խմբերի միջև համագործակցության հնարավորությունը: Եթե անհատների միջև վստահության դեպքում հաշվի են առնվում անհատական հատկությունները, ապա հասարակական վստահության դեպքում ենթադրվում են սոցիալական հարաբերություններն առհասարակ: Մասնագիտական վերլուծություններում հասարակական վստահությունը հայտնի է «սոցիալական կապիտալ» անունով (Ֆ. Ֆուկույամա), որի գլխավոր գործառույթը ներդաշնակ և հանդուրժող հասարակական հարաբերությունների հաստատումն է: Սոցիալական կապիտալը հասարակության անդամների միջև վստահության ներուժի առկայությունն է: Այն կարող է դրսևորվել ինչպես փոքր սոցիալական հանրույթներում՝ ընտանիք, այնպես էլ հնարավոր ամենամեծ հանրույթներում: Սոցիալական կապիտալը տարբերվում է մարդկային կապիտալի մյուս ձևերից նրանով, որ սովորաբար ստեղծվում և փոխանցվում է մշակութային

[41] Տե՛ս **Giddens A.**, The consequences of modernity, Stanford, Stanford University Press, 1996, էջ 90-95:

այնպիսի մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են կրոնը, ավանդույթները, սովորույթները[42]: Այսինքն՝ կապիտալի մյուս ձևերին զուգահեռ (տնտեսական, բարոյական)՝ գոյություն ունի նաև մարդկային կապիտալ, որի հիմքում սոցիալական վստահությունն է:

Սոցիալական կապիտալի հիմքը մարդկային հարաբերություններն են: Եթե տնտեսական կապիտալի հիմքում ընկած է նյութականը, ապա սոցիալական կապիտալի հիմքում գաղափարն է, անհատի կրթվածության աստիճանը: Առանց սոցիալական կապիտալի անհնար է մարդկաց միջև սոցիալական հարաբերությունների ձևավորումը: Վստահությունը սոցիալական կապիտալի այն հիմնարար արժեքն է, որը նպաստում է կայուն հասարակական հարաբերությունների հաստատմանը: Սոցիալական կապիտալի գլխավոր գործառույթը համախմբումը և միավորումն է՝ հիմնված վստահության սկզբունքի վրա: Վստահության շնորհիվ է, որ սոցիալական կապիտալը կարող է միավորել և հասարակության մեջ ներառել ինչպես միևնույն հետաքրքրություններն ունեցող անձանց, այնպես էլ իրարից էապես տարբերվողներին: Պատահական չէ, որ Ֆ. Ֆուկույաման սոցիալական կապիտալը բնութագրում է «ինքնաբուխ սոցիալիզացված» եզրույթով՝ նպատակ ունենալով ցույց տալ, որ սոցիալական կապիտալի առկայության դեպքում անհատը, անկախ իր կամքից, ինքնաբուխ ներառվում է հասարակական հարաբերությունների մեջ՝ նպաստելով հասարակական հարաբերությունների ձևավորմանը: Առանց սոցիալական կապիտալի, առանց վստահության չեն կարող լինել ներդաշնակ հարաբերություններ, սոցիալական առաջընթաց և կայուն զարգացում:

Սոցիալական վստահության տեսաբանները վստահությունը դիտում են որպես հասարակական կարգի կանոնակարգման և կայունության գլխավոր հիմք: Այս առնչությամբ Ֆ. Ֆուկույաման իրավացիորեն նկատում է, որ վստահություն կարող է առաջանալ բոլոր այն հասարակություններում, որտեղ գերիշխում է որոշակի բարոյական արժեքների համակարգ, որով առաջնորդվում են տվյալ հասարակության անդամները, և որի շնորհիվ առկա է այլոց վարքի նկատմամբ կանխատեսելիության,

[42] Տե՛ս **Фукуяма Ф.,** Доверие: социальные добродетели и путь к процветанию, М., ООО ‹‹Издательство АСТ››, ЗАО НПП «Ермак», 2004, էջ 52-53:

արդարության, ուշադրության և հոգատարության գիտակցում[43]: Այստեղ հարկ է նկատել, որ, ըստ Տ. Պարսոնսի՝ հասարակությունը կարող է ամբողջական և ինքնաբավ լինել այնքանով, որքանով օրինական են վերջինիս հաստատությունները, և որքանով այն կարող է «հույս դնել» իր անդամների խելամիտ վարքի վրա, որն ուղղված կլինի հասարակական հարաբերությունների ձևավորմանը, հասարակական համակարգերի կառուցարկմանն ու ամրապնդմանը[44]:

Անդրադառնալով վստահություն ֆենոմենի վերլուծությանը՝ հարկ է նկատել, որ հաճախ այն նույնացվում է հավատի հետ, ինչը սկզբունքորեն սխալ է: Չնայած հավատի մասին խոսելիս անմիջապես ենթադրվում է կրոնական հավատը (հավատ առ Աստված), բայց չմոռանանք, որ գոյություն ունի ոչ միայն հավատ առ Աստված, այլ նաև հավատ առ մարդը, որը նույնչափ կարևոր է, որքան կրոնական հավատը: Հավատի այս տեսակն անմիջականորեն կապված է վստահության հետ: Այսինքն՝ այս հավատը վստահության այն զգացումն է, որ յուրաքանչյուր մարդ օժտված է բարոյականության և արդարության որոշակի մակարդակով, որոնց կարելի է հավատալ և վստահել: Թեև հավատի և վստահության հիմքում ընկած են հուսալիության, ապահովության և անվտանգության զգացումները, սակայն, ի տարբերություն վստահության (վստահության հիմքում նախ և առաջ ընկած է բանական սկիզբն ու սթափ դատելու կարողությունը), հավատն ավելի զգացմունքային ապրում է և չունի ապացուցման ու հիմնավորման կարիք[45]: Թեև վստահության պարագայում գերակշռողը բանական մոտեցումն է, բայց այն պարունակում է նաև իռացիոնալ տարրեր: Ընդ որում, որպես իռացիոնալ ընտրություն՝ վստահությունը դրսևորվում է հատկապես անհատական մակարդակում: Ավելին, որոշ տեսաբաններ գտնում են, որ վստահությունը կարող է բացառապես դրսևորվել միայն անհատական մակարդակում: Չբացառելով վստահության դրսևորման անհատական բնույթը՝ հարկ է նկատել, որ այն առավելապես հասարակական-հրապարակային երևույթ է:

Սոցիոլոգիական հետազոտություններում առանձնացնում են վստահության երկու հիմնական մոտեցումներ: Առաջին՝ վստահությունն ավանդական

---

[43] Տե՛ս նույն տեղը, էջ 257-258:
[44] Տե՛ս **Парсонс Т.,** Система современных обществ, М., Аспект Пресс, 1998, էջ 20-21:
[45] Տե՛ս **Штомпка П.,** Доверие-основа общества, М., Логос, 2012, էջ 72:

հասարակություններին բնորոշ սոցիոմշակութային երևույթ է և հիմնականում ունի իռացիոնալ բնույթ: Երկրորդ՝ վստահությունն արդի հասարակություններին բնորոշ սոցիոմշակութային ռացիոնալ երևույթ է և սոցիալական հարաբերությունների հաստատման անհրաժեշտ նախապայման[46]:

Վստահության ըմբռնման այս երկու մոտեցումներում առաջին հայացքից նկատվող հակասությունը հեշտությամբ լուծվում է, եթե ընդունենք, որ այն գոյություն ունի և՛ ավանդական, և՛ ժամանակակից հասարակություններում: Քանի որ հասարակության այս երկու տեսակներն արդեն իսկ իրենց բնույթով տարբեր են, ուստի նրանց բնորոշ վստահության բովանդակությունները ևս պիտի տարբեր լինեն: Ավանդական հասարակություններում, որպես կանոն, վստահությունը հիմնվում է հավատի վրա, մինչդեռ արդի հասարակություններում այն հիմնված է բանական (գիտական) իմացության և ռացիոնալության վրա: Արդի հասարակություններում վստահության երկու տեսակներն էլ գոյություն ունեն կողք կողքի[47]:

Հասարակական տարբեր համակարգերում վստահության ձևավորումը այնքան էլ դյուրին գործընթաց չէ: Ինչպես վկայում են մի շարք վերլուծություններ, հատկապես անցումային փուլում գտնվող հասարակություններում (այդ թվում՝ նաև ՀՀ-ում) վստահության ձևավորումն անմիջականորեն կապված է մի շարք դժվարությունների ու խոչընդոտների հետ: Յուրաքանչյուր անցումային հասարակություն կարողանում է հաջողությամբ գործառել այնքանով, որքանով կարողանում է ճիշտ ժամանակին հաղթահարել նրանում առկա սոցիալական, տնտեսական, բարոյա-հոգեբանական, գաղափարա-քաղաքական փոփոխություններն ու փոխակերպական գործընթացները: Նման միտումը բնական և բավականին արդարացված է, քանի որ անցումային փուլում գտնվող փոխակերպվող հասարակություններին, որպես կանոն, բնորոշ են անորոշության և անկայունության զգացումները, նոր ձևավորվող և նոր որակական որոշակիություն ձեռք բերվող սոցիալական համակարգի նկատմամբ կասկածամտությունն ու անվստահությունը: Եվ իսկապես, ճգնաժամային բոլոր երևույթների հիմքում ընկած է աշխարհայացքային ճգնաժամը, որի հիմնական

---

[46] Տե՛ս **Волков Ю., Кривопусков В.,** Доверие и креативный класс: факторы консолидации российского общества, Ер., Тигран Мец, 2013, էջ 19-20:
[47] Տե՛ս նույն տեղը, էջ 20:

պատճառներն են արժեհամակարգային կտրուկ փոփոխություններն ինչպես անհատական, այնպես էլ ընդհանուր մակարդակներում[48]: Պատահական չէ, որ «...ամեն մի զարգացող սոցիալական համակարգ, առավել ևս տրանսֆորմացիոն հասարակությունը, «անորոշ» որոշակիություն է: Բանն այն է, որ զարգացող սոցիալական համակարգը միաժամանակ կայուն և փոփոխվող վիճակների միասնություն է: Կայունությունը սոցիալական կյանքի վերարտադրության անհրաժեշտ պայմանն է: Կայուն վիճակն ապահովում է համակարգի ներքին և արտաքին փոփոխությունների մշտական վերարտադրությունը: Բայց վերարտադրության ընթացքում համակարգի տարրերը մի կողմից նորացվում և համապատասխանեցվում են նոր ձևավորված վիճակին, մյուս կողմից էլ՝ նրանք ձեռք են բերում նոր որակ և, իրենց հերթին, փոխում համակարգի էթնոկեցության վիճակը: Ասվածից հետևում է, որ համակարգի էթնոկեցության վիճակը ստեղծման ու ոչնչացման մշտական գործընթաց է: Այդ տեսանկյունից անցումային հասարակությանը բնորոշ է դինամիկ քաոսը»[49]: Ուստի փոխակերպվող հասարակություններում վստահության ձևավորումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ հասարակական գիտակցության մեջ այն կդիտվի որպես պետության անվտանգության ապահովման և պաշտպանության միջոց: Առավել ևս, որ «հասարակական կառավարման գործընթացների արդյունավետությունը, անշուշտ, մեծապես կախված է պետական ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակից»[50]:

Ինչպես տեսնում ենք, առանց հանդուրժողականության և վստահության սկզբունքների կիրառման անհնար է համաձայնության հաստատումը, որն իրականացվում է երկխոսության միջոցով: Երկխոսության ժամանակ կոնֆլիկտի մասնակիցների կողմից փոխհամաձայնեցման ձեռքբերումն անհնար է առանց փոխադարձ հանդուրժողականության որոշակի մակարդակի[51]: Գերմանացի մտածող

---

[48] Տե՛ս **Мирзоян В.А.**, Управление “Сизифовым трудом”: к проблеме кризиса трудовой мотивации, Издательство Вестник РАУ, № 2, Ереван, 2011, էջ 6:

[49] **Հարությունյան Է. Ա.,** Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., ԵՊՀ, 2000, էջ 15:

[50] Տե՛ս **Հարությունյան Մ.Ա.**, Իշխանության լեգիտիմության ժամանակակից տեսություն, Եր., Նաիրի, 2016, էջ 141:

[51] Տե՛ս **Шалин В. В.,** Толерантность. Культурная норма и политическая необходимость. Монография, Ростов-на-Дону, 2000, էջ 255-257:

Յու. Հաբերմասը երկխոսությունը դիտում է որպես սոցիալական հաղորդակցման գործընթացում ճշմարտությանը և համաձայնության հաստատմանը հասու լինելու միջոց: Համաձայնության ձեռքբերմանն ուղղված դիսկուրսը սոցիալական իրականության իմացության եղանակ է: Հաբերմասի դիսկուրսի էթիկան ենթադրում է հաղորդակցման երկխոսային ձևը, քանի որ հաղորդակցումն այնպիսի գործողություն է, որն ուղղված է փոխըմբռնման և փոխհամաձայնության ձեռքբերմանը: Հաղորդակցային համարվում են այն գործողությունները, որոնց դեպքում հաղորդակցման մասնակիցները համաձայնեցնում և կոորդինացնում են իրենց հետագա քայլերը: Ընդ որում, ձեռք բերված նմանատիպ համաձայնությունը միտված է դեպի էականը, ճշմարիտը և արդարացին[52]: Հաղորդակցման միջոցով իրավական ուժ են ձեռք բերում միայն այն որոշումները, որոնք մասնակիցները կայացրել են համընդհանուր համաձայնության և «հանրագումարային կամքի» պայմաններում:

Քննարկելով երկխոսության համատեքստում հանդուրժողականության խնդիրը՝ Մ. Ռացը գտնում է, որ եթե մարդիկ ցանկանում են պահպանել բանականության գերակայության սկզբունքի նկատմամբ հավատն ու լավատեսությունը, ապա տվյալ հանրույթում պետք է առկա լինեն ոչ միայն հանդուրժողականության որոշակի մակարդակ, այլ նաև երկխոսության կայացման պայմաններ: Տվյալ դեպքում հանդուրժողականությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար նախապայման է երկխոսության հաստատման գործում: Ի տարբերություն հանդուրժողականության՝ երկխոսությունը ենթադրում է զարգացման հեռանկարային մակարդակ[53]: Երկխոսությունը համընդհանուր երևույթ է, որը գործառում է սոցիոմշակութային բոլոր տեսակի հարաբերություններում: Մ. Ռացը տարբերակում է երկխոսության ըմբռնման երկու հիմնական մոտեցումներ՝ լայն և նեղ: Լայն իմաստով երկխոսությունն ինտելեկտուալ աշխատանքի արդեն պատրաստի տեղեկույթի փոխանակումն է: Նեղ իմաստով՝ երկխոսության դեպքում տեղեկատվությունը ոչ թե նախապես տրված է, այլ ձեռք է բերվում անմիջապես երկխոսության ընթացքում: Ըստ սոկրատեսյան դասական ավանդույթի՝ «ճշմարտությունները» ծնվում են երկխոսության ընթացքում, քանի որ նախապես տրված չեն երկխոսության մասնակիցներին և ձեռք են բերվում

[52] Տե՛ս **Хабермас Ю.,** Моральное сознание и коммуникативное действие, СПб., Наука, 2001, էջ 91:
[53] Տե՛ս **Рац М. В.**, Диалог в современном мире, Вопросы философии. Наука, №10, М., 2004, էջ 30:

միայն հաղորդակցման ընթացքում՝ նպաստելով կոլեկտիվ մտածողության զարգացմանը: Տարբերելով մտածողության երկու հիմնական տեսակ՝ մենախոսային և երկխոսային, Մ. Ռացը գտնում է նաև, որ նեղ իմաստով երկխոսությունը հակադրվում է շփման առավել լայն տարածում գտած մենախոսային ձևին: Թեև ձևական առումով մենախոսությունը չի տարբերվում երկխոսությունից, սակայն նրանց միջև գոյություն ունեցող նմանություններն իրականում խիստ սահմանափակ են: Ի տարբերություն երկխոսության՝ մենախոսությունը հաղորդակցման այնպիսի ձև է, որն ուղղված չէ որևէ մեկին և չի ենթադրում պատասխաններ: Մինչդեռ երկխոսությանը բնորոշ է կոնկրետ ուղղվածություն և ենթադրում է հարց ու պատասխան: Հարկ է նկատել նաև, որ մենախոսության դեպքում արդեն իսկ առկա է հաղորդակցության արդյունքը, մինչդեռ երկխոսության ժամանակ արդյունքը ծնվում է հաղորդակցման շնորհիվ[54]:

Մեր օրերում երկխոսելու արվեստը կարևոր և հրատապ է, բայց միշտ չէ, որ գիտակցվում է որպես սոցիալական կարգի հաստատման համար անհրաժեշտ սկզբունք: Ավելին, ժամանակակից աշխարհում մեծամասնությունը կարծես թե անընդհատ «Ուրիշների» հետ թշնամանքի, առճակատման, նրանց անունը վարկաբեկելու, նրանց նախատելու առիթ է փնտրում: Ժամանակակից աշխարհում ակնհայտ պառակտում է նկատվում ինչպես առանձին անհատների, այնպես էլ հասարակությունների միջև: Յուրաքանչյուր ավանդույթ և գաղափարախոսություն արմատական դառնալու, երկխոսությունից հրաժարվելու միտումներ է դրսևորում՝ բացարձակացնելով միակ ճշմարիտ լինելու իր ուսմունքի հնարավորությունները: Իրականում գոյություն չունի համընդհանուր բարոյական արժեհամակարգ, որն ընդունելի կլինի բոլորի կողմից: Կոնֆլիկտներից և անհանդուրժողական վարքից խուսափելու միակ ճանապարհը դիմացինի տեսակետը հարգելու և ընդունելու մոտեցումն է, որը միտված է սեփական կարծիքը հակառակ կողմի կարծիքին հնարավորինս համապատասխանեցնելուն:

Հանդուրժողականության հիմնախնդրի վերլուծության ժամանակ ծագում են մի շարք պարադոքսներ, որոնք առնչվում են հանդուրժողականության սահմանների ճշգրտմանը: Մասնավորապես, հարց է ծագում, թե արդյոք գոյություն ունի՞ անսահման

[54] Տե՛ս նույն տեղը, էջ 20-21:

հանդուրժողականություն, թե՞ գոյություն ունեն որոշակի սահմաններ, որոնք խաթարում են հասարակական համակարգի խաղաղ զարգացման գործընթացին: Ինքնին հասկանալի է, որ անսահման հանդուրժողականություն չի կարող լինել, քանզի հանդուրժողականության դրսևորման չսահմանափակվածությունն ի վերջո կարող է հանգեցնել ամենաթողության: Հանդուրժող մարդը չի ընդունում անհանդուրժողականություն, այդ պատճառով էլ անհանդուրժողական վարք է ցուցաբերում բոլոր անհանդուրժողականների նկատմամբ: Անհանդուրժողականության հանդեպ հանդուրժողականության խնդրին անդրադառնալիս որոշ հեղինակներ գտնում են, որ անհանդուրժողականության դրսևորման սահմանները պետք է սահմանափակվեն միայն այն դեպքում, երբ վտանգվում են սոցիալական ինստիտուտների գործառնությունն ու մարդկանց ազատությունները[55]: Հանդուրժողականությունն ունի պարադոքսալ բնույթ, քանի որ ենթադրվում է, որ հանդուրժողականություն երբեմն պետք է ցուցաբերել այն ամենի նկատմամբ, ինչի հանդեպ պետք չէ ընդհանրապես հանդուրժող լինել: Այստեղ թերևս բախվում ենք *հանդուրժողականություն* հասկացության հակասականությանը, այն է՝ անհանդուրժելիի հանդուրժելիությանը: Մի կողմից մարդիկ չեն հանդուրժում այնպիսի երևույթներ, որոնք որոշակի հանրույթի բարոյական պատկերացումների տեսանկյունից սխալ և անընդունելի են, մյուս կողմից՝ հենց այդ նույն բարոյական տեսանկյունից պետք է թույլ տալ և հանդուրժել այդ սխալների գոյությունը[56]: Այսինքն՝ հանդուրժողականության բացակայությունն ավելի նախընտրելի է, քան անսահման հանդուրժողականության առկայությունը, քանի որ շատ հաճախ հանդուրժողականությունն անհանդուրժողի կողմից ընկալվում է որպես կամքի թուլություն և անզորություն: Մի բան ակնհայտ է, որ անսահման հանդուրժողականությունն ի վերջո նպաստում է անհանդուրժողականության տարածմանը:

Իհարկե, հանդուրժել անհանդուրժելին նշանակում է ոտնահարել սեփական անհատականությունը: Եթե առկա է որևէ անհանդուրժելի երևույթ, ապա պետք է

---

[55] Տե՛ս **Ролз Дж**., Теория справедливости, Новосибирск, изд-во НГУ, 1995, էջ 197-199:

[56] Տե՛ս **Хомяков М. Б.,** Толерантность и ее границы, Национальный психологический журнал, № 2 (6), М., 2011, էջ 25:

պատասխանատվություն ստանձնել և փորձել հասկանալ, թե որն է անհանդուրժողականության պատճառը: Այնուհետև՝ պատրաստ լինել գործելու և սխալների դեպքում դիմել համապատասխան քայլերի և տալ անհարժեշտ հակահարված[57]:

Այսպիսով, ժամանակակից բարդ ու բազմաբովանդակ աշխարհում էլ ավելի է կարևորվում հանդուրժողականության, փոխհամաձայնության, վստահության և երկխոսության սկզբունքների հիմքի վրա սոցիալական կարգի կառուցարկումը: Ժամանակակից աշխարհի սոցիոմշակութային կարգի ներքին գործառական տրամաբանությունից ելնելով՝ բռնության և ահաբեկչության դրսևորման նոր վտանգներ և մարտահրավերներ են առաջացել: Առավել քան վտանգավոր է նաև այն իրողությունը, որ բռնությունն ու ահաբեկչությունն ուղեկցվում են մանիպուլյացիոն մի շարք հնարքների կիրառմամբ, ինչի հետևանքով սոցիալական համակարգերի նկատմամբ իրականացված բռնությունն ու ահաբեկչությունը քողազերծման հնարավորություններ են ստանում: Նման պայմաններում առավել քան կարևոր է համաձայնության գնալու պատրաստակամությունը և որոշումներ կայացնելու կարողությունը: Անկասկած, որոշում կայացնելը մարդկային գործունեության անհրաժեշտ բաղադրիչ է: Սակայն եթե որոշումները կայացվում են առանց հաշվի առնելու հակառակորդների հակափաստարկներն ու հիմնավորումները, եթե այն հնարավորություն չի տալիս սովորել սեփական սխալների վրա և լսել նաև հակափաստարկող կողմին, ապա չկա որևէ անհրաժեշտություն, որ այդ որոշումները վերջնական բնույթ կրեն[58]: Ողջ կյանքում զինվելով նորանոր գիտելիքներով և ընդլայնելով սեփական իմացության սահմանները՝ մարդը պետք է գիտակցի, որ չպետք է սեփական տեսակետը բացարձակացնել և հայտարարել որպես վերջնական ճշմարիտ արժեք՝ հարգելով նաև դիմացինի փորձը և կարծիքը:

Որոշ տեսաբաններ նկատում են, որ բազմամշակութայնության սկզբունքով կառուցարկված ժամանակակից աշխարհը կանգնած է արժեքաբանական ճգնաժամի առաջ, քանզի հանդուրժողականության և փոխհամաձայնության սկզբունքների անխտրական կիրառումը հաճախ հանգեցնում է բռնությունների և

[57] Տե՛ս **Эко У.,** Пять эссе на темы этики, СПб, Симпозиум, 2003, էջ 154:
[58] Տե՛ս **Поппер К.**, Логика и рост научного знания, М., «Прогресс», 1983, էջ 395:

ահաբեկչությունների մի նոր ալիքի բարձրացման, որն էլ սպառնում է սոցիալական կապիտալի նվազմանը: Եվ իսկապես, սոցիալական համակարգի ճգնաժամի հետևանքով նվազում է տվյալ համակարգի անդամների քաղաքացիական ակտիվության մակարդակը[59]: Արդի աշխարհում բռնության և ահաբեկչության դեպքերը հաճախ ոչ թե հանդուրժողականության սկզբունքի բացակայության, այլ համաձայնության սկզբունքի չկիրառման կամ խտրական վերաբերմունքի կիրառման հետևանք են: Այժմ արդեն բավական չէ հանդուրժողականության սկզբունքով առաջնորդվել հասարակական կյանքի կազմակերպման գործում. անհրաժեշտ է նաև կիրառել փոխհամաձայնության հասնելու սկզբունքը, քանզի, եթե անգամ տիրի բացարձակ հանդուրժողականության մթնոլորտ, և հասարակության որոշ շերտերի բողոքի ձայնը լսելի չլինի մյուսների համար, ապա տվյալ փոքրամասնությունների խոսելու միակ լեզուն կարող է լինել բռնության կամ ահաբեկչության դիմելը: Ուստի ժամանակակից աշխարհում անհրաժեշտ է հետևել ինչպես հանդուրժողականության, այնպես էլ համաձայնության սկզբունքներին, քանզի միայն դրանցով իրականացվող երկխոսությունը կարող է դառնալ հասարակական կյանքի խաղաղ և համակողմանի կազմակերպման անհրաժեշտ նախապայման:

[59] Տե՛ս **Мкртичян А.Е.,** Некоторые атрибутивные характеристики “общества ни войны, ни мира”, Социология и право № 1, (12), Санкт-Петербургский университет управления и экономики, СПб., 2012, էջ 37:

ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. Հանդուրժողականությունը որպես քաղաքական համակարգի սոցիոմշակութային բնութագիր

Ի տարբերություն սոցիալական կյանքի այլ ոլորտների՝ հասարակության քաղաքական ոլորտում ավելի ակնառու է հանդուրժողականության սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը, քանզի քաղաքական ոլորտի ներքին գործառնական տրամաբանությունը թելադրում է մրցակցության, հակամարտության, գաղափարական և այլ տարաձայնությունների մշտական առկայությունը: Ժամանակակից աշխարհին բնորոշ մշակութային բազմազանության և «մրցակցող անհատականությունների» սոցիալական կարգի պայմաններում զարգացման, անվտանգության, քաղաքական հավասարության տնտեսական մրցակցության և անհատական ինքնազարգացման ապահովման համար անհրաժեշտ է ինչպես ընտրյալ վերնախավի, այնպես էլ շարքային քաղաքացիների շրջանում ձևավորել սովորույթների և մշակութային նորմերի այնպիսի համակարգ, որը կառուցարկված կլինի հանդուրժողականության սկզբունքով[60]: Ակնհայտ է՝ քաղաքական մրցակցության գործընթացներում կողմերից յուրաքանչյուրը, նպատակ ունենալով ամեն գնով հաղթանակել այդ պայքարում, փորձում է ապացուցել իր գաղափարների, հայացքների, կողմնորոշումների գերակայությունը և մերժել հակառակորդի գաղափարները, ինչն էլ որպես կանոն հանգեցնում է անհանդուրժողական մթնոլորտի ձևավորմանը: Քաղաքական կյանքում հանդուրժողականության սկզբունքն առավել կարևոր և հրատապ է հատկապես քաղաքական կյանքի տարբեր մակարդակներում և քաղաքական գործընթացներում: Բանն այն է, որ քաղաքական ոլորտում որոշակի ծրագրեր իրականացնելու համար քաղաքական դաշտի առանձին ենթահամակարգերի ուժերը (կուսակցություններ, խորհրդարանական խմբակցություններ և այլն) հաճախ բավարար չեն լինում և ծագում է համագործակցության և բանակցությունների իրականացման անհրաժեշտություն: Բայց ենթադրյալ համագործակիցների հետ պայմանավորվելու և համաձայնության

[60] Տե՛ս **Sabl A.**, The last artificial virtue: Hume of toleration and its lessons, Political theory, Vol. 37, № 4, University of California, Los Angeles, 2009, էջ 511:

գալու միակ խելամիտ և քաղաքակիրթ տարբերակը հանդուրժողականության դրսևորումն է: Հակառակ դեպքում անխուսափելի են դառնում կոնֆլիկտներն ու հակասությունները, որոնց լուծումը հնարավոր է կամ հանդուրժողականության, կամ էլ հակամարտող կողմերից որևէ մեկի չեզոքացման միջոցով: Այլապես կարող են ծագել այնպիսի իրավիճակներ, երբ կոնֆլիկտող կողմերի միջև պայքարը ձգձգվի, և հետևաբար հետաձգվի նաև տվյալ խնդրի լուծումը: Ծագող կոնֆլիկտների հաղթահարումն անմիջականորեն պայմանավորված է տվյալ հասարակության քաղաքական համակարգին բնորոշ մի շարք առանձնահատկություններով:

Հանդուրժողականության՝ որպես սոցիոմշակութային իրականության կառուցարկման մեխանիզմի խնդիրը հատկապես արդիական է հայ հասարակության համար: Բանն այն է, որ եթե ընդունենք քաղաքակրթության պատմության զարգացման ընթացքը՝ որպես մինչարդիականության, արդիականության և հետարդիականության շրջանների հաջորդափոխության ընթացք, ինչպես նշում են բազում տեսաբաններ, ապա հայ հասարակությունում այժմ գերիշխում են ավանդականության շրջանին բնորոշ սոցիոմշակութային սկզբունքներն ու կենսիմաստային ուղղորդիչները: Ավանդական հասարակություններում կյանքի կազմակերպման գլխավոր գործոնն ավանդույթներն ու սովորույթներն են, որոնք հաճախ կարծրացած են: Այս պայմաններում անհանդուրժողականությունը կյանքի մշտական ուղեկից է: Հանդուրժողականության՝ որպես սոցիոմշակութային արժեքի ընդունումը մեր հասարակության համար կարող է լինել այն գրավականը, որի շնորհիվ մեր հասարակությունը կարող է ապրել զարգացման հերթական փուլը՝ անցում կատարելով մինչարդիականության շրջանին բնորոշ հասարակության սոցիոմշակութային մոդելից արդիականության սոցիոմշակութային մոդելին, այսինքն՝ հանդուրժողականությունն ըստ էության հայ հասարակության զարգացման գրավականն ու պայմանն է: Հայաստանյան իրականության պայմաններում հանդուրժողականության առկայությունը հատկապես կարևորվում է քաղաքական կյանքում, հատկապես քաղաքական կյանքի բոլոր մասնակիցների միջև խաղաղ ու ներդաշնակ մրցակցային պայմանների ապահովման գործում, ինչպես իշանության, այնպես էլ ընդդիմության դեպքում: Իշխանական բևեռում միմյանց կարծիքների

նկատմամբ հանդուրժողականության բացակայության հետևանքով երբեմն գերակայություն է ստանում տվյալ պահին քաղաքական իշխանության ղեկին գտնվող թիմի կամ այն է «ամենաուժեղի ձայնը»: Եվ հասարակական կյանքի կառավարումն այդ պարագայում երբեմն վերածվում է արդեն հասարակության վրա ուղղակի իշխանության բանեցման գործընթացի, քանի որ բացառվում է հակադիր կարծիքի առկայության իրավունքը, և վճիռները կայացվում են ուղղահայացի սկզբունքով: Միևնույն ժամանակ ընդդիմության տարբեր շերտերի միջև անհանդուրժողականությունն էլ արտահայտվում է տվյալ պահին քաղաքական կամ սոցիալական որևէ շարժման առաջնորդության դերի հավակնության նկատմամբ անզիջողականության տեսքով, ինչն էլ ի վերջո մասնատում է ընդդիմադիր ուժերին և վերջին հաշվով թուլացնում է ողջ ընդդիմությանը մասնավորապես, և քաղաքական համակարգին ընդհանրապես: Քանի դեռ քաղաքական համակարգում չի ձևավորվել հանդուրժողականության կայացած մշակույթ, քաղաքական ընդհանուր համակարգը դատապարտված է լճացման: Ուստի քաղաքական փոխակերպումներից առաջ հարկավոր է նախ մշակութային փոխակերպումներ իրականացնել, որի իրականացումը հնարավոր է միայն հանդուրժողականության առկայության պայմաններում:

Հարկ է նկատել, որ ժամանակակից բազմաբևեռ աշխարհում արդյունավետ գործել ու գործառել կարող են միայն այն հասարակությունները, որոնք ղեկավարվում են հանդուրժողականության սկզբունքով: Խնդիրն առավել արդիական է հատկապես հետխորհրդային հասարակություններում, որոնց համար ենթակայական և առարկայական մի շարք պատճառներով քաղաքական մշակույթում հանդուրժողականության կարևորումը դեռևս խորթ է: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո քաղաքական, տնտեսական, գաղափարական, կրոնական, մշակութային բազմակարծության և բազմազանության հրամայականը կենսական նշանակություն հաղորդեց հանդուրժողականության խնդրին: Արդի սոցիոմշակութային փոխակերպումների բացասական երևույթների ազդեցությունն առավել ակնհայտ է հատկապես անցումային փուլում գտնվող հասարակությունների դեպքում, ինչի պայմաններում փորձ է արվում մերժել և հրաժարվել անցյալի սոցիոմշակութային

արժեքներից՝ որդեգրելով բոլորովին նոր, «անորոշ» սոցիոմշակութային կողմնորոշիչներ, որոնք հասարակության կողմից դեռևս հասկացվելու և ընդունվելու կարիք ունեն: Անցումային հասարակություններին բնորոշ վախը, կասկածը, անորոշությունը սոցիոմշակութային տեսանկյունից ապակառուցողական երևույթներ են, որոնք խաթարում են հասարակական համակարգի միասնականությունն ու ամբողջականությունը: Որպես կանոն, անորոշությունը և անպաշտպանվածությունն ուղեկցվում են անհանդուրժողական վարքով և թշնամանքի ու ատելության զգացումներով ինչպես իշխող վերնախավի նկատմամբ, այնպես էլ հասարակության «շարքային» անդամների միջև: «Անցումային հասարակություններում այդ, այսպես կոչված, անպաշտպանվածությունը հաճախ ենթարկվում է քաղաքական շահարկումների, քանի որ որպես անորոշության որոշարկման ձև ընտրվում է «թշնամու» կերպարը, որի դեմ ուղղորդվում է ամբոխի էներգիան … Բանն այն է, որ նման հասարակություններում տեղի են ունենում սոցիալական կառուցվածքի արմատական այնպիսի տեղաշարժեր, որոնց հետևանքով կազմալուծվում են մարդկանց միջև եղած նախկին գործառութային կապերը, և որոշ ժամանակ հասարակության մեջ տիրապետող են դառնում ամբոխին բնորոշ գծերը»[61]: Այս առնչությամբ կարելի է փաստել, որ արդի հայ հասարակությանը (հատկապես նրա քաղաքական համակարգին) դեռևս բնորոշ է կոնֆլիկտայնությունը, ինչն էլ մի շարք դժվարություններ է առաջացնում ժողովրդավարական-քաղաքական մշակույթի ձևավորման և հանդուրժողականության տարածման գործում, չնայած՝ կոնֆլիկտներն ու տարաձայնություններն անխուսափելի երևույթներ են հասարակության ներսում և հասարակությունների միջև և ամենևին էլ բարոյականության պակասի արդյունք չեն: Հասարակությունն առանց կոնֆլիկտի ուտոպիստական գաղափար է[62]: Ավելին, հայկական իրականության մեջ անհանդուրժողական մթնոլորտ և կոնֆլիկտներ գոյություն ունեն ինչպես հասարակության տարբեր շերտերի, այնպես էլ քաղաքական դաշտի տարբեր թևերի միջև: «Փոխակերպվող հասարակություններին բնորոշ քաղաքական օրինաչափություններից է իշխանության տարբեր թևերի միջև

---

[61] **Հարությունյան Է. Ա.,** Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ: Եր., ԵՊՀ. 2000, էջ 209:

[62] Տե՛ս **Сутор Б.,** Малая политическая этика, М., Директ-Медиа, 2013, էջ 62:

պարբերաբար կրկնվող ինստիտուցիոնալ տարաձայնություններն ու հակասությունները: Ուշագրավ է, որ քաղաքական ու գաղափարական պայքարի հիմնական թիրախը գործադիր իշխանությունն է»[63]: Քաղաքական ու սոցիոմշակութային նման փոխակերպումները պատճառ են դառնում հասարակության կողմից թշնամական մթնոլորտի ձևավորման համար, որն ուղեկցվում է բացասական լիցքերի և անհանդուրժողական վարքի դրսևորմամբ, ինչն էլ, իր հերթին, բացասաբար է անդրադառնում հասարակական կյանքի կազմակերպման ու կանոնակարգման գործընթացների վրա: Բանն այն է, որ «անցումային հասարակությունների քաղաքական համակարգերը, որպես կանոն, ղեկավարվում են «ընկերամշակութային պարտադրանքների» սկզբունքով՝ գտնելով, որ արդի քաղաքակրթության զարգացման բարդ ու հակասական գործընթացներում հասարակության պահպանողական մեծամասնությունը չի կարող ճիշտ կողմնորոշվել և քաղաքական ճիշտ ընտրություն կատարել: Այդ տեսակետից հետխորհրդային գրեթե բոլոր քաղաքական համակարգերը, իրենց գործունեության հատկապես առաջին շրջանում, ղեկավարվում են «համոզմունքի էթիկայի» սկզբունքով և ակամա վերաճում արևմտյան ազատականության ընկերամշակութային ու քաղաքական թելադրանքների ներդրման ու տարածման գաղափարայնացված հաստատության (ինստիտուտի)»[64]: Այս առնչությամբ տեղին է նկատել, որ համակարգային փոխակերպումների ենթարկվող հասարակությունները, ինչպիսին է նաև հայ հասարակությունը, չպետք է բավարարվեն միայն արևմտյան քաղաքակրթությանը բնորոշ ինստիտուտների և նրանց արժեհամակարգի մեխանիկական ընդօրինակմամբ: Փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարության ենթակառույցներն ու ինստիտուտները թեև ավելի արագ են ստեղծվում, բայց դրանց արդյունավետ գործառնության համար անցումային հասարակություններում չկան անհրաժեշտ փորձ, կամք ու համապատասխան մշակույթ: Վերջիններս, հայտնվելով սոցիոմշակութային նոր տարածությունում, ակամայից հրաժարվում են անցյալից՝ չկարողանալով հանդուրժել ներկան: «Հոգեբանական մակարդակում այդ «սոցիոմշակութային դատարկությունը»

---

[63] **Հարությունյան Է. Ա.,** Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրը անցումային հասարակությունում, Եր., Նորավանք, 2002, էջ 57:

[64] **Հարությունյան Է. Ա.**, Համոզմունքների գերակայության օրենքը, «Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումներ», Պրակ VIII, Եր., 2011, էջ 3:

դրսևորվում է «անցյալի ու ներկայի», «մասնավորի ու հասարակականի», «առասպելի ու իրականության», «արդարության ու հնարավորության», «ապահովվածության և անորոշության» հակադրությունների ձևով, որոնք համակարգային ճգնաժամի առօրյա-իռացիոնալ դրսևորումներ են, և ներազգային ճգնաժամերը վերլուծելիս քաղաքական համակարգը պետք է ուշադրություն դարձնի ոչ այնքան մակրոկառուցվածքներին, որքան դրանց ամենօրյա դրսևորումներին»[65]:

Տարբեր քաղաքական համակարգերում հանդուրժողականության դրսևորումները տարբեր են: Մասնավորապես՝ «փակ» հասարակություններին (ամբողջատիրական, ավտորիտար) բնորոշ են մարդկանց իրավունքների և ազատությունների սահմանափակումը, անհանդուրժողականությունը, գերիշխանության և ենթակայության ձգտումները: Այդ տեսակետից ամբողջատիրական հասարակություններում «իրավազուրկ մեծամասնությունը» հարկադրաբար հանդուրժում և ենթարկվում է գերիշխող փոքրամասնությանը: «Փակ» հասարակություններում, որտեղ իշխող փոքրամասնության կողմից ամեն կերպ ոտնահարվում և ճնշվում են անհատի ազատություններն ու իրավունքները, հանդուրժողականությունը վերածվում է համբերատարության, որի միջոցով մարդիկ կարծես հաշտվում են տիրող ապօրինությունների և անարդարությունների հետ: Այս դեպքում գործ ունենք ապակառուցողական հանդուրժողականության հետ, մինչդեռ կառուցողական հանդուրժողականության կայացման և զարգացման իրական և հնարավոր միակ միջավայրը կարող է լինել «բաց» հասարակության արժեքներով և սկզբունքներով առաջնորդվող քաղաքացիական հասարակության սոցիոմշակութային միջավայրը: Այս համատեքստում կարելի է ընդունել, որ կառուցողական են սոցիոմշակութային այն արժեքները, որոնք նպաստում են անհատի և անհատականության իրացմանը տվյալ սոցիոմշակութային տարածությունում՝ միևնույն ժամանակ չխաթարելով սոցիալական կարգն ու կայունությունը, իսկ ապակառուցողական են սոցիոմշակութային այն արժեքները, որոնք եթե անգամ կարևորվում են ինչ-ինչ մարդկանց կամ ինչ-ինչ սոցիալական խմբերի կողմից, ապա գլոբալ առումով վտանգում են սոցիալական համակեցության կայունությունն ու

[65] **Հարությունյան Է. Ա.**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Մակմիլան-Արմենիա, Եր., 2004, էջ 144:

անվտանգությունը: Բանն այն է, որ անհանդուրժողականության հիմքում հաճախ ընկած է լինում այն մտայնությունը, ըստ որի հասարակության որոշ անդամներ, իրենց մշակութային, սոցիալական կամ քաղաքական առանձնահատկություններից ելնելով, հասարակության այլ անդամների նկատմամբ ունեն որոշակի արտոնություններ և հավելյալ իրավունքներ ու ազատություններ, մինչդեռ ժողովրդավարության և իրավականության սկզբունքներով առաջնորդվող բաց քաղաքացիական հասարակության սոցիոմշակութային կարգը ենթադրում է հավասարություն ինչպես իրավական, այնպես էլ սոցիալական ու քաղաքական առումներով, ինչը հնարավոր է իրականացնել միայն այն դեպքում, երբ տվյալ հասարակությունը որդեգրում է հանդուրժողականության, ‹‹Ուրիշին›› հարգելու սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ սկզբունքները: Պատահական չէ, որ բարձր տնտեսական ցուցանիշ ունեցող, բարեկեցիկ կյանք ապահովող և «բաց» քաղաքական համակարգ ունեցող երկրներում կոնֆլիկտների և պատերազմների հավանականությունը շատ ավելի փոքր է՝ ի տարբերություն «փակ», ավտորիտար համակարգերի, որտեղ բարեկեցության մակարդակը զգալիորեն ցածր է[66]: Այս համատեքստում հատկապես անցումային փուլում գտնվող հասարակությունների (ինչպիսին, օրինակ, հետխորհրդային պետություններն են, այդ թվում նաև Հայաստանը) քաղաքական համակարգի համար հատկանշական է ավտորիտարիզմը՝ ներքաղաքական պայքարին իրեն բնորոշ անհանդուրժողական դրսևորումներով: Եվ իսկապես, հետխորհրդային բոլոր հասարակություններում «նոր ժողովրդավարության» հաստատումն ուղեկցվում է առաջին հերթին ավտորիտար քաղաքական համակարգերի կայացմամբ[67]: Իսկ ավտորիտար փակ քաղաքական համակարգերին, ինչպես արդեն նշվեց, բնորոշ են անհանդուրժողականությունը, լավագույն դեպքում՝ ապակառուցողական հանդուրժողականությունը, ինչը ոչ պակաս բացասական գործառույթներ է կատարում սոցիոմշակութային կարգի կայունության և հուսալիության պահպանման տեսանկյունից:

---

[66] Տե՛ս **Walter B. F.**, Does Conflict Beget Conflict? Explaining Recurring Civil War// Journal of Peace Research. Vol 41, № 3, SAGE Publications (London, Thousand Oaks, CA and New Delhi), 2004, էջ 372:

[67] Տե՛ս **Погосян Г.А.**, Армянское общество в трансформации, Ер., Издательский Дом “ЛУСАБАЦ”, 2003, էջ 102-103:

Բոլորովին այլ է հանդուրժողականության ընկալումը և գործառույթը «բաց» հասարակություններում: Կ. Պոպերը ենթադրում է, որ բաց հասարակություններում հանդուրժողականությունը մարդասիրական և հավասարապաշտական էթիկայի ամենակարևոր սկզբունքներից է: Նա գտնում է, որ պետք է հանդուրժողականություն ցուցաբերել բոլոր նրանց հանդեպ, ովքեր իրենք էլ հանդուրժող են և չեն քարոզում անհանդուրժողականություն: Յուրաքանչյուրն իրավունք ունի լսելի լինելու և առաջադրելու սեփական փաստարկները, որով էլ հաստատվում է հանդուրժողականության իրավունքը[68]: Այս սկզբունքից մասնավորապես հետևում է, որ անհրաժեշտ է հարգանքով վերաբերվել ուրիշների բարոյական, քաղաքական ընտրությանը, եթե, իհարկե, այն չի հակասում հանդուրժողականության հիմնական սկզբունքներին: Եթե «փակ» հասարակություններում հանդուրժողականությունն անհատի գոյատևման միջոց է, ապա «բաց» հասարակություններում այն դիտվում է որպես նպատակ, որն ապահովում է հասարակության առաջընթացն ու զարգացումը: Այս դեպքում գործ ունենք հանդուրժողականության ուտիլիտարիստական մեկնաբանման հետ, երբ հանդուրժողականության հիմքում ընկած են նպատակահարմարության և շահի սկզբունքները: Կարողանալ ապրել՝ չխանգարելով մյուսներին, հետևել քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին՝ չոտնահարելով այլոց իրավունքներն ու ազատությունները, համբերատար վերաբերվել ուրիշների ազգային, էթնիկ առանձնահատկություններին. ահա սրանք են հանդուրժողականության հիմնական ըմբռնումները: Այլ կերպ ասած՝ հանդուրժողականությունը վերացական հասկացություն չէ, այն անմիջական փոխազդեցության մեջ է գտնվում հասարակական կյանքի քաղաքական, սոցիալական, տնտեսական և հոգևոր ոլորտների հետ: Ընդ որում, հանդուրժողականությունն այնքանով վերացական երևույթ չէ, որքանով նկատելի և չափելի է վերջինիս բացակայությունը քաղաքական, սոցիալական և ընդհանրապես սոցիոմշակութային այս կամ այն համակարգերում[69]:

---

[68] Տե՛ս **Поппер К. Р.,** Открытое общество и его враги. Т. 2. Время лжепророков: Гегель, Маркс и другие оракулы, М., Феникс, Культурная инициатива, 1992, էջ 275-276:

[69] Տե՛ս **Gibson J. L.,** Alternative Measures of Political Tolerance: Must Tolerance be “Least-Liked”?, American Journal of Political Science, Volume 36, University of Wisconsin Press, Madison, 1992, էջ 575-576:

Հանդուրժողականությունը ժամանակակից քաղաքացիական հասարակության գլխավոր բարոյահոգեբանական սկզբունքներից է և ընկած է քաղաքական գործունեության բոլոր մակարդակների և ամենից առաջ քաղաքացիական կառավարման գործընթացների հիմքում: Քաղաքական հանդուրժողականությունը ժողովրդավարական սոցիումի քաղաքական մշակույթի կարևորագույն հատկանիշն է, որտեղ ներառված են և՛ պետությունը, և՛ քաղաքացիական հասարակությունը[70]: Ինչպես առանձին պետությունների, այնպես էլ ողջ ժողովրդի համար քաղաքացիական հասարակությունը զարգացման կարևորագույն նախապայման է: Արդի քաղաքակարթությունը ձգտում է այնպիսի սոցիոմշակութային կարգերի ձևավորմանը, որում մարդիկ ընդունում են միմյանց՝ առանց որևէ ազգային, կրոնական, ռասայական և այլ խտրականությունների: Սոցիոմշակութային նման կարգերի հաստատումը ենթադրում է նաև քաղաքացիական հասարակության կայացում, քանի որ «քաղաքական համակարգի առաքելությունը ոչ թե հասարակության տարանջատումն է, այլ միավորումը, ոչ թե առանձին մարդու, այլ հասարակության շահին ծառայելն է … որպեսզի քաղաքական համակարգը կատարի հասարակության միավորման իր առաքելությունը, պետք է իրեն զրկի ամբողջականանալու հակումներից, տարանջատվի և իր ներսում հաստատի հակակշիռների ինստիտուտ»[71]:

Քաղաքացիական հասարակությունը կառուցարկվում է ազատական-ժողովրդավարական արժեքների գերակայության սկզբունքով: Միևնույն ժամանակ ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացումը գերազանցապես կախված է քաղաքացիական հասարակության կայացվածության աստիճանից[72]: Ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությանը համընդգրկուն կերպով անդրադարձել են ժամանակակից փիլիսոփաներ Հաբերմասը և Ֆուկոն: Տեսաբան Բ. Ֆլիվբերգն իր «Հաբերմաս և Ֆուկո. քաղաքացիական հասարակության տեսաբաններ» հայտնի հոդվածում համեմատական վերլուծություններ է անցկացնում Յ. Հաբերմասի և Մ. Ֆուկոյի՝ քաղաքացիական

---

[70] Տե՛ս **Зайцев А. В.,** Политическая толерантность в публичном диалоге государства и гражданского общества, Общество; Политика; Экономика; Право, № 2, М., 2012, էջ 19:

[71] **Հարությունյան Է. Ա.**, Հնարավորությունների հավասարություն և շահերի հավասարակշռություն, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 141.4, Եր., 2013, էջ 4:

[72] Տե՛ս **Фливберг Б.**, Хабермас и Фуко- теоретики гражданского общества, Социологические исследования. № 2, М., 2000, էջ 127:

հասարակության վերաբերյալ գաղափարների միջև՝ նշելով, որ վերջիններս իրենց վերլուծություններում փորձում են գտնել այն հիմնական գործոնները, որոնք նպաստում են ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ձևավորմանը: Նրանք համակարծիք են այն հարցում, որ իշխանության ռացիոնալացումը և չարաշահումն արդիականության դարաշրջանի քաղաքական մեծագույն խնդիրներն են, և առաջարկում են խնդրի տարբեր լուծումներ: Հաբերմասը հիմնվում է ինստիտուտների՝ ունիվերսալության և ըստ սահմանադրության հիմնական սկզբունքների զարգացման վրա: Մինչդեռ Ֆուկոն կարծում է, որ քաղաքացիական հասարակությունում չկա և չի կարող լինել համընդհանուր համաձայնություն՝ հիմնվելով իշխանության պայքարի և ժողովրդավարությանը հասնելու ռազմավարությունների վերլուծության գաղափարի վրա: Հաբերմասի մոտեցման գլխավոր արժեքն այն է, որ ժողովրդավարական գործընթացի հիմքում դնում է ինստիտուտների զարգացումը, գործընթացի պլանավորումը, իսկ Ֆուկոյի մոտեցման դեպքում արժեքավորն այն է, որ նա հիմնվում է իշխանության դինամիկայի գաղափարի վրա՝ փորձելով հասկանալ և վերլուծել, թե ինչպիսի աշխատակարգերով է գործում կամ առաջնորդվում տվյալ իշխանական համակարգը[73]: Ըստ Հաբերմասի՝ ժողովրդավարությունը չունի ազգություն, այն յուրահատուկ քաղաքական կողմնորոշում է, որի շուրջ կարող են համախմբվել տարբեր ազգային, էթնիկ պատկանելություն, տարիք, սեռ, լեզու ունեցող մարդիկ: Մինչդեռ կան մի շարք մտածողներ, որոնք հակադրվում են այս դրույթին՝ գտնելով, որ ժողովրդավարությունը նախ և առաջ էթնիկ բնույթ ունի և առանց ազգային պատկանելության չի կարող գոյություն ունենալ[74]: Եթե քաղաքացիական հասարակության կայացումը հնարավոր է միայն ժողովրդավարական քաղաքական համակարգի պայմաններում, ապա հանդուրժողականությունը ժողովրդավարական քաղաքական մշակույթի բաղադրիչ է: Քաղաքացիական հասարակությունը պետությունից հարաբերականորեն անկախ և ինքնուրույն անհատների խումբ է, ինստիտուտ, որն հանդես է գալիս անհատների և սոցիալական տարբեր խմբերի շահերի պաշտպանությամբ, հասարակական հարաբերությունների կարգավորմամբ՝

[73] Տե՛ս նույն տեղը, էջ 134:
[74] Տե՛ս **Шипилов А. Б.,** Демократия и толерантность, Социологические исследования. Социс, № 3, М., 2005, էջ 39:

հավասարակշռելով հասարակական կյանքի պետական և մասնավոր ոլորտների միջև փոխհարաբերությունները և պայքարելով իրավական պետության հաստատման համար: Հանդուրժողականությունը, որպես համընդհանուր որոշում կայացնելու գործընթաց, ընկած է քաղաքացիական հասարակության հիմքում՝ ապահովելով և ամրապնդելով տարբեր հասարակական կազմակերպությունների միջև հորիզոնական կապերի առաջացումը, քանի որ վերջիններս տիրապետում են անհավասար քանակությամբ նյութական և ոչ նյութական ռեսուրսների, և ըստ էության հավասար չեն: Ուստի բոլոր այն դեպքերում, երբ որևէ մի առանձին սոցիալական կազմակերպություն անհավասարության (նյութական և ոչ նյութական) հենքի վրա փորձում է ճնշել մյուսներին, հանդուրժողականությունը հանդես է գալիս ոչ թե որպես սոցիալական նորմ, այլ բանական, խելամիտ որոշումներ կայացնելու գործընթաց, ինչն էլ նպաստում է անհատների և սոցիալական խմբերի կայուն զարգացմանը ժամանակակից աշխարհի բազմազնության պայմաններում: Այս համատեքստում հանդուրժողականությունը, որպես քաղաքացիական հասարակության գաղափարախոսություն, սոցիալական ծրագիր է, որի գլխավոր առաքելությունը տարբեր աշխարհայացքների, կրոնների, ազգային մշակույթների ներգրավումն է հադնուրժողականության գաղափարախոսություն՝ միաժամանակ գիտակցելով յուրաքանչյուրի «տարբեր լինելու» իրավունքը, ինչն էլ նվազեցնում է արդի աշխարհում մարդկանց գոյությանը վտանգ սպառնացող մի շարք կոնֆլիկտների առաջացման հնարավորությունը: Հանդուրժողականությունը քաղաքացիական հասարակության հիմնարար սկզբունքներից է, որն ապահովում է մարդու հիմնական ազատություններն ու հասարակության ներդաշնակ համակեցությունը:

Հանդուրժողականությունը քաղաքացիական հասարակության ձևավորման և սոցիալական ներդաշնակության համար անհրաժեշտ և պարտադիր պայման է: Այս առնչությամբ մասնագիտական վերլուծություններում առանձնացվում են սոցիալական ներդաշնակության համար անհրաժեշտ հանդուրժողականության հետևյալ տարատեսակները, որոնք նաև չեն հակասում բազմակարծության արժեհամակարգի գործառնությանը.

1. Այլ տեսակետների նկատմամբ համբերատար վերաբերմունք:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1995 թ.-ի որոշման՝ հանդուրժողականությունը քաղաքացիական հասարակության արժեք և սոցիալական նորմ է, համաձայն որի՝ տարբեր արժեքներ ունեցող մարդկանց և սոցիալական խմբերի միջև կառուցողական փոխհարաբերությունների հաստատումը հնարավոր է միայն հանդուրժողական գիտակցության և վարքի ձևավորման պայմաններում: Այդ պատճառով էլ *հանդուրժողականություն* հասկացության նշանակությունը շատ ավելի լայն է, քան սովորական համբերատար վերաբերմունքը: Համբերատարությունը ավանդաբար ընկալվել է որպես այլոց տեսակետների, հայացքների նկատմամբ ներողամիտ, համբերատար վերաբերմունք: Հանդուրժողականությունը ենթադրում է մարդու իրավունքների, ազատությունների ճանաչում և ընդունում: Այն ակտիվ սոցիալական վերաբերմունք է, որին մարդիկ հանգում են գիտակցաբար: Մինչդեռ համբերատարությունը պասիվ-համբերատար վերաբերմունք է շրջապատող իրադարձությունների և մարդկանց նկատմամբ:

2. Մետաֆիզիկական, կրոնական և գաղափարախոսական այլընտրանքների հանդուրժում:

Բրիտանացի հայտնի սոցիոլոգ Զ. Բաումանը, խոսելով համաշխարհայնացման արդի գործընթացների մասին, նկատում է, որ հարկավոր է առանձնացնել համաշխարհայնացում և ունիվերսալացում հասկացությունները[75]: Բաումանը համաշխարհայնացումը մեկնաբանում է ոչ թե քաղաքական որոշումների կենտրոնացման, մշակութային միակերպության տարածման, համընդհանրական սոցիոմշակութային տարածության ձևավորման համատեքստում, այլ ընդհակառակը՝ այն մեկնաբանում է որպես ապակենտրոնացման, բազմազանության հաստատման, անորոշության տարածման ուղղակի պատճառ և պայման, ինչին հակադրում է ունիվերսալացման գործընթացը: Ունիվերսալացումը համաշխարհային կարգ հաստատելու և սոցիոմշակութային ընդհանուր տարածություն ձևավորելու նախագիծ է, որի իրականացման հետևանքը համաշխարհայնացումն է: Փաստորեն համընդհանուր կարգ ու որոշակիություն հաստատելուն ուղղված ունիվերսալացման նախագիծը հանգեցնում է անորոշություն և անկայունություն առաջացնող

[75] Տե՛ս **Бауман З.,** Глобализация. Последствия для человека и общества, М., «Весь мир», 2004, էջ 87-88:

համաշխարհայնացմանը: Այս համատեքստում հարկ է նկատել, որ համաշխարհայնացման գործընթացները ներթափանցում են հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ առաջացնելով սոցիոմշակութային նոր և տարբեր կարգեր[76]:

Ուշագրավն այն է, որ նոր աշխարհակարգի ստեղծման գաղափարախոսության հիմքում ընկած են «հավաքական կյանքի» և «մրցակցող անհատականությունների» մշակույթների՝ իրար հակասող երկու սկզբունքներ, քանի որ համաշխարհայնացումը մի կողմից հավակնում է մարդկության ամբողջականացումը կառուցել հավաքական կյանքի մշակույթի սկզբունքի վրա՝ փաստելով, որ արդի հիմնախնդիրներն այնքան համընդգրկուն են, որ ազգ-պետության կառույցների որոշ գործառույթներ սահմանափակելու միջոցով է միայն հնարավոր ստեղծել մարդկության գոյատևման հուսալի և կառավարելի երաշխիքներ: Եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ «հավաքական կյանքի մշակույթը» ի վերջո դարձել է ամբողջատիրական և բռնատիրական հասարակարգերի քաղաքական իշխանության գաղափարական գլխավոր հիմունքներից մեկը, ապա դժվար չէ կռահել, որ արդի համաշխարհայնացման գաղափարախոսության մշակութային այդ հիմունքը վաղ թե ուշ կարող է դառնալ, եթե արդեն այդպիսին չէ, ամբողջատիրական համաշխարհային կարգի հիմունք: Մյուս կողմից, սակայն, համաշխարհայնացման նախագծի գործառնության հիմքում ընկած է տնտեսության կազմակերպման ու կանոնակարգման, ինչպես նաև հոգևոր ու քաղաքական կյանքի կազմակերպման «մրցակցող անհատականությունների» սկզբունքը[77]:

Համաշխարհայնացման արևմտյան նախագծի պարադոքսներից մեկն այն է, որ մի կողմից Արևմուտքի երկրների ներսում ղեկավարվում են ժողովրդավարության, բազմակարծության և հանդուրժողականության սկզբունքներով, իսկ մյուս կողմից՝ ոչ արևմտյան երկրների հետ փոխհարաբերություններում գերիշխանության և անհանդուրժողականության սկզբունքներով: Այս պարադոքսը նկատի ունենալով՝ ռուս տեսաբան Ա. Պանարինն իրավացիորեն նկատում է, որ համաշխարհայնացման երևույթն ունի երկու դեմք՝ արտաքին և ներքին: Արտաքին կողմն արտացոլում է

---

[76] Տե՛ս **Штомпка П.,** Социология социальных изменений, М., Аспект Пресс, 1996, էջ 130:

[77] Տե՛ս **Հարությունյան Է. Ա.,** Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Մակմիլան-Արմենիա, Եր., 2004, էջ 77-78:

ժամանակակից հումանիստական փիլիսոփայության բոլոր գաղափարները՝ զարգացում, ընդհանուր բարեկեցություն, մարդու իրավունքներ և այլն: Սակայն նրա ներքին կողմը, որը գաղտնի է պահվում հասարակության լայն զանգվածներից, բացահայտված լինելով՝ կարող է իսկական անորոշություն առաջացնել մարդկային գիտակցության մեջ[78]: Այստեղ հարկ է նկատել, որ ժամանակակից աշխարհի հասարակության հումանիստական ձեռքբերումները ոչ միշտ են համապատասխանում համաշխարհայնացման տրամաբանությանը: Առաջին հերթին դա վերաբերում է ժողովրդավարության գործածմանը կամ ժողովուրդների քաղաքական ինքնիշխանության կիրառմանը: Ժողովրդավարության պայմաններում իշխանության գործառույթներն իրականացնում են նրանք, որոնց ընտրել է ժողովուրդն իր կամքի ազատ արտահայտման միջոցով, և ժողովրդի ընտրյալները պարտավոր են իրականացնել ժողովրդի կամքը՝ ամբողջությամբ ղեկավարվելով նրա կողմից: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Պանարինը, ժամանակակից համաշխարհայնացման քաղաքականությունը ոչ մի ընդհանուր բան չունի ժողովրդավարության իրական նշանակության հետ, քանի որ գործարկվող համաշխարհայնացման քաղաքականությունը ենթադրում է, որ իշխանության իրական կենտրոններն իրենց որոշումները կայացնելիս ոչ թե ղեկավարվում են տեղական ընտրողների, այլ աշխարհի քաղաքական և տնտեսական հզոր ուժերի կամքով: Այս համատեքստում ժողովրդավարության, բազմակարծության և հանդուրժողականության սկզբունքներն արևմտյան հասարակության հիմնարար սկզբունքներից աստիճանաբար ավելի ու ավելի վերածվում են նպատակային գործիքների, որոնք կիրառվում են ընտրողաբար՝ ապահովելով սեփական շահերն ու անվտանգությունը՝ հիմք ընդունելով հետևյալ գաղափարը՝ ժողովրդավարության հիմքում ընկած են հարգանքը քաղաքացիական ազատությունների, խոսքի, սեփականության իրավունքի նկատմամբ:

3. Այլ տեսակետների նկատմամբ հարգանք:

Հանդուրժողականությունը նախ և առաջ հարգանք և համբերատար վերաբերմունք է այլոց կարծիքների, հայացքների, տեսակետների, գաղափարների

[78] Տե՛ս **Панарин А.,** Искушение глобализмом, М., Эксмо, 2003, էջ 6:

նկատմամբ, ինչը ենթադրում է գիտակցության որոշակի մակարդակ: Ռացիոնալ հանդուրժողականությունը երկխոսության, փոխզիջման և փոխըմբռնման գնալու գիտակցումն ու պատրաստակամությունն է: Ըստ հանդուրժողականության ռացիոնալ մոտեցման՝ յուրաքանչյուրն ազատ է իր ընտրության մեջ և իրավունք ունի ունենալու սեփական կարծիքը, որը կարող է տարբերվել համընդհանուր ընդունված տեսակետներից: Հանդուրժող մարդուն բնորոշ է հասկանալ ընդդիմախոսին և համագործակցել նրա հետ: Այս մոտեցման դեպքում երբևիցե չպետք է գերագնահատել սեփական կարծիքը՝ այն դիտելով որպես միակ ճշմարիտ, և արհամարհել այլոց կարծիքները: Պետք է գիտակցել, որ հատկապես արդի բազմաբևեռ աշխարհում բազմակարծությունն անհրաժեշտ և բնականոն երևույթ է, առանց որի անհնար է պատկերացնել առաջընթացի և զարգացման գաղափարները: Ռացիոնալ հանդուրժողականությունը ենթադրում է ալտրուիզմի և հումանիզմի դրսևորումներ՝ ձեռնպահ մնալով ամեն տեսակ եսակենտրոն, իշխանատենչ և ագրեսիվ դրսևորումներից:

Հանդուրժողականության վերոնշյալ երեք հիմնական տարատեսակները քաղաքացիական հասարակության սոցիալական նորմ և արժեք են, համաձայն որոնց՝ քաղաքացիները թեև ունեն քաղաքական ու սոցիալական տարբեր կողմնորոշումներ, բայց հանդուրժողականության շնորհիվ կարող են ապրել ներդաշնակ համակեցության պայմաններում:

Ասվածից հետևում է, որ քաղաքակրթական զարգացման նպատակներից մեկը քաղաքական երկխոսության հաստատումն է, քաղաքացիական հասարակության ձևավորումը. այնպիսի հասարակություն, որտեղ կլինի օրենքի գերակայություն և խոսքի ազատություն: Ժամանակակից աշխարհում քաղաքական երկխոսության ձևավորման անհրաժեշտությունը ստանում է առանձնակի կարևորություն, ինչի իրագործման համար հանդուրժողականության սկզբունքի որդեգրումը դառնում է անհրաժեշտ նախապայման: Քաղաքական երկխոսության ընթացքում հանդուրժողականության սկզբունքի որդեգրումը, սակայն, պետք է կանոնակարգվի, և հստակ սահմանագծվեն հանդուրժողականության դրսևորման պայմանները: Հակառակ դեպքում հանդուրժողականության անսահմանափակ կիրառման դեպքում

քաղաքական համակարգը կարող է կորցնել իր ամբողջականության պահպանման համար անհրաժեշտ դիմադրողականությունը և ի վերջո փլուզվել: Անշուշտ քաղաքական մշակույթի կայացման համար հանդուրժողականության սզբունքն անհրաժեշտ նախապայման է: Սակայն հանդուրժողականությունը քաղաքական մշակույթի կառուցողական տարր է միայն այն ժամանակ, երբ հստակեցվում և կանոնակարգվում են վերջինիս դրսևորման սահմաններն ու պայմանները:

2.2. Հանդուրժողականության հիմնախնդիրը ազատական-ժողովրդավարական արժեքների համակարգում

Արդի աշխարհի ժողովրդավարացման միտումները կարծես թե այլևս չունեն պատմական այլընտրանք: Խորհրդային Միության փլուզմանը հետևած երկբևեռ աշխարհակարգի կազմաքանդմանը հաջորդեց համաշխարհային մի գործընթաց, որի նպատակն աշխարհում միատարր քաղաքական համակարգի հաստատումն է՝ հիմնված ժողովրդավարական և ազատական արժեհամակարգի վրա: Ամերիկացի հայտնի տեսաբան Ֆ. Ֆուկույաման պատկերավոր կերպով այս գործընթացը կապեց «պատմության ավարտի» հետ, այսինքն՝ մի վիճակ, երբ հակամարտության բևեռները չքացել են, աշխարհը շարժվում է զարգացման մի ուղղությամբ (ազատական-ժողովրդավարության հաստատման ուղղությամբ): Սակայն, ժամանակակից աշխարհին բնորոշ քաղաքական և քաղաքակրթական գործընթացները վկայում են, որ դեռևս վաղ է խոսել «պատմության ավարտի» մասին: Եթե մի կողմից աշխարհը շարժվում է գլոբալացման ուղղությամբ, ապա մյուս կողմից էլ հայտնվում են աշխարհաքաղաքական նոր կազմավորումներ, որոնք երբեմն համախմբված են լինում մեկ կենտրոնական գերտերության շուրջը: Եթե ազատական-ժողովրդավարության հաստատման լոկոմոտիվ պետությունը ԱՄՆ-ն է, ապա այս գործընթացին հակադրվում են ռեգիոնալ գերտերությունից համաշխարհայինի վերածվող ՌԴ-ն և տնտեսական թռիչքաձև զարգացում ապրող Չինաստանը: Այժմ արդեն աշխարհը միաբևեռությունից անցում է կատարում բազմաբևեռությանը: Սակայն, այնուամենայնիվ, ժողովրդավարությունը դեռևս հանդիսանում է ձգողության այն կենտրոնը, որի կայացմանն են ձգտում զարգացող պետություններից շատերը (այդ թվում նաև ՀՀ-ն): Աշխարհաքաղաքական և ներքաղաքական հիշյալ գործընթացների համատեքստում հանդուրժողականության կայացման խնդիրը հայտնվել է տեսաբանների ուշադրության կենտրոնում, քանզի օրեցօր մեծանում է հանդուրժողականության սկզբունքով առաջնորդվող քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ ներքաղաքական հարաբերություններում: Հանդուրժողականությունն այս առումով և՛ ազատական-ժողովրդավարության

անկյունաքարային արժեքներից է, և՛ ազատական-ժողովրդավարության հաստատման կարևոր պայման է:

Արդի քաղաքական գործընթացներում մեծ է հատկապես քաղաքակրթական զարգացումների ազդեցությունը, մասնավորապես քաղաքական գործընթացներում տեղեկատվական-ցանցային հասարակության հաստատման ազդեցությունը: Ամերիկացի տեսաբան Ֆ. Ֆուկույաման իրավացիորեն նկատում է, որ ներկայիս տեղեկատվական դարաշրջանում ժողովրդավարությանը լուրջ մարտահրավեր է նետված՝ պահպանել հասարակական կարգը ժամանակակից տեխնոլոգիական և տնտեսական փոփոխությունների պայմաններում: Նախորդ դարի 70-ականներից մինչև 90-ական թվականների սկիզբը ամբողջ Լատինական Ամերիկայի, Եվրոպայի, Ասիայի և նախկին հետխորհրդային երկրներում սկսվում է քաղաքակրթական մի նոր ալիք, որին Թոֆլերը տվեց «երրորդ ալիք» անվանումը, որի համար բնութագրական է տեղեկատվության դերի և ազդեցության տարածումն ու ընդլայնումը[79]: Քաղաքակրթական երրորդ ալիքի շրջանակներում տեղի ունեցող մի շարք փոփոխությունները ենթադրում են նոր սոցիալական, քաղաքական, տնտեսական համակարգերի ստեղծում: Մասնավորապես՝ քաղաքակրթական հիշյալ փոփոխություններին հաջորդում է ազատական- ժողովրդավարական քաղաքական համակարգերի հաստատումը կամ հաստատման փորձերը այս կամ այն հասարակություններում և պետություններում: Տեղեկատվական քաղաքակրթության պայմաններում հասարակությունները, որոնք հենվում են տեղեկատվության դերի ինտենսիվացման վրա, ավելի ու ավելի են կարևորում ազատության և հավասարության սկզբունքների նշանակությունը սոցիոմշակութային հարաբերությունների հաստատման գործում. արժեքներ, որոնք ընկած են ազատական ժողովրդավարության արժեհամակարգի հիմքում: Փաստորեն տեղեկատվական քաղաքակրթության կայացումը նպաստում է ազատական-ժողովրդավարական քաղաքական համակարգերի կայացմանը: Սակայն, միևնույն ժամանակ ժողովրդավարության և ազատականության արժեքային ներուժն անմիջականորեն պայմանավորված է մարդկային մի շարք որակներից՝ մարդու և հասարակության

[79] Տե՛ս **Фукуяма Ф.,** Великий разрыв, М., АСТ: АСТ МОСКВА, 2008, էջ 21:

հոգևոր բնույթից, ինքնակառավարման և ինքնակազմակերպման ունակությունից, բարոյական գիտակցությունից և բազմաթիվ այլ գործոններից[80]: Ընդ որում մարդկային գործոնը կարող է ինչպես դրական ազդեցություն ունենալ ազատական-ժողովրդավարական արժեքների հաստատման գործընթացի վրա, այնպես էլ՝ մի շարք բացասական հետևանքներ: Մասնավորապես՝ վտանգ կա, որ ժամանակակից ազատական ժողովրդավարությունը կարող է ծայրահեղ անհատականացման զոհ դառնալ: Ի տարբերություն նախկին ավանդական հասարակությունների (ավանդական հասարակություններում մարդիկ ունեին ընտրության բավական սահմանափակ հնարավորություններ)՝ արդի հասարակություններում անհատի ազատության սահմաններն ակնհայտորեն ընդլայնվել են: Ազատականության տեսության արդի մոտեցման համաձայն՝ եկեղեցու, պետության, քաղաքացիական հասարակության և սոցիալական այլ ինստիտուտների գործառույթները տարբերվում և առանձնացվում են իրարից, որոնց միջև փոխհարաբերությունները կարգավորվում են հանդուրժողականության սկզբունքով: Այլ կերպ ասած՝ ազատական ժողովրդավարության կայացումն ու սոցիոմշակութային հարաբերությունների անհատականացումը փոխպայմանավորող գործընթացներ են: Անհատականացման նման սկզբունքների վրա ձևավորված հասարակությունում դժվար է խոսել ազատական-ժողովրդավարական պետությունների կայացման այլընտրանքային արժեքների՝ որպես ժամանակակից հասարակության կառուցարկման մեխանիզմի մասին[81]:

Ազատական-ժողովրդավարական սկզբունքներով սոցիոմշակութային տարածության կառուցարկումն անմիջականորեն պայմանավորված է քաղաքական և տնտեսական իշխանությունների տարանջատման, անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանության, քաղաքացիական հասարակության ձևավորման հանգամանքներով, որոնք հնարավոր է իրականացնել ազատական-ժողովրդավարական արժեքների գերակայության պայմաններում: Ազատական-ժողովրդավարական արժեքներն իրենց հերթին ենթադրում են հանդուրժողականության՝ որպես անհրաժեշտ նորմի կիրառումը և հաստատումը

[80] Տե՛ս **Бердяев Н.,** Судьба России. Самосознание, Ростов-на-Дону, изд-во «Феникс», 1997, էջ 195:
[81] Տե՛ս **Фукуяма Ф.,** Великий разрыв, М., АСТ: АСТ МОСКВА, 2008, էջ 21-22:

հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, որպես սոցիալական իրականության կառուցարկման կարևոր նախապայման և բազմազանության հաստատման և պահպանման միջոց: Ազատական-ժողովրդավարական քաղաքական համակարգի պայմաններում, որը հիմնված է բաց հասարակության արժեհամակարգի հիմքի վրա, քաղաքական գործընթացների վրա ազդեցություն կարող է ունենալ ոչ միայն մեծամասնությունը, ինչպես որ ենթադրվում է ժողովրդավարության պայմաններում, այլ նաև այս կամ այն փոքրամասնությունները, որոնց կարծիքներն ու դիրքորոշումները ոչ պակաս կարևոր են, քան մեծամասնության կամքը: Ազատական ժողովրդավարության պայմաններում հանդուրժողականությունը կարևոր տեղ է զբաղեցնում, քանզի քաղաքական գործընթացներին փոքրամասնության ներառվածության ապահովումը հնարավոր է միայն մեծամասնության կողմից փոքրամասնության նկատմամբ հանդուրժողական և հաշվետվողական դիրքորոշման պայմաններում, ուստի ազատական ժողովրդավարության պայմաններում հանդուրժողականությունը անկյունաքարային արժեքներից և սոցիալ-քաղաքական կյանքի կազմակերպման մեխանիզմներից է: Այս համատեքստում հարկ է նկատել, որ քաղաքական հանդուրժողականությունը հնարավոր դարձավ միայն ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման պայմաններում[82]: Հանդուրժողականության դերի կարևորումն ազատական-ժողովդրավարական քաղաքական համակարգի կայացման համատեքստում ինքնին հասկանալի է, քանի որ մեծամասնության իշխանությունը (ժողովրդավարություն) դեռևս չի երաշխավորում փոքրամասնությունների ներառվածությունը քաղաքական և սոցիալական գործընթացներում: Ժողովրդավարական քաղաքական համակարգի պայմաններում ներկայացված են հասարակության մեծամասնության շահերը, մինչդեռ ազատական-ժողովրդավարական քաղաքական համակարգի պայմաններում հաշվի են առնվում նաև այս կամ այն փոքրամասնությունների շահերն ու պահանջները: Ազատական-ժողովրդավարական քաղաքական համակարգում անհատ-քաղաքացու իրավունքների ու պահանջների իրացման գրավականը հանդուրժողականության սկզբունքի առաջնայնության ընդունումն է: Պատահական չէ, որ արդի քաղաքակրթության

[82] Տե՛ս **Widmalm S.,** Political tolerance in the global South, Routledge, Taylor and Francis group, London-New York, 2016, էջ 19:

ներկայացուցիչ զարգացած պետությունների հասարակական-քաղաքական գործիչներն ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում հասարակության անդամների միջև հանդուրժողականության հաստատման կարևորության խնդրին:

Այն հարցին, թե ի՞նչն է Եվրոպայում ապահովում բազմազանության գոյությունը, Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելը 2007թ. հունվարի 17-ին Ստրասբուրգում տեղի ունեցած իր ելույթում նշում է, որ ազատությունն է այն արժեքը, որը հնարավոր է դարձնում բազմազանության գոյությունը, այնուհետև հավելում է. «Հանդուրժողականությունը Եվրոպայի ոգին է: Եվրոպան հանդուրժողականության աշխարհամասն է: Հանդուրժողականությունն իր «մահվան դատավճիռը» կկայացնի, եթե չպաշտպանվի անհանդուրժողականությունից: Եվրոպական միության մեծագույն նպատակն է ներդաշնակության ապահովումը տարբեր ազգերի միջև՝ միասնություն բազմազանության մեջ, ինչն էլ հնարավոր է հանդուրժողականության միջոցով»[83]: Այսինքն՝ ազատությունը բազմազանության գլխավոր նախապայմանն է իր բոլոր դրսևորումներով: Մարդը լիովին ազատ է իր կարծիքների արտահայտման մեջ նույնիսկ բոլոր այն դեպքերում, երբ իր տեսակետներն ուրիշների կողմից հավանության չեն արժանանում, և նման բազմազանության և ազատության ապահովումը հնարավոր է հանդուրժողականության սկզբունքի առկայության պայմաններում:

Ժամանակակից ժողովրդավարական պետությունները հանդես են գալիս մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ, նպաստում են մշակութային բազմազանությանը, մրցակցությանը, այսինքն՝ հասարակության մեջ հաստատում են բազմակարծության հավասարակշռություն: Սակայն, երբ հասարակության մեջ հաստատված այդ բազմակարծության հավասարակշռությունը ճգնաժամային փուլում է հայտնվում, ժողովրդավարական պետությունը պարտավորվում է միջամտել, վերականգնել, կարգ ու կանոն հաստատել և ստիպել բոլորին հետևել համընդհանուր «խաղի կանոններին»: Այս կանոններից մեկն էլ հենց

[83] Speech by Angela Merkel, Chancellor of the Federal Republic of Germany, to the European Parliament in Strasburg on Wednesday, 17 January 2007, http://www.eu2007.de/en/News/Speeches_Interviews/January/Rede_Bundeskanzlerin2.html (01.10.2016).

հանդուրժողականությունն է[84]: Առաջին հայացքից կարելի է կարծել, որ ժողովրդավարությունն ու հանդուրժողականությունը փոխպայմանավորված են մեկը մյուսով. եթե տվյալ սոցիալական համակարգում գերիշխում են ժողովրդավարական արժեքներ, ապա այդտեղ գերիշխում է նաև հանդուրժողականության սկզբունքը և հակառակը: Ժողովրդավարությունը հանգեցնում է հանդուրժողականության, իսկ հանդուրժողականությունը՝ ժողովրդավարության[85]: Արդի ազատական-ժողովրդավարական քաղաքական համակարգի և բազմամշակութային սոցիալական համակարգի կայացման համատեքստում հանդուրժողականությունը նպաստում է ժողովրդավարական կենսակերպի զարգացմանն ու ընդլայնմանը: Ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթի համատեքստում հանդուրժողականությունն իրապես կարևոր արժեք և բնութագրիչ է, որի առկայությունը խոսում է քաղաքական համակարգի բովանդակության մասին: Ժողովրդավարական քաղաքական կազմակերպում ունեցող հասարակություններում (ինչպիսին պետք է լիներ նաև մերը) ենթադրվում է, որ տվյալ հասարակության քաղաքական կյանքի կազմակերպման գործընթացներին պետք է մասնակցություն ունենան հասարակության բոլոր անդամները: Իսկ ինչպես հայտնի է, հասարակությունը ամենևին էլ միատարր համակարգ չէ, և այնտեղ մի որևէ էական հարցի շուրջ կարող են լինել ինչպես միմյանց հետ համընկնող, այնպես էլ՝ հակադիր կարծիքներ: Եվ այդ կարծիքների հակադրությունն ու բազմազանությունը ստեղծում են բազմաթիվ կոնֆլիկտային իրավիճակներ, ինչը վերաբերում է հատկապես քաղաքական համակարգին, որտեղ քաղաքական գործիչների որևէ կարծիքի և դիրքորոշման արտահայտման հանգամանքից կախված են բազում տնտեսական և քաղաքական շահեր, ուստիև՝ բազում վտանգներ: Քաղաքական կոնֆլիկտների հաղթահարման՝ հանդուրժողականության մեխանիզմն այս առումով շատ կարևոր գործիք է քաղաքական կյանքին հանրության ներառվածությունն ապահովելու համար: Միմյանց կարծիքների և մոտեցումների նկատմամբ հանդուրժողականության մշակույթը հասարակության մեջ տարբեր կարծիքների առկայության հնարավորություն է տալիս, ինչն էլ արդեն ապահովում է հասարակության բոլոր անդամների

[84] Տե՛ս **Гречко П**., О границах толерантности, Свободная мысль- XXI. № 10, М., 2005, էջ 176-177:
[85] Տե՛ս **Шипилов А.Б.,** նշվ. աշխ., էջ 40:

ներառվածությունը հասարակական կյանքի կազմակերպման, քաղաքական որոշումների կայացման գործում: Ժողովրդավարական ժամանակակից պետություններում հանդուրժողականությունը հավասարակշռության ապահովման, խաղաղ գոյակցման, քաղաքական մշակույթի կարևոր տարր է: Ըստ էության ժողովրդավարական քաղաքական մշակույթ ունեցող հասարակություններում, որպես սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ կարևոր սկզբունքներ, ընկած են երկխոսության, քաղաքացիական համաձայնության նորմերը: Բանն այն է, որ տվյալ տեսակի հասարակություններում որոշումների կայացումն իրականանում է մեծամասնության կամքով (կամ գոնե պետք է այդպես լինի), և այս դեպքում մշտապես առկա է որևէ խնդրի շուրջ փոքրամասնություն դարձած խմբի նկատմամբ անհանդուրժողական մոտեցում ցուցաբերելու վտանգը, ինչը կարող է սպառնալ սոցիալական խաղաղ համակեցությանը: Եվ այստեղ ահա հանդուրժողականությունը դառնում է ժողովրդավարության կայացման և զարգացման կարևոր նախապայման, քանզի միայն այդ դեպքում է, որ և՛ հնարավոր է մեծամասնության իշխանության հաստատումը, և՛ փոքրամասնության հետ մեծամասնության փոխհամաձայնեցված գործունեությունը:

Ֆ. Ֆուկույամայի կարծիքով՝ ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում գերակայում է կյանքի բոլոր ձևերի և արժեքների հավասարության նկատմամբ հավատը[86]: Պատմական փորձը ցույց է տալիս, որ կյանքի կազմակերպման այս կամ այն կենսիմաստային ուղղորդիչներին գերակայություն տվող գաղափարախոսությունների մարմնավորումն ի վերջո հանգեցրել է մարդկային բազում տառապանքների և արհավիրքների, ինչի մասին են վկայում ֆաշիստական, կոմունիստական, անգամ էգալիտարիստական գաղափարախոսությունների՝ սոցիալական կյանքում մարմնավորման փորձերը: Ըստ էության այս կամ այն արժեհամակարգին գերակայություն տվող գաղափարախոսությունների ջատագովներն այդպես էլ չկարողացան ապացուցել իրենց գաղափարախոսությունների իրավացիությունն ու արժեքավորությունը: Հիշյալ մոտեցման համատեքստում կյանքի կազմակերպման բոլոր

[86] Տե՛ս **Фукуяма Ф.**, Конец истории и последный человек, М., АСТ МОСКВА, Полиграфиздат, 2010, էջ 453-454:

գաղափարախոսություններն ու արժեհամակարգերը համահարթեցվում են, և որևէ արժեհամակարգ կամ գաղափարախոսություն չի կարող գերակայություն ունենալ այլոց նկատմամբ: Իսկ եթե որևէ գաղափարախոսություն կամ արժեհամակարգ չի կարող գերակայել այլոց նկատմամբ, ապա համահարթեցվում են բոլոր արժեքներն ու կենսիմաստային ուղղորդիչները: Այս համատեքստում հանդուրժողականությունն ազատական ժողովրդավարության բաղադրիչ արժեքներից է, քանզի արժեհամակարգային համահավասարության պայմաններում սոցիալական կյանքի ներդաշնակության ապահովման համար անհրաժեշտ է հաշվի նստել այլ կարծիքների և արժեհամակարգերի «գոյության իրավունքի» հետ: Այլ կերպ ասած՝ ազատական ժողովրդավարությունում գործում է բազմազանության սկզբունքի վրա հիմնված քաղաքական մշակույթը:

Հարկ է նկատել, որ պլյուրալիստական քաղաքական մշակույթը կարող է կայանալ միայն հետևյալ սոցիոմշակութային գործոնների առկայության դեպքում.

- տնտեսական և սոցիալական կյանքում բազմազանության առկայություն, որի պայմաններում առկա են սեփականության տարբեր ձևեր (հատկապես մասնավոր սեփականության), ինչը նպաստում է տնտեսական կյանքում տնտեսապես անկախ սուբյեկտների ներգրավվածությանը;

- քաղաքացիական հասարակության գերակայություն, ինչի պայմաններում քաղաքացիական հասարակությունն ինքն է որոշում, թե սոցիալական և քաղաքական կյանքի կազմակերպման գործում որքան արտոնություններով օժտի պետությանը, և որքան գործառույթներ իրականացնի ինքնուրույն;

- քաղաքական կազմակերպությունների և կուսակցությունների միջև պետության և հասարակության զարգացման, պետական և քաղաքական իդեալների, արժեքների շուրջ համաձայնության առկայություն;

- անհատի իրավական և փաստացի ինքնուրույնության ապահովվածություն[87]:

Ինչպես տեսնում ենք, հանդուրժողականությունը ժողովրդավարության, մշակութային և քաղաքական բազմակարծության, քաղաքացիական հասարակության, անհատի ինքնուրույնության անբաժանելի մաս է: Այն ժողովրդավարական

[87] Տե՛ս **Фарушкин М.Х., Юртаев А.Н.,** От культуры конфронтации к культуре диалога, Политические исследования. «Полис», № 3, М., 1992, էջ 150:

քաղաքական համակարգի առանցքային բնութագրիչներից մեկն է: Ընդ որում բազմաբևեռ և բազմակարծիքային աշխարհում հանդուրժողականությունը ոչ միայն պարզապես կույր համաձայնություն է այլոց կարծիքների հետ, այլ գիտակից ընդունումն է այն բանի, որ բազմաթիվ տեսակետների գոյությունը պարզապես անխուսափելի և անհրաժեշտ է:

Առաջին հայացքից թվում է, թե արդի ազատական-ժողովրդավարական արժեքները մարդկության համատեղ խաղաղ գոյակցման կարևորագույն նախապայման և ժամանակակից աշխարհի մեծագույն ձեռքբերումներ են: Սակայն, հարց է ծագում. հնարավոր է արդյո՞ք ամբողջ աշխարհին պարտադրել ազատական-ժողովրդավարական արժեքները՝ որպես արդի համաշխարհայնացման պայմաններում սոցիոմշակութային տարբեր կարգեր ունեցող հասարակությունների համատեղ գոյության կարևոր պայման: Իշխանության ձևավորման պլյուրալիստական հայեցակարգն արտահայտում է ժողովրդավարության դասական ըմբռնման էությունը, ըստ որի՝ ամեն մի քաղաքացի ունի քաղաքական գործընթացներին մասնակցելու իրավունք (մասնակցության իրավունք)՝ սակայն հաճախ չբացահայտելով այդ մասնակցության կոնկրետ ձևն ու մեխանիզմը: Առավել ևս, որ մասնակցության իրավունքից չի բխում, որ քաղաքացին ստացել է իր տեսակետը կյանքի կոչելու «պարտադիր երաշխիք»[88]: Պլյուրալիստական քաղաքական մշակույթն անշուշտ ապահովում է քաղաքական գործընթացներին հասարակության բոլոր անդամ-քաղաքացիների մասնակցության իրավունքը, սակայն համաշխարհայնացման արդի գործընթացների պայմաններում պլյուրալիստական քաղաքական մշակույթի տարածումը հաճախ չի ընդունում քաղաքական մշակույթի որևէ այլընտրանքային մոդել: Բազմաբևեռության և պլյուրալիզմի քողի տակ համաշխարհայնացման ջատագովները հաճախ տուրք են տալիս ոչ կառուցողական մեթոդների կիրառմանը: Ազատական-ժողովրդավարական քաղաքական համակարգը մի կողմից հանդուրժում է քաղաքական բազմազանությունն ու բազմակարծությունը, մյուս կողմից էլ չի հանդուրժում քաղաքական գործընթացների զարգացման այլընտրանքային տարբերակները: Բանն այն է, որ բազմազանության և բազմակարծության

[88] Տե՛ս **Հարությունյան Է. Ա.**, Հնարավորությունների հավասարություն և շահերի հավասարակշռություն, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 141.4, Եր., 2013, էջ 9:

սկզբունքներով առաջնորդվող ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթը հիշյալ սկզբունքների կիրառումը ընդունում է հիմնականում ներքաղաքական գործընթացների համատեքստում, մինչդեռ արտաքին քաղաքական գործընթացներում հաճախ հանդուրժողականությունն ու բազմազակարծիքայնությունը մղվում են ետին պլան:

Արդի աշխարհի բազմազանության պայմաններում ազատական-ժողովրդավարական արժեքները չեն կարող համընդհանուր բնույթ կրել: Առաջին հերթին միշտ չէ, որ ազատական-ժողովրդավարական արժեքներ քարոզող հասարակությունները հենց իրենք էլ գործում են այդ սկզբունքներին համապատասխան, ինչի մասին են փաստում արդի աշխարհում պարբերաբար տեղի ունեցող պատերազմները, ահաբեկչությունները, բռնությունները, կոնֆլիկտները, որոնք ուղեկցում են ազատական ժողովրդավարության «արտահանմանը» արդիականացված-զարգացած երկրներից դեպի զարգացող երկրներ: Ազատական-ժողովրդավարական արժեքներ քարոզող որոշ պետություններ, ելնելով սեփական շահերից և զավթողական նկրտումներից, երբեմն հենց իրենք են հրահրում պատերազմներ և կոնֆլիկտային իրավիճակներ՝ ակնհայտ «բռնությունները» որակելով որպես խաղաղության հաստատման հիմնական միջոց:

Թվում է, թե ազատական ժողովրդավարության գաղափարախոսությամբ համաշխարհայնացվող արդի աշխարհում ոչ բռնության, հանդուրժողականության իդեալները պետք է ընկած լինեին ժողովրդավարական, արդիականացված և զարգացած պետությունների քաղաքական մշակույթի հիմքում: Սակայն արդի աշխարհին բնորոշ ինչպես քաղաքական, այնպես էլ քաղաքակրթական մի շարք առանձնահատկությունների պատճառով բռնության հաղթահարման խնդիրը ոչ միայն օրակարգային չէ, այլև ավելի ու ավելի հաճախ բռնությունը դիտվում է որպես քաղաքական և պետական այլ միավորների հետ խնդիրների լուծման հիմնական եղանակ: Հարկ է նկատել, որ քաղաքական գործընթացները նախ «սպասարկում» են քաղաքակրթական մարտահրավերների հաղթահարման պահանջները: Մասնավորապես արդի աշխարհում ընթացող քաղաքական-ռազմական գործընթացների հիմքում հաճախ ընկած է սպառողական հասարակությանը

նյութական բարիքներով և միջոցներով ապահովելու մղումը: Պատահական չէ, որ ֆրանսիացի հայտնի մտածող Բոդրիարը, խոսելով սպառողական հասարակության կայացման և բռնության դրսևորումների ինտենսիվացման միջև հարաբերակցության մասին, նշում է, որ արդի աշխարհում նյութական արտադրությունը և սպառումը նպաստում են ապակառուցողականության տարածմանը[89]: Սպառողական հասարակության առանձնահատկություններից մեկն էլ, ի թիվս այլոց, համբերատարության՝ որպես վարքի կարգավորիչ նորմերի նկատմամբ «պահանջարկի» բացակայությունն է: «Սպասում և հետաձգում պահանջող հատուցումն անցանկալի է, կյանքն ընկալվում է որպես մեծ խաղատուն, որտեղ խաղադրույքը երաշխավորված շահում-հատուցում պետք է ապահովի և լինի վայրկենական»[90]:

Ժամանակակից աշխարհում ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթը համագոյակցում է ոչ միայն սպառողական հասարակության սոցիոմշակութային կարգերի, այլև արդի քաղաքակրթությանը բնորոշ տեխնոլոգիական աննախադեպ զարգացման հետևանքով ձևավորված սոցիոմշակութային նոր միջավայրի հետ: Սպառողականության աճին զուգահեռ աճում են նաև սպառողական արտադրանք ստեղծելու տեխնոլոգիական հնարավորությունները: Սակայն, ինչպես նկատում է հայազգի սոցիալական հոգեբան և փիլիսոփա Հ. Նազարեթյանը՝ արդի աշխարհում սպառողականության և տեխնոլոգիական հագեցվածության զարգացմանը համընթաց չի զարգանում մարդկության հոգևոր-հումանիստական մշակույթը, ինչը հանգեցնում է այսպես կոչված «տեխնո-հումանիտար զարգացման հավասարակշռության» խախտմանը: Սպառողականության և նյութական բարեկեցության աճի պայմաններում «մարդկային լայն զանգվածներին իշխում է «մանր պատերազմների» իրագործման մոլուցքը և նորանոր թշնամիներ ձեռք բերելու անհրաժեշտությունը»[91]: Այլ կերպ ասած՝ որքան մեծանում են սպառողականության հնարավորություններն ու նյութական բարեկեցության մակարդակը, այնքան ավելի է մեծանում իրավիճակից դժգոհության

---

[89] Տե՛ս **Бодрийяр Ж.**, Символический обмен и смерть, М., Добросвет, 2000, էջ 312-313:

[90] **Սողոմոնյան Գ. Ա.**, Անհապաղը որպես արդիականության կառուցարկման սոցիոմշակութայն ֆենոմեն, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 139.4, Եր., 2013, էջ 13:

[91] Տե՛ս **Назаретян А. П.,** Антропология насилия и культура самоорганизации: Очерки по эволюционно-исторической психологии. М., издательство ЛКИ, 2007, էջ 66-67:

մակարդակը, ինչի պայմաններում մարդիկ ավելի ու ավելի են հակվում ապակառուցողականությանն ու բռնության զանազան դրսևորումներին: Փաստորեն ազատական-ժողովրդավարության քաղաքական մշակույթի հաստատումը տեղի է ունենում այնպիսի սոցիոմշակութային տարածությունում, որի ներքին գործառնական տրամաբանությունը «նպաստում» է բռնության տարբեր դրսևորումների ի հայտ գալուն (ահաբեկչություն, ծայրահեղականություն, պատերազմ և այլն):

Ընդհանրապես բռնությամբ է ուղեկցվել և՛ մարդկության պատմության ընթացքը, ինչի մասին են վկայում բազում մարդկանց կյանքեր խլած պատերազմները, ցեղասպանությունները, և՛ առանձին մարդու կյանքը, ինչի մասին են վկայում առօրյայում հանդիպող հանցագործությունները, մարդկային ագրեսիայի այլ դրսևորումները: Ինչ-որ իմաստով զարգացման «կենդանական» մակարդակում բռնությունը մարդու բնական վիճակն է, անհատների միջև շփման բնական ճանապարհը[92]: Ինչպես մարդու սոցիալականացումը, մշակութայնացումը, այնպես էլ քաղաքակրթության ծագումը պայմանավորված է իր «կենդանական» սկզբին բնորոշ ագրեսիայի, բռնության նկատմամբ հակվածության հաղթահարմամբ: Այս իմաստով քաղաքակրթության և մարդու պատմությունը բռնություն-ոչ բռնություն հասկացությունների դիալեկտիկական հարաբերակցության ընթացք է:

Բարոյագետ և փիլիսոփա Ա. Հուսեյնովն իր «Բռնություն և ոչ բռնություն» և «Ոչ բռնություն» հայտնի հոդվածներում վերլուծել է այս երկու հասկացությունները՝ պարզելու, թե արդյո՞ք բռնությունը և ոչ բռնությունը գտնվում են միասնական դիալեկտիկական կապի մեջ, թե համարվում են միևնույն գործընթացի զարգացման տարբեր և հակադիր բևեռներ: Նա գտնում է, որ բարոյագիտության տեսանկյունից թերի է մարդուն դիտարկել և՛ որպես բարին գործող էակ, որը հակված է ոչ բռնության էթիկային, կառուցողական երկխոսության և փոխհամաձայնության հաստատմանը, և՛ որպես չարը գործող էակ, որի գործողությունների հիմքում ընկած է միայն սեփական եսասիրական, հաճույքապաշտական կամ անձնակենտրոն շահերն ու նպատակադրությունները: Ըստ Հուսեյնովի՝ մարդու իրական բարոյական նկարագիրը երկակիությունն է, այսինքն՝ մարդը միաժամանակ «չար» և «բարի» սկիզբների

[92] Տե՛ս **Губин В. Д.,** Русская культура и феномен насилия, Вопросы философии. Российская академия наук. Наука, № 5, М., 1995, էջ 3:

ամբողջականություն է[93]: Մարդու բարոյական երկակիությունից էլ բխում է նրա ազատությունը, այսինքն՝ մարդն ազատ է ընտրելու, թե կոնկրետ իրավիճակներում ինչ վարք կարող է դրսևորել:

Բռնություն հասկացության սահմանումը հատկապես կարևորվում է, երբ այն դիտարկում ենք իշխանության և քաղաքական գործընթացների համատեքստում: Լայն իմաստով իշխանությունն ուրիշի փոխարեն որոշումների կայացման միջոց է, իսկ քաղաքականությունը այդ միջոցին հասնելու նպատակաուղղված գործունեության դաշտ: Արդի քաղաքական գործընթացների համատեքստում, որտեղ գործում են քաղաքական գործընթացների ժողովրդավարացման և ազատականացման միտումները, շատ կարևոր է հստակեցնել, թե պետության իրականացրած գործողություններից որոնք կարող են որակվել որպես բռնություն, և որոնք՝ ոչ: Քաղաքական գործընթացների համատեքստում բռնությունը որոշ անհատների գերիշխանությունն է ուրիշների նկատմամբ՝ հիմնված արտաքին հարկադրանքի վրա: Իշխանության յուրաքանչյուր տեսակ յուրօրինակ աստիճանակարգային համակարգ է, որը հիմնված է բռնության լեգիտիմ կամ ոչ լեգիտիմ դրսևորումների վրա: Լավագույն դեպքում այն կարող է հիմնված լինել երկխոսության, համաձայնության սկզբունքների վրա: Սակայն իշխանությունը կարող է հիմնված լինել նաև արտաքին հարկադրանքի վրա, որի դեպքում մենք արդեն գործ ունենք բացահայտ բռնության հետ[94]: Այս առումով ռուս մեծանուն մտածող Տոլստոյը նկատում է, որ կառավարիչները բռնությամբ փորձում են մարդկանց ստիպել ապրել առաքինի կյանքով, մինչդեռ նրանք այդ բռնությամբ մարդկանց ցույց են տալիս հակառակը[95]:

Ժամանակակից աշխարհում օրեցօր ավելի արդիական է դառնում բռնության անհարկի, չհամաձայնեցված կիրառման ցանկացած հնարավորության բացառումը, քանզի հասարակության մեծամասնության արդարացումն ու փոքրամասնության համաձայնությունը չվայելող բռնության ցանկացած դեպք, որի հեղինակը կարող է լինել անգամ պետությունը, ծնում է էլ ավելի ապակառուցողական հետևանքներ, քան այն, ինչի հաղթահարմանը կարող էր ուղղված լինել բռնության տվյալ կիրառումը:

---

[93] Տե՛ս **Гусейнов А. А.,** Понятия насилия и ненасилия, Вопросы философии, Наука, № 6, М., 1994, էջ 35-36:

[94] Տե՛ս **Гусейнов А. А.,** Моральная демагогия, как форма анологии насилия. Вопросы философии. Российская академия наук. Наука, № 5, М., 1995, էջ 9:

[95] Տե՛ս **Толстой Л. Н**., Путь жизни: сборник, М., Республика, 1993, էջ 167:

Այստեղ կարող է հարց ծագել, թե ինչ կլինի բոլոր այն դեպքերում, երբ կառավարիչն այնպիսի բան հրամայի, որն անընդունելի և անօրինական է տվյալ հասարակության սոցիոմշակութային կարգի տեսանկյունից: Ջ. Լոկն այս հարցին պատասխանում է հետևյալ կերպ. «Եթե կառավարումն իրականացվում է արդար, և կառավարչի խորհուրդներն ուղղված են համընդհանուր բարիքի և համաձայնության ձեռքբերմանը, ապա այնքան էլ հավանական չեն կառավարչի անօրինական գործողությունները, հակառակ դեպքում վերջինս պետք է ենթարկվի պատասխանատվության»[96]: Այնուամենայնիվ, բռնության կիրառման դեպքերն ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական մակարդակներում (հատկապես սոցիալական-ինստիտուցիոնալացված բռնության կիրառման դեպքերում) հաճախ «արդարացվում» են այն հանգամանքով, որ բռնության կիրառումը հետապնդում է «արդար» և «առաքինի» նպատակներ: Հայտնի բարոյագետ և փիլիսոփա Ա. Հուսեյնովը բռնության արդարացման նման մոտեցումները բացատրում է մարդու՝ ինքն իրեն բարոյական ներկայանալու հակվածությամբ, այնուհետև պնդում է, որ բռնության կիրառումը կարելի է «արդարացնել» միայն քաղաքական կամ տնտեսական ինչ-ինչ շահերից կամ նպատակադրություններից ելնելով, սակայն ոչ երբեք բարոյական հիմնավորումներով[97]:

Փաստորեն բարոյականության տեսանկյունից որևէ կերպ հնարավոր չէ արդարացնել բռնության կիրառումը: Բռնության կիրառմանը հակադրվում է ոչ բռնության էթիկան, որը Ա. Հուսեյնովի մեկնաբանմամբ «ինքնանպատակ» վարքի ձև է[98]: Ոչ բռնության էթիկան ժամանակակից աշխարհում ունի ոչ միայն տեսական, այլև բավականին կիրառական նշանակություն: Ոչ բռնության էթիկայի փիլիսոփայության վրա են հիմնված ինչպես մարդու հիմնարար իրավունքների, բազմամշակութայնության, բազմակարծության գաղափարախոսությունները, այնպես էլ քաղաքական կյանքի կազմակերպման ժամանակակից մոդելները, մասնավորապես՝ ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթը: Բանն այն է, որ ներկայումս ժողովրդավարական համակարգերի բարոյագիտական-իրավական և

---

[96] Տե՛ս **Локк Дж., Толанд Д., Коллинз А.**, Английское свободомыслие, М., Мысль, 1981, էջ 63:

[97] Տե՛ս **Гусейнов А. А.,** Возможно ли моральное обоснование насилия, Вопросы философии, Наука, №3, М., 2004, էջ 25-26:

[98] Տե՛ս **Гусейнов А. А.,** Этика ненасилия, Вопросы философии. Наука, М., 1992, № 3, էջ 72-73:

քաղաքական ոլորտներն ուղղված են մարդկային բնույթի ապակառուցողական, կործանարար դրսևորումների սահմանափակմանը[99]: Սակայն, հաճախ փորձելով հնարավորինս սահմանափակել չարիքը՝ պետությունն ինքն է նպաստում վերջինիս առաջացմանը: Այնուամենայնիվ, ինչպես իրավացիորեն նկատում է ոչ բռնության էթիկայի հիմնադիր գաղափարախոսներից Մ. Գանդին՝ մարդ համարվում է մարդ այն բանի շնորհիվ, որ ի վիճակի է սահմանափակել ինքն իրեն և մնում է մարդ այնքանով, որքանով կարողանում է կիրառել այդ սահմանափակումը պրակտիկայում[100]:

Չհամաձայնեցված բռնության, ոչ լեգիտիմ բռնության չկիրառման իմպերատիվն ընկած է արդի ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթի արժեհամակարգի հիմքում: Ոչ բռնության էթիկան ինչպես արդի ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթի հաստատման նպատակն է, այնպես էլ՝ հիշյալ մշակույթի հաստատման միջոցն ու գրավականը: Հանդուրժողականությունը՝ որպես ազատական-ժողովրդավարական արժեք, հանդիպում է նաև հայտնի փիլիսոփա Կ. Պոպերի մոտ: Նա գտնում է, որ բոլոր նրանք, ովքեր դեմ են ազատականությանը, ժողովրդավարությանը, ռացիոնալիզմին, համարվում են հանդուրժողականության թշնամիներ: Երկուսի միջև անհամաձայնության առկայությունը դեռ չի նշանակում, որ չեն համընկնում վերջիններիս կարծիքները կամ հետաքրքրությունները: Սոցիալական իրականությունում պարբերաբար տեղի են ունենում տարաբնույթ բախումներ, որոնք պետք է հնարավորինս շուտ լուծում ստանան, քանի որ հետաձգումը կարող է անհանդուրժողականության դրսևորման պատճառ դառնալ: Կոնֆլիկտային իրավիճակների լուծումը հնարավոր է իրականացնել երկու ճանապարհով՝ կամ փաստարկման, կամ բռնության: Իսկ եթե խոսքը շահերի և կարծիքների բախման մասին է, ապա՝ ռացիոնալ փոխհամաձայնեցման կամ հակադիր կարծիքների վերացման միջոցով: Հանդես գալով ռացիոնալիզմի դիրքերից՝ Կ. Պոպերը գտնում է, որ բանական մարդը նման բախումները լուծում է փոխհամաձայնեցման, հանդուրժողականության և փաստարկման միջոցով: Նա

[99] Տե՛ս **Гусейнов А. А.,** Этика ненасилия, Вопросы философии, Наука, М., 1992, № 3, էջ 76:
[100] Տե՛ս **Ганди М. К.**, Моя жизнь, М., Издательство Восточной Литературы, 1959, էջ 286-287:

դիմացինին համոզում է փաստարկի ուժի և ոչ թե ուժի փաստարկի միջոցով[101]: Հետևաբար՝ հանդուրժողականության նկատմամբ անհանդուրժողականություն դրսևորողները չեն կարող ակնկալել նաև հանդուրժողական վերաբերմունք իրենց նկատմամբ: Ազատականության և հանդուրժողականության սկզբունքների վրա կառուցարկված ժողովրդավարությունը կառավարվողների կողմից կառավարողների նկատմամբ վերահսկողությունն է: Այն ապահովում է «պայքարի դաշտ» ցանկացած ողջամիտ բարեփոխումների համար՝ այդ բարեփոխումներն իրականացնելով առանց բռնության կիրառման: Ժողովրդավարության դեպքում ժողովուրդը կարողանում է իրականացնել կառավարումը և հրաժարվել կառավարչից առանց որևէ արյունահեղության: Այդ պատճառով էլ բոլոր իշխանություն ունեցողները, ովքեր չեն պաշտպանում ժողովրդի կողմից խաղաղ ճանապարհով փոփոխությունների իրականացման համար նախատեսված սոցիալական ինստիտուտները, համարվում են բռնապետեր: Կ. Պոպերը տարբերակում է կառավարման միայն երկու ձև՝ կառավարություն, որն ունի ժողովրդավարական ինստիտուտներ և կառավարության մնացած բոլոր տեսակները, այսինքն՝ բռնապետությունները: Իրական ժողովրդավարությունը հենվում է ոչ թե մեծամասնության կամքի, այլ փոքրամասնության ձայնին հաղորդակից լինելու սկզբունքի վրա[102]:

Եվ այսպես՝ համաշխարհայնացման արդի սոցիոմշակութային փոխակերպումների պայմաններում որպես քաղաքական մշակույթի կայացման իդեալներ՝ հանդես են գալիս կյանքի կազմակերպման ժողովրդավարության և ազատականության սկզբունքները, որոնցից ժողովրդավարությունը ենթադրում է մեծամասնության իշխանության գերակայության, իսկ ազատականությունը՝ մարդու իրավունքների գերակայության և անհատների ձայնին հաղորդակից լինելու սկզբունքները: Ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթի պայմաններում հարգվում է (կամ պետք է հարգվի) ինչպես մեծամասնության կամքի, այնպես էլ մարդու իրավունքների «լինելիության իրավունքը»: Այս իմաստով ազատական-ժողովրդավարական քաղաքական կյանքի կազմակերպման մշակույթի

---

[101] Տե՛ս **Поппер К. Р.**, Предположения и опровержения: Рост научного знания, М., ООО «Издательство АСТ», ЗАО НПП «Ермак», 2004, էջ 589:

[102] Տե՛ս **Поппер К. Р.**, Открытое общество и его враги, Т. 2. Время лжепророков: Гегель, Маркс и другие оракулы, М., Феникс, Культурная инициатива, 1992, էջ 187-188:

արժեհամակարգը հենվում է ոչ բռնության էթիկայի սկզբունքների վրա, ինչից բխում է, որ ազատական ժողովրդավարության պայմաններում բռնությամբ ուղեկցվող հարկադրանքի ցանկացած դրսևորում անընդունելի է: Ասվածը հատկապես վերաբերում է ինչպես ներքաղաքական, այնպես էլ՝ արտաքին քաղաքական զարգացումներին: Մինչդեռ ազատական ժողովրդավարության կարգախոսով ընթացող համաշխարհայնացման արդի միտումները երբեմն փաստում են հակառակի մասին: Նախորդ դարի հայտնի փիլիսոփա Հ. Արենդթն այս առումով իրավացիորեն նկատում է, որ «քաղաքական հայացքները հիմնված են բազմակարծության, բազմազանության և փոխադարձ սահմանափակումների վրա»[103]: Եվ իսկապես, քաղաքական կյանքն անպատկերացնելի է առանց քաղաքական տարբեր հայացքներ ունեցող և տարբեր թիմեր ներկայացնող մարդկանց մրցակցության: Ազատական-ժողովրդավարությունն այս առումով ապահովում է մրցակցության առկայությունը, քանի որ ընդունում է, որ բոլոր մարդիկ հավասարապես ունեն սեփական աշխարհայացք ունենալու իրավունք, իսկ քաղաքական կամ սոցիալական կյանքին վերաբերող որոշումների կայացումը պետք է իրականանա երկխոսության արդյունքում հաստատված փոխհամաձայնության արդյունքում, ինչը հնարավոր է միայն տվյալ հասարակության քաղաքական մշակույթում հանդուրժողականության՝ որպես կառուցողական նորմի և աշխատակարգի առկայության պայմաններում: Այս իմաստով ազատական-ժողովրդավարական հասարակություններում հանդուրժողականության չափորոշիչներն են այլության թույլատրելիության մակարդակը, անհատական, մշակութային, ազգային, սոցիալական, քաղաքական առանձնահատկությունների առկայության նկատմամբ հաշտվողական, ոչ ագրեսիվ վարքի առկայությունը և այլն: Այսպիսով հանդուրժողականությունն ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթի արժեքային համակարգի և՛ կարևոր բաղկացուցիչ է, և՛ ազատական-ժողովրդավարական քաղաքական մշակույթի կայացման կարևոր պայման:

---

[103] Տե՛ս **Արենդթ Հ.**, Մենք՝ փախստականներս, Եր., Հայաստանի Ամերիկյան Համալսարան, 2016, էջ 105:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

3.1. Մշակութային երկխոսությունը «բազմամշակութային հասարակության» նախագծի իրագործման և ձախողման համատեքստում

Ժամանակակից համաշխարհայնացվող աշխարհում հանդուրժողականության ուսումնասիրությունն առավել քան հրատապ է: Վերջին տասնամյակներում հանդուրժողականությունը դարձել է արդիական և լայն տարածում ունեցող խնդրիներից մեկը: Քաղաքական և քաղաքակրթական մարտահրավերները, զանգվածային մշակույթի տոտալ հարձակումները, ինչպես նաև համաշխարհայնացման ժամանակակից միտումները ստեղծել են այնպիսի սոցիոմշակութային «խառնաշփոթ», որի հետևանքով ժամանակակից ազգերը՝ որպես մշակութային բազմազանությունն ապահովող պատմական սուբյեկտներ, հայտնվել են տրանսֆորմացիոն ռիսկի վտանգավոր գոտում: Համահարթեցման ճնշող մամլիչի տակ ազգային դեմքն ու դիմագիծը կորցնելու իրական սպառնալիքի առջև հայտնված, իրականի ու վիրտուալի միջև անընդհատ դեգերող ժամանակակից մարդու համար ևս ինքնության պահպանումը (հատկապես ազգային) դարձել է գերխնդիր: Ուրեմն, ինչպե՞ս ներդաշնակորեն ներգրավվել համաքաղաքակրթական գործընթացներին և ինքնության արդիականացմամբ պահպանել ազգային յուրահատկությունն ու սոցիոմշակութային անվտանգությունը[104]:

Չնայած քաղաքակրթական զարգացումների հետարդիականության շրջանում անհանդուրժողականությունն իր բազմաթիվ դրսևորումներով (ահաբեկչություն, միջէթնիկական կոնֆլիկտներ, փոքրամասնության խտրականություն) վերաճել է գլոբալ հիմնախնդրի, այնուամենայնիվ հենց հանդուրժողականությունն է արժանի բազմակողմանի ուսումնասիրության: Բանն այն է, որ հետարդիականության դարաշրջանում զուգահեռաբար ընթանում են տարածաշրջանային մշակութային բազմազանեցման և համաշխարհային քաղաքական, տնտեսական և ընդհանրապես

[104] Մանրամասն տե՛ս **Սողոմոնյան Գ. Ա.**, Ազգային ինքնություն և սոցիոմշակութային անվտանգություն, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 141.4, Եր., 2013, էջ 14:

սոցիոմշակութային ներառման գործընթացներ[105], ինչի պայմաններում հանդուրժողականությունը հնարավոր է դարձնում հաղթահարել հասարակությանը բնորոշ այնպիսի ապակառուցողական երևույթներ, ինչպիսիք են բռնությունը, անհանդուրժողականությունը, այսինքն՝ օգնում է լուծել հանդուրժողականության և անհանդուրժողականության դիալեկտիկայի հարցը: Այդ տեսակետից հանդուրժողականության խնդրի տեսական իմաստավորումն ու վերլուծությունը, ինչպես նաև հանդուրժողական գիտակցության ձևավորման հարցերը ձեռք են բերել տեսական և գործնական նոր հնչեղություն:

Ի թիվս այլ պատճառների՝ հանդուրժողականության հիմնահարցի արդիականացմանը նպաստեցին համաշխարհայնացման գործընթացների շրջանակներում համակեցության նոր հարացույցների ձևավորման անհրաժեշտությունը, բազմաբևեռ աշխարհի առկայությունը և ազատական-ժողովրդավարական արժեքների տարածումը: Քաղաքակրթության համաշխարհայնացման պայմաններում բազմակարծության, երկխոսության և հանդուրժողականության սկզբունքների վրա հիմնված սոցիոմշակութային նոր տեսակի հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը դառնում է ակնհայտ հատկապես այն պարագայում, երբ վերլուծում ենք սոցիալական հարաբերությունների համակարգի ճգնաժամային արդի դրսևորումները: Հանդուրժողականության խնդիրը ձեռք է բերում համամարդկային նշանակություն, քանի որ ժամանակակից աշխարհում առանց հանդուրժողականության սկզբունքի, առանց երկխոսության և փոխզիջման հնարավոր չէ հասնել խաղաղ գոյակցման:

Արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման գործընթացում երկխոսության և հանդուրժողականութան սկզբունքները կարևոր են ոչ միայն միջանձնային հարաբերություններում, այլև միջմշակութային և միջքաղաքակրթական փոխհարաբերություններում: Ժամանակակից աշխարհը մի կողմից փորձում է իրականացնել բազմամշակութային հասարակության կառուցարկման նախագիծը, որտեղ գործում են մշակութային երկխոսության, հանդուրժողականության, հավասարության, մշակութային բազմազանության և մշակութային տարբեր

[105] Տե՛ս **Brown W.,** States of injury: Power and freedom in late modernity, Princeton, Princeton University Press, 1995, էջ 36-39:

համակարգերի ու քաղաքակրթությունների իրավահավասարության սկզբունքները, մյուս կողմից՝ փորձ է արվում ստեղծել համընդհանուր սոցիոմշակութային համակարգ՝ ելնելով համաշխարհայնացման և բաց հասարակության կայացման հիմնական տրամաբանությունից: Ըստ քաղաքակրթությունների հայտնի տեսաբան Ա. Թոյնբիի՝ ժամանակակից արևմտյան քաղաքակրթության նպատակն է ողջ մարդկության ներգրավումը համընդհանուր սոցիալական համակարգի շրջանակներում[106]: Համաշխարհայնացումը քաղաքակրթական ինտեգրման այնպիսի հայեցակարգ է, ըստ որի՝ տարբեր ազգերի և մշակույթների գոյությունը հնարավոր է միայն այն դեպքում, եթե վերջիններս ընդունում են մշակութային բազմակարծությունն ու բազմազանությունը: Համաշխարհայնացման պայմաններում տեղի ունեցող սոցիոմշակութային փոխակերպումներն ուղեկցվում են ոչ միայն տարբեր մշակույթների մերձեցմամբ և միաձուլմամբ, այլ նաև՝ ազգային դիմագծի ձևախեղման սպառնալիքով: Մշակութային տարրերը, որոնք անվնաս են և արդյունավետ ազգային հենքի վրա, կարող են լինել վտանգավոր և նույնիսկ կործանարար օտար սոցիալական համակարգում: Մյուս կողմից, երբ օտար մշակութային տարրերը փորձում են հաստատվել նոր մշակութային համակարգում, վերջիններս ևս համալրվում են նորանոր մշակութային արժեքներով[107]: Պատահական չէ, որ համաշխարհայնացման և մշակույթների համընդհանրացման գործընթացները հաճախ դառնում են հակամարտության և անհանդուրժողականության դրսևորումների պատճառ՝ հարուցելով մշակութային ինքնատիպության կորստի վտանգ: Այս կապակցությամբ Ս. Հանթինգթոնը նշում է, որ հետսառըպատերազմյան հասարակություններում հակամարտության աղբյուր է ո՛չ թե տնտեսությունը, ո՛չ թե գաղափարախոսությունը, ո՛չ թե քաղաքականությունը, այլ մշակույթը[108]: Հանգամանք, որն իր հերթին հարուցում է համաշխարհայնացման գործընթացներին հակազդելու ներքին անհրաժեշտություն: Այդ տեսակետից հակահամաշխարհայնացումը համաշխարհայնացման գործընթացների անաչառությունը, անխուսափելիությունը և դրական էությունը ժխտող հայացքների համակարգ է, որն առաջին հերթին ուղղված է միաբևեռ աշխարհ

[106] Տե՛ս **Тойнби А. Дж.,** Цивилизация перед судом истории. Мир и Запад, М., АСТ, Астрель, Владимир: ВКТ, 2011, էջ 177:
[107] Տե՛ս **Тойнби А. Дж.,** Постижение истории, М., Прогресс, 1991, էջ 578:
[108] Տե՛ս **Хантингтон С.,** Столкновение цивилизаций, М., АСТ, 2014, էջ 15:

կառուցելու արևմտյան քաղաքակրթության ջանքերի դեմ: Համաշխարհայնացումը մարդկությանը մշտապես հիշեցնում է, որ աշխարհը թեև բազմաբնույթ և բազմաբևեռ է, բայց և միասնական է, որ միևնույն գործընթացների նկատմամբ տարբեր մոտեցումներն անխուսափելի են, սակայն արդեն անվտանգ չեն ինչպես կոնկրետ սոցիալական սուբյեկտների, այնպես էլ աշխարհի համար ընդհանրապես: Հայացքների և արժեքների բազմազանության անխուսափելիությունը ենթադրում է բոլոր մշակույթների և ճանաչողական կողմնորոշումների իրավահավասարություն: Առաջանալով հասարակական գիտակցությունում՝ հանդուրժողականությունը ձևավորվում է որպես հասարակական իդեալ և ենթադրում է հասարակական և մշակութային տարբերությունների անվերապահ ընդունում: Ինչ-որ իմաստով այն աշխարհակարգի ստեղծման և քաղաքացիների միջև համաձայնության հաստատման միջոց է: Համաշխարհայնացման պայմաններում հանդուրժողականությունը քաղաքակիրթ փոխզիջման նորմ է միմյանց հետ մրցակցող մշակույթների միջև և ապահովում է մշակութային բազմազանության գոյությունը: Այս կապակցությամբ տեսական և գործնական կարևորություն ունի ինչպես մշակութային երկխոսության, այնպես էլ կեցության համամարդկային նորմերի ստեղծման հիմնախնդիրը:

Ամենալայն իմաստով երկխոսությունը շփում է զրուցակցին հասկանալու նպատակով: Գոյություն ունեն երկխոսության տարբեր ըմբռնումներ: Էկզիստենցիալիստ փիլիսոփա Մ. Բուբերն առանձնացնում է երկխոսության երեք տեսակ. առաջինը բուն երխոսությունն է, որը կարող է իրականացվել ինչպես բառերով, այնպես էլ լռության միջոցով: Երկխոսության այս տեսակը դարձել է շատ հազվագյուտ, և ներկայումս նույնիսկ այնտեղ, որտեղ առկա է բուն երկխոսություն (անգամ «ոչ հոգևոր դրսևորումներով»), համարվում է մարդկային ոգու օրգանական ամբողջության առհավատչյա: Երկխոսության այս տեսակում մասնակիցներից յուրաքանչյուրն ընկալում է դիմացինին վերջինիս իրական կեցությամբ՝ ջանալով ստեղծել «կենդանի» հարաբերություններ: Երկրորդը տեխնիկական երկխոսությունն է, որի հիմքում ընկած է օբյեկտիվ անհրաժեշտության սկզբունքը, այն է՝ զրուցակցին հասկանալու առաջնայնությունը: Երկխոսության այս տեսակն առավել զանգվածային բնույթ է կրում և համարվում է ժամանակակից մարդկային գոյության և էության

անբաժանելի հատկություն[109]: Երրորդ տեսակը երկխոսությամբ քողարկված մենախոսությունն է, որի դեպքում երկու և ավելի մարդկանցից բաղկացած խմբի յուրաքանչյուր անդամ տարօրինակ ու նենգ ուղիներով երկխոսում է ինքն իր հետ՝ համոզված լինելով, որ ինքը մենակ չէ: Ինչ վերաբերվում է երկխոսության երրորդ տեսակին, Մ. Բուբերը, տարբերելով երկխոսությունը մենախոսությունից, նշում է, որ կյանքը երկխոսություն է: Նույնիսկ խիստ մենախոսության դեպքում երկխոսությունը ենթադրում է փոխադարձության զգացում, իսկ դրան հակառակ մենախոսային ձևը երբեք դուրս չի գալիս ինքնապաշտպանության սահմաններից: Սակայն այս երևույթը չպետք է շփոթել էգոիզմի կամ ալտրուիզմի դրսևորումների հետ, քանի որ գոյություն ունեն մարդկանց այնպիսի տեսակներ, որոնք լայնածավալ հասարակական գործունեություն են ծավալում՝ չտիրապետելով անգամ երկխոսելու տարրական կարողություններին և չընկալելով դիմացինի գոյությունը: Այստեղ նկատելի է նաև սկզբունքորեն հակառակ միտումը[110]:

Ինչպես երևում է, թեև Մ. Բուբերը երկխոսությունը դիտում է նախ և առաջ որպես մարդկանց, առանձին անհատների միջև փոխհարաբերություն, այնուամենայնիվ նա երկխոսությունը ընկալում է նաև ավելի լայն իմաստով՝ գտնելով, որ կյանքի, հոգու միասնությունը պայմանավորված է հենց երկխոսության առկայությամբ, որը չի կարող մասնատվել որևէ փոփոխությամբ: Երկխոսությամբ ձեռք բերված միասնությունն անբաժանելի է, հաստատուն և մնայուն[111]: Այստեղ արդեն Մ. Բուբերը փորձում է երկխոսությունը միջանձնային հարաբերություններից տեղափոխել միջմշակութային հարաբերություններ:

Մշակույթի երկխոսային բնույթին անդրադարձ է կատարել մեկ այլ մտածող Վ. Ս. Բիբլերը: Նա առանձնացնում է մշակույթի սահմանման երեք տեսակ: Ըստ առաջին սահմանման՝ մշակույթը երկխոսություն է, որն իրականացվում է մարդկանց կողմից, երկխոսություն՝ անցյալ, ներկա և ապագա մշակույթների միջև, որպես այդ մշակույթների փոխըմբռնման ձև: Ընդ որում նման շփման ժամանակը ներկան է[112]:

---

[109] Տե՛ս **Бубер М.**, Два образа веры, М., Республика, 1995, էջ 108:
[110] Տե՛ս նույն տեղը, էջ 109:
[111] Տե՛ս նույն տեղը, էջ 113:
[112] Տե՛ս **Библер В. С.**, От наукоучения- к логике культуры. Два философских введения в двадцать первый век, М., изд. Политической литературы, 1991, էջ 289:

Նա, համեմատելով տարբեր դարաշրջանների մշակութային առանձնահատկությունները, եկել է այն եզրակացության, որ ցանկացած մշակույթ երկխոսության մեջ է գտնվում նախորդ դարաշրջանների մշակութային համակարգերի հետ: Արդեն իսկ մշակույթի առաջին սահմանման դեպքում ակնհայտ է մշակույթի երկխոսային բնույթը: Ըստ երկրորդ սահմանման՝ մշակույթն անհատի կյանքի, գիտակցության, մտածողության ինքնադետերմինացման ազատ ընտրության ձև է: Եվ, վերջապես, ըստ վերջին սահմանման՝ մշակույթն աշխարհի վերապրումն ու ընկալումն է: Լինել մշակույթի մեջ, հաղորդակցվել մշակույթում նշանակում է կերտել, ինքնորոշել սեփական ճակատագիրը [113]: Ինչպես տեսնում ենք, երկխոսությունը մշակութային փոխազդեցության ձև է, որի գլխավոր նպատակը փոխըմբռնման, ներդաշնակ և հանդուրժող հասարակական հարաբերությունների հաստատումն է:

Երկխոսությունը միջսուբյեկտային փոխազդեցության հոգևոր ձև է, որը տարբերվում է սովորական հաղորդակցությունից (հաղորդակցությունը ինֆորմացիայի փոխանակումն է սուբյեկտների միջև): Երկխոսությունն ուղղված է կոնկրետ Ուրիշին: Խոսելով մշակութային երկխոսության մասին, մասնավորապես անդրադառնալով անցյալի և ներկայի մշակույթների փոխհարաբերության խնդրին՝ Մ. Ս. Կագանը նշում է, որ համաշխարհային մշակույթներում տարբերվում է անցյալ և ներկա մշակույթների փոխհարաբերության երեք տեսակ: Ըստ հարաբերության առաջին ձևի՝ անցյալի մշակույթը գերիշխում է ներկա մշակույթի նկատմամբ: Ներկան ամբողջովին ենթարկվում է անցյալին: Հարաբերության այս ձևը բնորոշ է հատկապես ավանդական հասարակություններին և մշակույթներին, որոնց գլխավոր սկզբունքն է. «ներկայի միջոցով վերստեղծել անցյալը», այսինքն՝ կարելի է ասել, որ ներկան անցյալին մենախոսելու իրավունք է տալիս: Հարաբերության երկրորդ տեսակը բնորոշ է մոդեռնիզմին, որի հիմնական արժեքներն են նորարարությունը, անկրկնելիությունը, ինքնատիպությունը, այն ամենը, ինչը նման չէ անցյալին և հակադրվում է ավանդույթներին: Եվ միայն անցյալի և ներկայի միջև փոխհարաբերության երրորդ

[113] Տե՛ս նույն տեղը, էջ 290:

տեսակն է երկխոսային, որի գլխավոր կարգախոսն է «միասնություն բազմազանության մեջ» սկզբունքը[114]:

Վերլուծելով, թե ինչ է մշակույթի երկխոսային բնույթը, կարող ենք անդրադառնալ համաշխարհայնացման պայմաններում մշակութային երկխոսության խնդրին: Այս համատեքստում կարևոր է նշել համաշխարհայնացման գործընթացների երկակի բնույթը: Համաշխարհայնացումը բազմաշերտ և բազմաբովանդակ գործընթաց է, որն առաջին հայացքից ունի ինչպես գրավիչ, դրական, այնպես էլ վանող և ոչ ընդունելի կողմեր: Համաշխարհայնացման «գրավչությունը» պայմանավորված է նրանով, որ աշխարհը դարձել է առավել հասանելի, տեղեկատվության փոխանակումը աշխարհի մի կետից մյուսն իրականանում է շատ ավելի արագ և դյուրին, քան երբևէ, մարդը ձեռք է բերել ավելի լայն հնարավորություններ և ավելի մեծ ազատություն: Մինչդեռ համաշխարհայնացումն ունի մի շարք «վանող» կողմեր ևս. այն է՝ ազգային ինքնատիպության կորստի վտանգ, միօրինակության հաստատում, բազմազանության և բազմակարծության մահ, ազգային մշակութային արժեքների բովանդազրկում և հրաժարում: Եթե համաշխարհայնացումը մի կողմից անմիջականորեն ենթադրում է մարդկանց համախմբում և միավորում՝ հիմք ընդունելով մշակութային երկխոսության և մշակութային բազմազանության անհրաժեշտությունը, ապա մյուս կողմից այն ստեղծում է այնպիսի նախապայմաններ, որոնք դժվարեցնում են մշակույթների միջև երկխոսությունը: Այս դեպքում համաշխարհայնացման գործընթացները հակադրվում են մշակութային երկխոսությանը՝ նպատակ ունենալով ստեղծել միօրինակ և համընդհանուր աշխարհ և բացառելով ամեն տեսակ բազմազանություն և բազմակարծություն: Մշակութային երկխոսությունը ենթադրում է այլ մշակութային արժեքների ճանաչում, ընդունում և գնահատում՝ նպաստելով տարբեր մշակութային պատկանելություն ունեցող ազգերի միջև փոխազդեցության և փոխըմբռնման հաստատմանը: Մշակութային երկխոսության հիմքում ընկած են այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, հարգանքը, համբերատարությունը, մարդասիրությունը և այլն: Ըստ այդմ, իրավամբ հարց է

[114] Տե՛ս **Каган М. С.**, Введение в историю мировой культуры, СПб., ООО Издательство «Петрополис», 2003, էջ 305-306:

ծագում. հնարավոր է արդյո՞ք մշակույթների երկխոսություն առհասարակ: Հարկ է նկատել, որ որպեսզի նման մշակութային երկխոսությունները, շփումներն ու համագործակցությունները հնարավոր լինեն իրականացնել, նախ և առաջ անհրաժեշտ է կիրառել հանդուրժողականության սկզբունքը տարբեր արժեքների, նորմերի, դիրքորոշումների, ավանդույթների նկատմամբ: Ի պատասխան այս հարցի, կարող ենք ասել, որ մշակութային երկխոսության իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ «ընտրվեն» սոցիոմշակութային այնպիսի նորմեր և արժեքներ, որոնք ընդունելի կլինեն երկխոսությանը մասնակից բոլոր հասարակությունների և մշակույթների կողմից, հակառակ դեպքում հանդուրժողականությունը կարող է դառնալ ոչ թե մշակութային երկխոսության ընթացքում ծագած խնդիրների լուծման բանալի, այլ պարզապես դրանք քոզարկող միջոց: Այս համատեքստում բազմամշակութայնության գաղափարախոսության հենքի վրա ընթացող մշակութային համաշխարհայացման պայմաններում հանդուրժողականությունն ինչպես անհրաժեշտ գործոն է սոցիալական ներդաշնակության ապահովման համար, այնպես էլ նոր մարտահրավեր է՝ նետված համաշխարհային հանրությանը: Համաշխարհայնացման պայմաններում հանդուրժողականությունը դառնում է միջմշակութային փոխհարաբերությունների կարգավորման, մշակութային երկխոսության իրականացման և տարբեր մշակութային համակարգերի փոխըմբռնման կարևոր միջոց:

Մարդուն շրջապատող սոցիոմշակութային աշխարհն ու սոցիալական միջավայրը բազմակողմ են ու տարաբնույթ, ուստի մարդու հայացքներն այդ աշխարհի նկատմամբ ևս տարբեր են և չեն կարող հանգեցվել միօրինակության: Արդի համաշխարհայնացվող աշխարհում մարդիկ իրարից տարբերվում են ոչ միայն սոցիալական, քաղաքական, տնտեսական, այլ նաև հոգևոր առանձնահատկություններով՝ նախ և առաջ մշակութային պատկանելությամբ: Որպես կանոն նմանատիպ մշակութային արժեքներ ունեցող ազգերի միջև իրականացվում է արդյունավետ համագործակցություն, մինչդեռ բոլոր այն ազգերը, որոնք ունեն ուրույն մշակութային համակարգ, ինքնաբերաբար ներգրավվում են արժեքաբանական կոնֆլիկտների և մշակութային պատերազմների մեջ՝ մի կողմից փորձելով պահպանել սեփական մշակութային արժեքները, մյուս կողմից՝ գերիշխանություն հաստատել այլ

մշակութային արժեքների նկատմամբ: Նման պարագայում տարբեր մշակութային պատկանելություն ունեցող անհատների միջև տեղի են ունենում արժեքաբանական բախումներ: Հակամարտող կողմերից յուրաքանչյուրը փորձում է ապացուցել սեփական արժեքների ինքնատիպությունն ու բացարձակ ճշմարիտ լինելը՝ նպատակ ունենալով գերակայություն հաստատել սեփական մշակութային համակարգից տարբերվող այլ մշակութային համակարգերի նկատմամբ:

Արդի մշակույթը պլյուրալիստական և բազմաշերտ է, որի պայմաններում գոյություն ունեն մի շարք մշակութային համակարգեր և ենթահամակարգեր: Պլյուրալիզմը կարող է դրսևորվել անգամ մեկ մշակութային համակարգի ներսում: Ցանկացած առանձին մշակութային համակարգին բնորոշ է կրոնական, բարոյագիտական, փիլիսոփայական արժեքների բազմազանությունը: Նման պայմաններում տեղի են ունենում ունիֆիկացիոն գործընթացներ, որի դեպքում բազմաթիվ արժեքների միաժամանակյա գոյության շրջանակներում անհնար է կատարել ազատ ընտրություն: Այստեղ վճռական դեր է խաղում հեղինակությունների կարծիքը: Ինչ-որ իմաստով տեղի է ունենում ճաշակների, հայացքների համահարթեցում, անհատականության կորուստ[115]: Բանն այն է, որ ժամանակակից քաղաքակրթությունը սեփական արժեքները հայտարարում է որպես համընդհանուր, մարդասիրական և ճշմարիտ, որոնք չեն ենթադրում որևէ հիմնավորում՝ դրանով իսկ հակասելով սեփական ազատական գաղափարախոսության հիմնական սկզբունքներին, որոնք նախ և առաջ ենթադրում են բազմակարծություն և բազմաբևեռ աշխարհ: Սա ազատական-ժողովրդավարական արժեքների պարադոքսներից մեկն է:

Այս համատեքստում համաշխարհայնացումը կարելի է հասկանալ երկու առումներով, մի դեպքում՝ որպես եվրոպականացում կամ արևմտականացում, մյուս դեպքում՝ որպես արդիականացում: Անշուշտ, ժամանակից աշխարհում նկատելի են տարբեր քաղաքակարթությունների «արևմտյան» արժեքներին կամ «Արևմտյան մշակույթին» հանգեցման միտումները[116]: Սակայն, ինչպես նկատում է Ս. Հանթինգթոնը՝ արևմտյան արժեքներն ամենևին էլ Արևմուտքի սեփականությունը չեն,

---

[115] Տե՛ս **Մելքումյան Գ. Ա.,** Մշակութաբանություն, Եր., Վան Արյան, 2001, էջ 185:

[116] 20-րդ դարի մշակույթի եվրոպական տիպը տարածվում է նրա սահմաններից դուրս: Այդ պատճառով էլ շատ հաճախ կիրառվում է «Արևմտյան մշակույթ» անվանումը:

այլ համամարդկային արժեքներ են, որոնք ի հայտ են եկել արևմտյան քաղաքակրթությունում ընթացող արդիականացման նախագծի ընթացքում: Իսկ այս դեպքում արդեն պարզապես այն, ինչ տեղի է ունենում ժամանակակից ոչ-արևմտյան քաղաքակրթություններում, իրականում այն է, ինչ տեղի է ունեցել արևմտյան քաղաքակրթությունում հասարակությունների արդիականացման ընթացքում: Այսինքն՝ ժամանակակից համաշխարհայնացման գործընթացներն իրականանում են ոչ թե եվրոպականացման առանցքի շուրջ, այլ արդիականացման նախագծի տրամաբանությամբ:

Ժամանակակից բոլոր հասարակություններն անցել են քաղաքակրթական և մարդաբանական արդիականացման նախագծի ուղին, այսինքն՝ արդիականացվել են: Այս իմաստով նույնքան ժամանակակից են արևմտյան այն հասարակությունները, որոնք առաջինն են հաղթահարել արդիականացման փուլը, այնպես էլ արևելյան այն հասարակությունները, որոնք կառուցարկված են արդիականացման նախագծի լուսավորական գաղափարներով: Եվ ինչպես նկատում է ամերիկացի հայտնի տեսաբան Հանթինգթոնը՝ «արդիականացումն ու արևմտականացումը տարբեր երևույթներ են, և արդիականացվել ամենևին էլ չի նշանակում արևմտականացվել»: Կարելի է լինել ժամանակակից կամ արդիական հասարակություն՝ ամենևին էլ չկրելով արևմտյան հասարակություններին բնորոշ մշակութային արժեքները: Արևմտյան լոգոսն ու արդիականացվածության լոգոսը, ճիշտ է, հաճախ բովանադակային իմաստով համընկնում են, սակայն կարող են նաև գտնվել հակասությունների մեջ: Պարզապես արևմտյան հասարակություններն արդեն իսկ արդիականացված հասարակություններ են, իսկ արևելյաններից շատերը դեռ նոր են արդիականացվում, կամ էլ չեն արդիականացվում՝ կախված պատմական, քաղաքական, տնտեսական և ընդհանարպես սոցիոմշակութային իրադարձությունների հետագա ընթացքից: Արդի աշխարհի տարբեր կետերում կրոնականության վերածնունդը թողնում է միայն հուսալ, որ արդիականացման նախագծի առաջարկած սոցիոմշակութային արժենքերը համամարդկային արժեքներ են, որ նրանք վերաբերում են մարդկային ցեղին ընդհանրապես, և ոչ թե միայն կոնկրետ հասարակությունների պատմական զարգացման առանձնահատկություններից բխող արժեքներ են:

Այս իմաստով մեր հասարակությունն էլ է շարժվում արդիականացման ուղով, որը շատ հաճախ շփոթում են եվրոպականացման հետ: Սակայն, ինչպես նկատում է Հանթինգթոնը՝ եվրոպականացումն (westernization) ու արդիականացումը (modernization) տարբեր սոցիոմշակութային գործընթացներ են[117]: Գրեթե բոլոր եվրոպական կամ արևմտյան հասարակությունները ենթարկվել են արդիականացման լուսավորական նախագծին, սակայն ոչ բոլոր արդիականացված հասարակություններն են եվրոպականացված (օրինակ՝ Ճապոնիան, Թուրքիան, Չինաստանը և այլն): Իսկ մեր հասարակությունում այսօր առկա է այն մտայնությունը, որ մենք շարժվում ենք դեպի Եվրոպա: Իրականում մենք չենք շարժվում դեպի Եվրոպա, մենք շարժվում ենք արդիականացման ուղով, պարզապես եվրոպական հասարակությունները մեզ համար կարելի է դիտել որպես արդիականացման նախագծի ենթարկված հասարակությունների օրինակներ, որոնց արդի սոցիոմշակութային կարգը սպասում կամ սպառնում է նաև մեզ: Ուստի խոսելով արդի քաղաքակրթության սոցիոմշակութային կարգի մասին՝ մենք խոսելու ենք արդիականացման ենթարկված հասարակությունների մասին՝ գերազանցապես նկատի ունենալով արևմտյան հասարակություններին:

Եվ այսպես ժամանակակից արդիականացված հասարակությունները կառուցարկված են լուսավորականության և նոր շրջանի փիլիսոփայության հարացուցային գաղափարներով և իդեալներով: Լուսավորականության շարժումն ու նոր շրջանի փիլիսոփայությունը սկիզբ դրեցին քաղաքակրթական և մարդաբանական մի շարք փոխակերպումների, որը բազում տեսաբաններ (Հաբերմաս, Հանթինգթոն, Թոֆլեր, Բել և այլն) ամփոփում են այսպես կոչված «արդիականացման նախագիծ» եզրույթով: Լուսավորականության գաղափարներով սնվող արդիականացման նախագիծը ենթադրում է քաղաքակրթության արդյունաբերականացում, ժողովրդագրական ուրբանիզացում, համընդհանուր կրթվածության տարածում, սոցիոմշակութային հարաբերությունների կարգավորման ռացիոնալացում և մի շարք այլ գործընթացներ: Արդիականացման նախագծին հաջորդած քաղաքակրթական և մարդաբանական փոխակերպումներն այնպիսի ազդեցություն ունեցան մարդկության

[117] Տե՛ս **Хантингтон С.,** նշվ., աշխ., էջ 93-95:

պատմության զարգացման ընթացքի վրա, որ հիմնովին փոխեցին նաև արդիականացված հասարակությունների զարգացման հիմնական հարացույցները, նրանց օժտեցին նոր որակներով ու հատկություններով, որոնցից զերծ էին մինչարդիական փուլում գտնվող հասարակությունները: Այս է պատճառը, որ Հանթինգթոնը արդիականացման նախագիծը համարում է նույնքան բեկումնային նշանակություն ունեցող գործընթաց մարդկային պատմության զարգացման ընթացքում, որքան որ հասարակությունների անցումն էր վայրենության շրջանից քաղաքակրթվածության շրջանին[118]: Եվ այսպես լուսավորականության գաղափարների վրա հիմնված արդիականացման նախագծին ենթարկվող հասարակությունների քաղաքակրթական, քաղաքական և մարդաբանական ոլորտներում տեղի ունեցան բեկումնային փոխակերպումներ, որոնց շնորհիվ ձևավորվեց ժամանակակից քաղաքակրթության տեսքն ու բովանդակությունը:

Սակայն արդիականացման նախագծի հիմքում ընկած իդեալներն ու սկզբունքները ենթարկվեցին պարադոքսալ փոխակերպումների, երբ իրենց մարմնավորումը ստացան կոնկրետ հասարակությունների սոցիոմշակութային իրականություններում: Բանն այն է, որ արդիականացման նախագծի հիմքում ընկած լուսավորական շարժման գաղափարները կառուցարկված էին որոշակի հարացուցային սկզբունքների շուրջը՝ հավասարություն, ազատություն, եղբայրություն և այլն: Այդ սկզբունքներն էլ իրենց հերթին կառուցարկված էին բանականության հարացույցային սկզբունքի շուրջը: Լուսավորիչներն ու նոր շրջանի փիլիսոփաները բանականությունը դիտում էին որպես մարդու բնական և ամենաէական հատկություն, և սոցիոմշակութային իրականությունում ընդունելի ու իդեալական էին համարում այն ամենը, ինչը կառուցարկված էր բանականության սկզբունքներով, իսկ մերժելի ու արգահատելի այն՝ ինչն անբանական էր, հետևաբար օտար էր մարդու բնական կեցությանը: Բանականության հովվերգությունը ի վերջո տեսական գաղափարաբանությունից մարմնավորվում է նաև սոցիալական կյանքում՝ այսինքն գործնականանում է: Բանականության սկզբունքի գործնականացումը առաջին հերթին հարվածում է հասարակական կյանքում կրոնականության զբաղեցրած դիրքերին:

[118] Տե՛ս նույն տեղը, էջ 92:

Վերջին հաշվով լուսավորական շարժումն ուղղված էր հենց կրոնականության-կղերականության «առաջարկած» աշխարհպատկերմանն ու կենսիմաստային սկզբունքներին: Խնդիրն այն է, որ միջնադարյան հասարակություններում կյանքի կազմակերպման օրենքներն ու օրինաչափությունները թելադրվում էին բացառապես կրոնական-եկեղեցական պատումներով, հիմնված էին կրոնական հեղինակությունների հայտնությունների և խոստովանությունների վրա և ըստ էության իռացիոնալ հիմք ունեին: Կրոնական պատկերացումներով ու սկզբունքներով էր կազմակերպվում նաև հասարակության քաղաքական կյանքը: Բանն այն է, որ միջնադարյան հասարակություններում քաղաքական կյանքի հիմքում ընկած իշխանական հիերարխիան (աստիճանակարգությունը) կառուցարկվում էր ավատատիրության ոգուն համապատասխան կանոններով, ինչն արդարացվում էր կրոնական բովանդակություն ունեցող աշխարհպատկերմամբ: Կրոնական մտածողությունն արդարացնում էր իրերի ու երևույթների կարգն աշխարհի վրա՝ բացատրելով այն Աստծո կամքով կամ նախասահմանվածությամբ, ինչն ինքնին անբանական էր դիտվում լուսավորիչների կողմից ու ժամանակի մարդկային բոլոր դժբախտությունները բացատրում էր կրոնականության իռացիոնալությամբ և աստիճանակարգման անբանականությամբ, հետևաբար անբնականությամբ, ուստի լուսավորական շարժման հիմքում ընկած էր այդ կարգերի տապալման ու բանականության սկզբունքներով նոր կարգերի սահմանման իդեալը:

Այսպիսով, համաշխարհայնացման պայմաններում միջէթնիկական պատերազմներից հնարավոր կլինի խուսափել միայն այն դեպքում, երբ տարբեր մշակութային համակարգեր ունեցող ազգերն ի վերջո հասկանան, որ արդիականացման պայմաններում գործում է մշակութային բազմազանություն և բազմակարծություն: «Մշակույթների ներթափանցումը, փոխազդեցությունը ազատում է մշակույթին ներփակվածությունից, ազգայնամոլությունից, հաղորդակից դարձնում համաշխարհային մշակույթին, ազգային մշակույթը դարձնում համաշխարհային տարր»[119]: Ուստի հարկավոր է պայքարել ոչ թե սեփական արժեքների գերակայության համար, այլ ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավոր կդարձնեն մշակութային

[119] **Սարգսյան Ա. Հ.,** Մշակույթի տեսություն, Եր., «Տնտեսագետ», 2003, էջ 80:

երկխոսությունը: Արդի աշխարհը հարկադրված է ընդունել, որ հնարավոր չէ ստեղծել համընդհանուր արժեքային համակարգ, որը ընդունելի կլինի բոլոր ազգերի, կրոնների, մշակույթների կողմից: Համաշխարհայնացման ուտոպիստական նման ծրագիրը, այն է՝ ստեղծել համընդհանուր արժեքային համակարգ ունեցող ներդաշնակ և խաղաղ աշխարհ, դատապարտված է ձախողման, քանի որ «գոյություն չունի մշակութային միասնություն»[120]:

Համընդհանուր արժեքներ ունեցող աշխարհի ստեղծման նախագծի անհնարինության հարցին անդրադարձել է նաև ռուս տեսաբան Ս. Կարա-Մուրզան: Նա գտնում է, որ միօրինակ աշխարհի կառուցարկումն ուտոպիա է, որի հիմքում ընկած է արևմտյան առասպելաբանությունը և գաղափարախոսությունը[121]: Եվրոպականացման նմանատիպ առասպելներ են արևմտյան ազատական-ժողովրդավարական արժեքները, քաղաքացիական հասարակության ձևավորումը, մարդու իրավունքների և ազատությունների ճանաչումը, մարդասիրությունը, հավասարության, արդարության սկզբունքները և մի շարք այլ հիմնարար արժեքներ: Արևմուտքի կողմից վերոնշյալ բոլոր առասպելները կիրառվում են որպես մանիպուլյացիոն հզոր գործիքներ, որոնց միջոցով փորձ է արվում իրականացնել անցումը բազմաբևեռ աշխարհից միաբևեռ աշխարհի: Ակնհայտ է, որ որքան էլ Արևմուտքը փորձի սեփական արժեքները հայտարարել որպես համընդհանուր և «ճշմարիտ», միևնույնն է մշակութային բազմազանությունն անխուսափելի և անհրաժեշտ երևույթ է, հակառակ դեպքում քաղաքակրթությունները որպես այդպիսին կդադարեին գոյություն ունենալ, քանի որ յուրաքանչյուր քաղաքակրթության հիմքում նախ և առաջ ընկած են տարբեր մշակութային համակարգեր և արժեքներ: Յուրաքանչյուր մշակութային համակարգի առաջնային նպատակն է պահպանել սեփական ինքնատիպությունն ու դիմագիծը:

Եվրոպականացման կամ արևմտականացման նախագծի քննադատությամբ հանդես է գալիս նաև ստրուկտուրալիստ մտածող, ազգագրագետ Կլոդ Լևի-Ստրոսը, որը, պաշտպանելով մշակութային երկխոսության, մշակութային բազմազանության և մշակույթների համագործակցության գաղափարները, գտնում է, որ համընդհանուր

---

[120] Տե՛ս **Хантингтон С.**, նշվ. աշխ., էջ 32:

[121] Տե՛ս **Кара-Мурза С. Г.,** Манипуляция сознанием, М., Эксмо, 2011, էջ 212:

մշակութային համակարգ հնարավոր է ստեղծել միայն առանձին մշակույթների կոալիցիայի ձևավորման, համագործակցության հաստատման և հանդուրժողականության դրսևորման միջոցով և ոչ երբեք որևէ առանձին մշակութային համակարգի գերակայության պայմաններում: «Հանդուրժողականությունն ամենևին էլ հայեցողական վերաբերմունք կամ ինդուլգենցիաների բաշխման գործընթաց չէ: Այն դինամիկ դիրքորոշում է, որը ենթադրում է կանխատեսում, ըմբռնում»[122]:

Սոցիոմշակութային արդի փոխակերպումների համատեքստում շատ կարևոր է անդրադառնալ բազմամշակութայնության գաղափարախոսության ճգնաժամին կամ բազմամշակութային հասարակության նախագծի ձախողմանը: Մասնագիտական վերլուծություններում փորձ է արվում պարզել՝ արդյո՞ք համաշխարհայնացման պայմաններում ի հայտ եկած նոր գաղափարախոսությունը՝ բազմամշակութայնությունը (մուլտիկուլտուրալիզմը), պարզապես գտնվում է ճգնաժամի փուլում, թե՞ արդեն իսկ դատապարտվել է ձախողման: Մինչ հասկանալը, թե այս երկու տարբերակներից որն է իրականը, նախ անդրադառնանք բազմամշակութայնության ֆենոմենի վերլուծությանը: Մշակութային բազմազանությունը հայտնի է բազմամշակութայնություն եզրույթով, որն առաջացել է Կանադայում 20-րդ դարի 60-ական թվականներին, ապա լայն տարածում է գտնում նաև Ավստրալիայում, ԱՄՆ-ում և բազմաթիվ այլ երկրներում: Բազմազգ հասարակություններում բազմամշակութայնությունը դիտվում է որպես մշակութային բազմազանության կարգավորման մեխանիզմ, որն առավել բնորոշ է Եվրոպային՝ պայմանավորված այստեղ ընթացող միգրացիոն լայնածավալ գործընթացներով: Բազմամշակութայնության գլխավոր գործառույթը մշակութային բազմազանության և բազմակարծության պահպանումն է ինչպես առանձին երկրների շրջանակներում, այնպես էլ ամբողջ աշխարհի մակարդակով: Այն հակադրվում է մշակույթների միավորմանը և համընդհանուր մշակութային համակարգի ստեղծմանը: Բազմամշակութայնության գաղափարախոսության գլխավոր արժեքը հանդուրժողականությունն է, առանց որի անհնար է պատկերացնել բազմամշակութայնության նախագծի իրականացումն առհասարակ, քանի որ հենց հանդուրժողականությունն է ենթադրում բոլոր մշակույթների միաժամանակյա

[122] Տե՛ս **Леви-Стросс К.**, Раса и история// Путь масок, М., Республика, 2000, էջ 356:

գոյության հնարավորություն, տարբեր մշակույթների իրավահավասարություն, հարգանք այլ մշակութային արժեքների բազմազանության նկատմամբ: Ինչպես նշում է սլովենացի ժամանակակից մտածող Ս. Ժիժեկը, բազմամշակութայնությունը հարգանք է «Ուրիշի» ինքնության նկատմամբ: Բազմամշակութայնության գաղափարի կրողն «Ուրիշին» ընկալում է որպես փակ, «ճշմարիտ» հանրույթ՝ վերջինից պահպանելով որոշակի հեռավորություն և դրանով իսկ ապացուցելով սեփական մշակութային համակարգի գերակայությունը մյուսների նկատմամբ (սակայն ոչ բացահայտ կերպով): Նա բազմամշակութայնության գաղափարախոսության կրողին անվանում է ռասիստ, իսկ բազմամշակութայնությունը՝ ռասիզմ[123]: Սակայն այստեղ խոսքը ոչ բացահայտ, «թաքնված ռասիստի» մասին է, որը թեև չի հակադրվում «Ուրիշի» մշակութային արժեքներին, այնուամենայնիվ պահպանում է սեփական մշակութային համակարգի առավելությունը այլ մշակութային համակարգերի նկատմամբ: Բազմամշակութայնության կրողը, հարգելով «Ուրիշի» ազգային, էթնիկ առանձնահատկությունները, դրանով իսկ ցույց է տալիս սեփական գերազանցությունը:

Թեև առաջին հայացքից բազմամշակութայնությունը կարող է նվազեցնել կամ վերացնել սոցիալական լարվածությունը, սակայն չի կարող լուծել բռնության խնդիրը և ապահովել հասարակական ու պետական անվտանգությունը[124]: Դեռևս 2010թ.-ի հոկտեմբերին՝ Գերմանիայի Քրիստոնյա-դեմոկրատական միության անդամների հետ հանդիպման ժամանակ, կանցլեր Ա. Մերկելը պաշտոնապես հայտարարեց բազմամշակութայնության նախագծի ձախողման մասին, նշելով, որ բոլոր այն փորձերը, որոնք ուղղված էին Գերմանիայում բազմամշակութային հասարակության ստեղծմանը, ձախողվեցին: Նա նաև հավելեց, որ բոլոր ներգաղթյալները պարտավոր են ընդունել գերմանական մշակույթն ու արժեքները[125]: Եվ սա պատահական չէր, քանի որ մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ վկայում էին այն մասին, որ Գերմանիա ներգաղթածները ոչ միայն չեն կարողանում ինտեգրվել գերմանական հասարակությանը, դեռ ավելին՝ փորձում են խախտել տեղի սկզբունքներն ու նորմերը:

---

[123] Տե՛ս **Жижек С.,** Интерпассивность. Желание: влечение. Мультикультурализм, СПб., Алетейя, 2005, էջ 109-110:

[124] Տե՛ս **Тишков В.А.,** Реквием по этносу: Исследования по социально-культурной антропологии, М., Наука, 2003, էջ 250:

[125] О кризисе мультикультурализма// http://thedecline.info/ru/part1 (04.06.2016)

Յուրաքանչյուր չորրոդ ներգաղթյալ չի տիրապետում գերմաներեն լեզվին, որևէ շփում չի հաստատում գերմանացիների, գերմանական մշակույթի, սովորույթների հետ: Եթե մինչև Ա. Մերկելը որևէ մեկը չէր բարձրաձայնել բազմամշակութայնության նախագծի ճգնաժամի կամ ձախողման մասին, ապա վերջինիս հայտարարությունից հետո ողջ Եվրոպան հանդես եկավ նմանատիպ հայտարարություններով:

Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելի հայտարարությունից անմիջապես հետո նմանատիպ ելույթներով հանդես եկան նաև Բրիտանիայի վարչապետ Բ. Կեմերոնը և Ֆրանսիայի նախկին նախագահ Ն. Սարկոզին՝ հայտարարելով, որ Եվրոպայի բազմամշակութային մոդելը ձախողվեց: Ն. Սարկոզին նշեց, որ. «բոլոր նրանք, ովքեր ժամանում են Ֆրանսիա, պարտավոր են ներառվել ֆրանսիական հասարակություն՝ որպես ընդհանուր համայնք»[126]: Այս հայտարարությամբ Ն. Սարկոզին մեկ անգամ ևս հաստատեց, որ ֆրանսիական հասարակությունը չի պատրաստվում հանուն մարդասիրական և հանդուրժողական սկզբունքների հրաժարվել սեփական սկզբունքներից, կենսակերպից, քանի որ փորձը ցույց տվեց, որ հանդուրժողական և համբերատար վերաբերմունքը ներգաղթյալների նկատմամբ (խոսքը հատկապես վերաբերվում է իսլամիստներին, որոնց հոսքը դեպի Եվրոպա վերջին տասնամյակներում ահագնացող ծավալների է հասել) հասարակական հարաբերութուններում ներդաշնակ և խաղաղ հարաբերությունների հաստատման փոխարեն ուղեկցվում է անհանդուրժողական վարքով:

Եվրոպական այս երեք գերտերությունների առաջնորդների դիրքորոշումները բեկումնային եղան ողջ Եվրոպայի և եվրոպական հասարակության գիտակցության համար: Բազմամշակութայնության նախագծի ձախողման մասին բարձրաձայնվեց հենց այն ժամանակ, երբ միգրացիան դարձել էր մեծագույն խնդիր ողջ Եվրոպայի և նրա բնակչության համար: Իհարկե, «բազմամշակութային Եվրոպա» ստեղծելու նախագծի ձախողումը պայմանավորված էր նաև մի շարք այլ հանգամանքներով ևս (սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային և այլն), սակայն որպես գլխավոր և հիմնական պատճառ հանդես են գալիս լայնածավալ միգրացիոն գործընթացները թույլ զարգացած երկրներից դեպի առավել զարգացած երկրներ:

[126] Теперь и Саркози признал, что политика мультикультурализма провалилась http://inosmi.ru/europe/20110211/166444540.html (01.06.2016)

Հանգամանք, որն ուղեկցվում է Արևմուտքի ժողովրդի անհանդուրժողական և անբարյացակամ վարքով: Բազմամշակութայնության նախագծի ձախողման մասին դիրքորոշումները որոշ չափով փոխեցին հանդուրժողականության սոցիոմշակութային բովանդակությունն ու իմաստը արևմտյան հասարակությունների կողմից: Մինչ այդ հանդուրժողականություն քարոզող Արևմուտքը հենց ինքը հանդես եկավ հանդուրժողականության գաղափարի ժխտմամբ հանուն ներդաշնակ հասարակական հարաբերությունների հաստատման, քանի որ արդեն իսկ ակնհայտ է, որ որոշ դեպքերում հանդուրժողականության ժամանակակից ըմբռնումը սոցիալապես վտանգավոր է, իսկ ինտելեկտուալ առումով՝ խոցելի[127]:

Եվ իսկապես, թվում է, թե արևմտյան հասարակությունների կողմից խրախուսվող բազմամշակութային սոցիոմշակութային համակարգ կառուցարկելուն ուղղված արժեքներն ու նորմերը հնարավորություն են տալիս ստեղծել այնպիսի սոցիալական համակարգեր, որտեղ կհարգվեն և կընդունվեն հասարակության բոլոր անդամների իրավունքներն ու ազատությունները, սակայն բազմամշակութայնության սկզբունքով կառուցարկված հասարակության նախագծի մոդելն առաջարկում է ինչպես սոցիալական, մշակութային և քաղաքական բազում խնդիրների լուծումներ, այնպես էլ հարուցում է նոր խնդիրներ և մարտահրավերներ, որոնց առաջ կանգնած է ժամանակակից քաղաքակրթությունը: Բանն այն է, որ եթե ավանդական, միասեռ մշակույթ ունեցող հասարակություններում մարդը տվյալ սոցիոմշակութային արժեքների և նորմերի հետ անհամաձայնություն կամ աշխարհայացքային հակասություն ունենալու դեպքում կարող է հայտնվել հասարակության լուսանցքում կամ էլ հարկադրաբար հարմարվել տվյալ սոցիոմշակութային կարգին, ապա բազմամշակութային հասարակությունում նա ապահովագրված է լուսանցքում հայտնվելու կամ տվյալ սոցիոմշակութային կարգին հարկադրաբար ենթարկվելու վտանգից: Սակայն այս դեպքում արդեն նա հարկադրված է ճանաչելու «Ուրիշի» գոյությունը և նրա հետ տվյալ հասարակությունում գոյակցելու անհրաժեշտությունը, որի իրականացումը ոչ միշտ է հնարավոր: Միգրացիոն ժամանակակից հոսքերի և ժողովրդագրական տեղաշարժերի հետևանքով հաճախ միմյանց հետ մի

[127] Տե՛ս **Carson D.A.**, The Intolerance of Tolerance, Wiliam B. Eerdmans Publishing Company, Cambridge, 2012, էջ 2:

սոցիոմշակութային տարածության մեջ են հայտնվում միմյանց նկատմամբ հակադիր արժեքներ և նորմեր ունեցող մշակույթների ներկայացուցիչներ, ինչը նոր մարտահրավերներ է նետում տվյալ հասարակություններին: Առաջին հերթին հաճախ նման դեպքերում մարտահրավերները նետվում են հասարակության անվտանգությանը, և հանդուրժողականությունը տվյալ դեպքում կարող է հանգեցնել հակադիր արդյունքների:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ ժամանակակից աշխարհում ընթանում է ոչ թե մշակույթների միաձուլման, այլ բազմազանացման գործընթաց, ինչն էլ համաշխարհայնացման պայմաններում հանգեցնում է մշակույթների միջև երկխոսության հաստատման անհրաժեշտությանը: Համաշխարհայնացման պայմաններում մշակութային բազմազանությունն ու բազմակարծությունն անխուսափելի երևույթներ են: Արևմուտքը պետք է հրաժարվի համընդհանուր մշակութային համակարգ ստեղծելու իր նկրտումներից, որն անխուսափելիորեն ուղեկցվում է անհանդուրժողական վարքով և ապակառուցողական գործընթացներով, և փորձի ստեղծել այնպիսի նախադրյալներ, որոնք կապահովեն մշակութային երկխոսության իրականացումը՝ հիմնված հանդուրժողականության սկզբունքի գերակայության վրա, քանի որ որպես մշակութային երկխոսության կարևոր նախապայման արդի աշխարհում հանդես է գալիս հանդուրժողականության սկզբունքը:

3.2. Հանդուրժողականությունը որպես «Յուրայինի» և «Օտարի» միջև փոխհարաբերության հաստատման սոցիոմշակութային նորմ

Ժամանակակից աշխարհում ընթացող համաշխարհայնացման, մշակութային բազմազանության և բազմակարծության հաստատման, ավանդական մշակութային համակարգերի ճգնաժամի, սոցիոմշակութային փոխակերպումների, ծայրահեղականության զանազան դրսևորումների պայմաններում հանդուրժողականության՝ որպես սոցիոմշակութային նորմի հաստատման կարևորությունը ստանում է հավելյալ արդիականություն, քանզի ինչպես ցույց է տալիս մերօրյա իրականության սոցիոմշակութային տեսանկյունից ապակառուցողական մի շարք երևույթների իրողություն լինելը՝ բազմամշակութային սոցիոմշակութային կարգի կառուցարկումն ամենևին էլ չի ենթադրում հանդուրժողականության որպես սոցիոմշակութային նորմի սահմանում, և բազմամշակութային հասարակությունը միշտ չէ, որ ենթադրում է տվյալ հասարակությունում հանդուրժողականության առկայություն և ընդունում: Մինչդեռ հանդուրժողականությունն այն սոցիոմշակութային նորմն է, որը հնարավոր է դարձնում «Յուրայինի» և «Օտարի» միջև ներդաշնակ փոխհարաբերությունների հաստատումը և սոցիալական հարաբերությունների ներդաշնակ գոյությունն առհասարակ: Հանդուրժողականությունը մարդկային փոխհարաբերությունների ձևավորման կառուցողական կարևոր աշխատակարգ է, որը նպաստում է հասարակության նպատակաուղղված զարգացմանը: Միևնույն ժամանակ հանդուրժողականությունը հնարավորություն է տալիս սոցիալական, քաղաքական խնդիրների, կոնֆլիկտների խաղաղ և քաղաքակիրթ ճանապարհով լուծման ելքեր փնտրելու համար՝ խուսափելով հնարավոր հակասություններից, բռնությունից, անհանդուրժող վարքից և սոցիոմշակութային ապակառուցողական այլ երևույթներից: Հանդուրժողականության հիմքում ընկած է մարդու իրավունքների և ազատությունների ընդունումը, բոլորի խոսքի ազատ արտահայտման իրավունքը, հավասարության ընդունումը, այլ ազգերի առանձնահատկությունները, սովորույթները, նվաճումները, մշակութային արժեքները ընդունելու պատրաստակամությունը:

Հանդուրժողականությունը երկխոսության կարողություն է, յուրահատուկ երկխոսություն «Յուրայինի» և «Օտարի» միջև, որը հասարակական առաջընթացի և կանոնակարգման անհրաժեշտ պայմաններից մեկն է: Հենց մարդկանց փոխհարաբերության ընթացքում է բացահայտվում հանդուրժողականության և երկխոսության նշանակությունը: Հանդուրժողականությունը հարգանք է Օտարի ինքնավարության և ազատ ընտրության նկատմամբ: Այն «Յուրայինի» և «Օտարի» միջև ներդաշնակության հաստատման և ապահովման կարևոր միջոց է: Պահպանելով սեփական սոցիոմշակութային տարածության սահմանները՝ «Յուրայինն» ընդունում և հարգում է «Օտարի» սահմանները՝ չոտնահարելով վերջինիս տարբերության իրավունքը և սեփական սահմաններ ունենալու հնարավորությունը: Ընդ որում, տարբեր հասարակություններում տարբեր չափով է հստակեցված հիշյալ սահմանները: Մասնավորապես, այն հասարակություններում, որտեղ գերակա են պահպանողական (կոնսերվատիվ) տրամադրություններն ու արժեհամակարգերը, այնքան էլ հստակ չեն տարանջատված «Յուրայինի» և «Օտարի» միջև սահմանները, քանի որ այստեղ գերիշխում է կոլեկտիվին, ընդհանուրին պատկանելու գիտակցումը: Մինչդեռ ազատական-ժողովրդավարական սոցիոմշակութային արժեքներով և սկզբունքներով կառուցարկված հասարակություններում գերակայում է անհատի առաջնայնության սկզբունքը, քանի որ հստակ տարաանջատված են «Ես»-ի և «Ուրիշ»-ի սահմանները:

Արդի քաղաքակրթական, քաղաքական և մարդաբանական զարգացումների համատեքստում անհատապաշտությունը կարծես դառնում է սոցիոմշակութային իրականության կառուցարկման հիմնական սկզբունք: Այս համատեքստում բրիտանացի հայտնի սոցիոլոգ և փիլիսոփա Զ. Բաումանն իրավացիորեն նկատում է, որ ժամանակակից աշխարհին բնորոշ անհատապաշտության պայմաններում մարդիկ հաճախ հրաժարվում են սոցիալական կյանքի երկարաժամկետ կազմակերպման նախագծերից՝ նախապատվությունը տալով կյանքի կազմակերպման անհատական-կարճաժամկետ նախագծերին[128]: Չմանրամասնելով, սակայն, անհատապաշտական հասարակության սոցիոմշակութային կյանքի առանձնահատկությունները, հարկ է նկատել, որ ստեղծված սոցիոմշակութային նոր կարգի պայմաններում

[128] Տե՛ս **Бауман З.**, Индивидиуализированное общество, М., изд. «Логос», 2005, էջ 28:

անհրաժեշտություն է առաջանում սոցիալական կյանքում մի նոր սկզբունքի կիրառման համար, որը կապահովի սոցիալական կյանքի խաղաղ և ներաշնակ համակեցությունը կյանքի կազմակերպման հատվածական և անհատականացված սոցիոմշակութային պայմաններում: Անհատապաշտական սկզբունքներով առաջնորդվող հասարակությունը, որն այլևս ինքնավար անհատների ամբողջություն է, կարիք է զգում հաղորդակցման և շփման մի նոր ձևի՝ հիմնված հանդուրժողականության սկզբունքի վրա: Լայն իմաստով հանդուրժողականությունը համբերատար վերաբերմունք է Օտարի նկատմամբ, ինչպես «օտար» մարդկանց, այնպես էլ «օտար» մշակութային արժեքների նկատմամբ: Հանդուրժողականությունը ենթադրում է Օտարի արժևորում, Օտարի առկայության բարյացակամ ընդունում, երկխոսության և համագործակցության պատրաստակամություն, այն բանի գիտակցումը, որ գոյություն ունեն ճշմարտությանը հասնելու տարբեր ուղիներ: Հանդուրժողականությունը ենթադրում է անհատի ազատ հաղորդակցման և փոխհարաբերման կարողություն: Սակայն բազմակարծության և բազմամշակութայնության սկզբունքներով համաշխարհայնացվող արդի աշխարհում հանդուրժողականության՝ որպես սոցիոմշակութային նորմի հաստատումը հանդիպում է քաղաքակրթական, քաղաքական և սոցիոմշակութային մի շարք խոչընդոտների: Համաշխարհայնացման պայմաններում հանդուրժողականության հաստատումն առաջին հերթին բախվում է այս կամ այն քաղաքակրթությունների, մշակութային համակարգերի, հասարակությունների կամ ազգությունների բացառիկության հավակնություններին: Պարադոքսալ մի օրինաչափությամբ բազմակարծության և բազմամշակութայնության տարածման առաջատար հասարակությունները հիշյալ սկզբունքների հաստատումը հնարավոր են համարում միայն իրենց «առաջատարության», «ընտրյալության» և «բացառիկության» ընդունման պայմանով: «Ընտրյալության», «բացառիկության» կամ «աստվածընտրյալության» հատկությունը պատմության ընթացքում բնորոշ է եղել բազում հասարակությունների և ազգությունների: Արդի համաշխարհայնացման պայմաններում «ընտրյալության» հավակնություններ է դրսևորում հիմնականում արևմտյան քաղաքակրթությունը: Անշուշտ, արդի աշխարհը մարդակենտրոն բազում արժեքների հաստատման համար պարտական է արդիականացման փուլ ապրած

ժամանակակից քաղաքակրթությանը, սակայն արևմտակենտրոնությունը (մասնավորապես՝ եվրոպակենտրոնությունը) արժանացել է բազում քննադատական գնահատականների և մոտեցումների առաջին հերթին հենց արևմտյան քաղաքակրթության ներկայացուցիչ մտավորականության կողմից, ինչպես օրինակ՝ Հանթինգթոնի, Լևի-Ստրոսի, Ֆուկոյի, Չոմսկու և այլոց աշխատություններում: Հիշյալ և այլ մտածողները շեշտադրում են, որ արդի քաղաքակրթության սոցիոմշակութային համընդհանուր կարգի հաստատումը հնարավոր է միայն բոլոր քաղաքակրթությունների և մշակույթների միջև «սոցիոմշակութային դաշինքի» կայացման դեպքում, ինչն արդեն ենթադրում է հանդուրժողականության՝ որպես միջմշակութային երկխոսության հաստատման կարևոր սկզբունքի կայացում: Ժամանակակից աշխարհը մարդկության առջև դնում է մի նոր խնդիր. գոյություն ունեցող բազմազանության միասնականության պահպանում, ինչը հնարավոր է միայն սեփական բացառիկության ժխտման պարագայում[129]: Արդի համաշխարհայնացվող աշխարհում միայն սեփական գերազանցության ժխտման դեպքում հնարավոր կլինի հաստատել խաղաղ և ներդաշնակ հասարակական հարաբերություններ:

Հարկ է նկատել, որ համաշխարհայնացման պայմաններում Յուրայինի և Օտարի փոխհարաբերության առանձնահատկությունները պայմանավորված են հետևյալ հիմնական հանգամանքներով.

1. **Ավանդականության ճգնաժամով.**

Համաշխարհայնացումը բնութագրվում է նաև մշակութային փոխներթափանցման գործընթացներով, ինչի հետևանքով մի կողմից ավանդական մշակութային համակարգերը մշակութային համահարթեցման պայմաններում աստիճանանաբար վերանում են, մյուս կողմից մշակութային փոխներթափանցումները նպաստում են բազմամշակութային համակարգերի առաջացմանը: Միջմշակութային հաղորդակցության սերտացման և հաճախականացման արդյունքում հաճախ վերանում են մշակութային սահմանները, տարբեր նկարագիր ունեցող մշակույթները ձուլվում են մեկ մշակութային համակարգի մեջ, ինչի հետևանքով ճգնաժամ է ապրում ավանդականության մշակութային հարացույցը:

---

[129] Տե՛ս **Баева Л. В.,** Толерантность: идея, образы, персоналии: монография, Астрахань, Издательский дом «Астраханский университет», 2009, էջ 4-5:

Ավանդականության հիմքում ընկած են մի շարք սկզբունքներ, որոնցից կարելի է առանձնացնել սոցիալական հստակ աստիճանակարգության, ավանդույթի՝ որպես կենսիմաստային ուղղորդիչի գերապատվության, մշակութային ժառանգականության, արյունակցականության, համայնակենտրոնության, արտատնտեսական հարաբերությունների գերակայության, փուլային զարգացման, պահպանողականության, սոցիալական գործունեության արժեքային ուղղվածության, հեղինակապաշտության և այլ սկզբունքները: Մինչդեռ հետավանդականության հիմքում ընկած են ավանդականության արժեհամակարգին երբեմն հակադիր արժեքներ և սկզբունքներ, ինչպիսիք են բանապաշտությունը, զարգացմանն ուղղված սոցիալական գործունեությունը, նորարարությունը, անհատակենտրոնությունը, ավանդական արժեքների նկատմամբ ինստրումենտալ արժեքների գերակայությունը, նպատակաուղղված գործունեությունը և այլն: Համաշխարհայնացման գործընթացների և բազմամշակութային հասարակության նախագծի կայացմանը զուգընթաց՝ ավանդականության կենսիմաստային կողմնորոշիչներն իրենց տեղը զիջում են հետավանդականության կողմնորոշիչներին, որոնցից կարելի է առանձնացնել բազմաբևեռ և բազմակենտրոն սոցիոմշակութային կարգերը, ոճերի բազմազանությունը, բարոյական և մշակութային արժեքների հարաբերականությունը, սոցիոմշակութային ուղղահայաց աստիճանակարգության փոխարեն սոցիոմշակութային հորիզոնականությունը, հակադոգմատիզմը և այլն: Սոցիոմշակութային նման փոխակերպումները ստեղծում են ինչպես նպաստավոր պայմաններ Յուրայինի և Օտարի փոխհարաբերությունների հաստատման համար, այնպես էլ դառնում են քաղաքակրթական, քաղաքական և մշակութային մարտահրավերների հետ բախման պատճառ: «Ժամանակակից սոցիոմշակութային զարգացման առանձնահատկությունները բնորոշվում են արժեքների համաշխարհայնացմամբ, ինչը հանգեցնում է ոչ թե պարզապես «Ուրիշի»՝ որպես համընդհանուր կապի եզրափակիչ օղակի ավարտին, այլ, ինչն առավել կարևոր է, սոցիալական փոխգործակցության նոր մակարդակի լինելիությանը, որտեղ տեղային նախկին գործոնները կորցնում են իրենց նշանակությունը … Այս հանգամանքն իր առանձնահատուկ սոցիոմշակութային կնքին է դնում հասարակական համակեցության

կազմակերպման ողջ համակարգի վրա»[130]: Համաշխարհայնացման պայմաններում ազգային-ավանդական մշակույթը վերածվում է բովանդազուրկ մի համակարգի, որը կորցրել է իր երբեմնի դերն ու նշանակությունը և հարկադրված է կամ հանդուրժել համաշխարհայնացման տրամաբանությանը համահունչ արժեքների գոյության իրավունքը և համալրվել նոր արժեքներով, կամ դադարել ընդհանրապես գոյություն ունենալ՝ իր տեղը զիջելով նոր մշակութային համակարգերին: Մշակութային նման փոխակերպումները, որպես կանոն, ուղեկցվում են մշակութային համակարգի ճգնաժամով, որի պատճառներն են վստահության բացակայությունն ինչպես սոցիալական խմբերի, ինստիտուտների, այնպես էլ օտարների նկատմամբ առհասարակ, սեփական անզորության գիտակցումը, կողմնորոշումը ներկայի և ոչ անցյալի կամ ապագայի նկատմամբ, սեփական մշակութային արժեքների իդեալականացումը, անհանգստության, վախի, անորոշության զգացումն ապագայի նկատմամբ: Համաշխարհայնացման պայմաններում, երբ նախկինում օտար և անհասանելի թվացողը դարձել է ավելի հասանելի և նույնիսկ «հոգեհարազատ», անընդհատ բախում է տեղի ունենում Յուրայինի և Օտարի մշակութային արժեքների միջև: Շատ հաճախ օտար մշակութային արժեքները Յուրայինի կողմից ընկալվում են որպես տարօրինակ, անմեկնելի, անծանոթ, երբեմն՝ վտանգավոր և անհաղթահարելի: Մշակութային հիշյալ արժեքների տարբերության և հակասության արդյունքում ձևավորվում են «Յուրայինի մշակույթ» և «Օտարի մշակույթ» հասկացությունները. հանգամանք, որը կարող է ուղեկցվել ինչպես «նորի» նկատմամբ հետաքրքրությամբ և հանդուրժողականությամբ, այնպես էլ վերջիններիս քննադատությամբ և արմատական մերժումով, ինչն էլ հանգեցնում է բախումների և կոնֆլիկտների: Իհարկե, Օտարի մշակութային արժեքների նկատմամբ վերաբերմունքն անմիջականորեն պայմանավորված է Յուրայինի ազգային և հոգեբանական մի շարք առանձնահատկություններով (աշխարհընկալում, արժևորում, գիտակցում, հանդուրժողականություն, ավանդույթ, կարծրատիպեր և այլն), թե որքանով է Յուրայինն ընդունում, հասկանում և արժևորում Օտարին: Արդի աշխարհում

[130] **Սողոմոնյան Գ. Ա.,** Փողը որպես ռացիոնալության փոխակերպումների սոցիոմշակութային որոշարկիչ, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 132.4, Եր., 2010, էջ 21:

յուրօրինակ երկխոսություն է ընթանում «Յուրայինի մշակույթի» և «Օտարի մշակույթի» միջև, որը կարող է ուղեկցվել ինչպես հանդուրժողականության դրսևորմամբ, այնպես էլ ագրեսիայով և թշնամանքի զգացումով:

Հարկ է նաև նկատել, որ հանդուրժողական վերաբերմունք հնարավոր է դրսևորել միայն սոցիալական աստիճանակարգության հավասար մակարդակներում գտնվող անհատների միջև: Դժվար է պատկերացնել կառուցողական հանդուրժողական վերաբերմունք, օրինակ, ավանդական մշակութային համակարգ ունեցող հասարակություններում, որտեղ մարդիկ ունեն որոշակի սահմանված դիրք սոցիալական աստիճանակարգության վերին կամ ստորին մակարդակներում (ինչպես օրինակ՝ ճորտ-ավատատեր հարաբերությունները ավատատիրական հասարակություններում, ստրուկ- ստրկատեր՝ ստրկատիրական հասարակություններում):

2. Միաչափության, համահարթեցման, միօրինակության միտումներով.

Համաշխարհայնացման գործընթացներն ուղեկցվում են ինչպես տնտեսական, քաղաքական միասնական համակարգերի կայացման գործընթացներով, այնպես էլ մշակութային համահարթեցման, զանգվածային մշակույթի տարածման, սոցիոմշակութային տարբեր համակարգերի ձուլման գործընթացներով: Կորցնելով իրենց նախկին որոշակիությունը՝ սոցիոմշակութային համակարգերը ձեռք են բերում նոր՝ նախկինից էապես տարբերվող «անորոշ որոշակիություն»: Փոխվում են կյանքի նկատմամբ պատկերացումները, գաղափարները, արժեքային կողմնորոշիչները: Մարդը շարժվում է անորոշ սոցիոմշակութային ուղղությամբ՝ անմիջականորեն կրելով նաև համաշխարհայնացման բացասական ազդեցությունները: Նման միտումներն առավել բնորոշ են հատկապես անցումային փուլում գտնվող պահպանողական հասարակություններին, որտեղ սեփական ավանդույթներից, ազգային և մշակութային արժեքներից հրաժարվելը ենթադրում է ազգային դիմագծի ձևախեղում, ինքնության կորուստ, անցյալի պատմական ժառանգությունից հրաժարում:

Ներմուծելով նորանոր օտար արժեքներ, կենսակերպ, արժեքային կողմնորոշիչներ՝ համաշխարհայնացումը ստեղծում է նոր սոցիոմշակութային տարածություն, որտեղ ապրում և գործում են տարբեր ինքնություն ունեցող

անհատներ: Աստիճանաբար վերանում են Յուրայինի և Օտարի միջև դարերով հաստատված սահմանները: Սոցիոմշակութային նախկին տարբերություններին և բազմազանություններին փոխարինելու են գալիս միաչափությունն ու միօրինակությունը, ինչն էլ հաճախ ուղեկցվում է մարդու օտարումով: Այս խնդրին բավականին հանգամանալից անդրադարձել է ֆրանկֆուրտյան դպրոցի հայտնի տեսաբան Հ. Մարկուզեն իր հայտնի «Միաչափ մարդը» աշխատությունում (1964թ.): Ըստ Հ. Մարկուզեի՝ արդի արդյունաբերական հասարակություններում մարդկանց վարքն ու պահանջմունքներն աստիճանաբար համահարթեցվում են, ի հայտ են գալիս արդյունաբերական հասարակություններին բնորոշ միաչափությունն ու միօրինակությունը: Թեև առաջին հայացքից ժամանակակից հասարակություններն անսահմանափակ ազատություն են շնորհում իրենց անդամներին, սակայն իրականում ստեղծվել է զանգվածային մտածողության և զանգվածային մշակույթի մի տեսակ, որի միջոցով կառավարվում են մարդկանց ճակատագրերը: Զարգացած արդյունաբերական քաղաքակրթությունում գերիշխում է հարմարավետ, համաչափ, «ժողովրդավարական անազատություն», ինչը խոսում է տեխնիկական զարգացման մասին[131]:

Մարդու միաչափությունն ապակառուցողական անհանդուրժողականության դրսևորման պատճառներից մեկն է, քանզի միօրինակության, մշակութային համահարթեցման պայմաններում Ուրիշի այլությունը հաճախ ընդունվում է որպես օրինաչափությունից, սովորականից դուրս գտնվող մի երևույթ, որը կարծես սպառնում է միօրինակության «արդարացվածությանը»: Իհարկե «կենդանական ու բուսական աշխարհում չկա որևէ օրգանիզմ, որը բացարձակապես նման լինի մեկ ուրիշին: Այդպես է նաև հասարակության մեջ. չկա մարդ, որ բացարձակ առումով զգա, մտածի, գիտակցի ու վարվի այնպես, ինչպես մեկ ուրիշը: Նշանակում է՝ բացարձակ միաչափ մարդ և միաչափ մտածողություն չի կարող լինել»[132]: Սակայն մյուս կողմից արդյունաբերական հասարակության զարգացմանը համընթաց ընթացող սոցիոմշակութային փոխակերպումները հանգեցնում են վարքի միատարրությանն ու

[131] Տե՛ս **Маркузе Г.**, Одномерный человек, М., «REFL_book», 1994, էջ 1:
[132] **Հովսեփյան Ա.,** Սոցիալական փիիսոփայության հիմունքներ, Եր., Դե-ֆակտո, 2003, էջ 254:

միօրինակությանը, ինչը փոխակերպումների է ենթարկում Յուրային-Օտար փոխհարաբերությունների ավանդական եղանակները:

Արդի հասարակության միաչափության ու անդեմության խնդրին անդրադարձել է նաև ֆրանսիացի պոստմոդեռնիստ մտածող Ժ. Բոդրիարը: Ժ. Բոդրիարն արդի քաղաքակրթական փոխակերպումների հետևանքով ի հայտ եկած միաչափության և միակերպության խնդիրը քննարկում է այսպես կոչված «լռակյաց մեծամասնության» վերլուծության համատեքստում: Ըստ Բոդրիարի նախկինում գործառնող սոցիալական ռեֆերենտներն այլևս չեն բավարարում սոցիալական արդի իրողությունների իմաստավորմանը: Որպես ժամանակակից աշխարհի սոցիալական միակ ռեֆերենտ Բոդրիարը դիտարկում է «լռակյաց մեծամասնությանը»[133]: Ինչ-որ իմաստով «լռակյաց մեծամասնությունը» միաչափ հասարակությունն է, որտեղ վարքի գերակա եղանակներն են անտարբերությունն ու հարմարվողականությունը: Լռակյաց մեծամասնության, միաչափ հասարակության, զանգվածային մշակույթի գործոններով պայմանավորված սոցիոմշակութային նոր միջավայրում Յուրային-Օտար փոխհարաբերությունների հաստատումը մի կողմից ավելի դյուրին է դառնում, մյուս կողմից էլ նոր պայմաններում միաչափության, լռակյաց մեծամասնության, զանգվածային մշակույթի արժեհամակարգում չտեղավորվող Օտարների նկատմամբ լավագույն դեպքում դրսևորվում է պասիվ-ապակառուցողական հանդուրժողականություն, որտեղ սպառման հոգսով տարված լռակյաց մեծամասնությունը դառնում է անտարբեր, հետևաբար նաև խոցելի ցանկացած այլության, օտարության նկատմամբ: Փաստորեն միաչափությունն ու մշակութային համահարթեցումը մի կողմից ընդլայնում են Յուրայինի սահմանները՝ նրա մեջ ընդգրկելով սպառողական հոգսով ապրող զանգվածային մշակույթի, լռակյաց մեծամասնության ներկայացուցիչներին, մյուս կողմից էլ Օտարի նկատմամբ պասիվ-ապակառուցողական հանդուրժողականության դրսևորումը խեղաթյուրում է հանդուրժողականության բուն նշանակությունն ու նպատակը:

3. Անոմիայի դրսևորումներով.

---

[133] Տե՛ս **Бодрийяр Ж.,** В тени молчаливого большинства/ в книге Призрак толпы, **Ясперс К., Бодрийяр Ж.,** М., Алгоритм, 2007, էջ 197-198:

Համաշխարհայնացման պայմաններում տեղի է ունենում անցումն ավանդական սոցիալական համակարգերից «նոր» սոցիալական համակարգերին: Ավանդույթներով և մշակութային արժեքներով ազատությունը «սահմանափակող» նախկին հասարակական համակարգից անհատը հայտնվում է նոր սոցիալական համակարգում, որտեղ գործում է «անսահմանափակ ազատության» գաղափարը: Չկարողանալով կողմնորոշվել անսահմանափակ ազատությամբ օժտված նոր սոցիալական համակարգում՝ անհատը դժվարանում է ներառվել նոր սոցիալական հարաբերություններին: Թուլանում են անհատ-հասարակություն, անհատ-ընտանիք ավանդական կապերը: «Կեցության որոշարկված սոցիալական կապերի թուլացման, աստիճանական տրոհման, երբեմն՝ դրանց անհետացման հետևանքով խաթարվում է «ավանդական» հասարակության՝ մարդու կենսաշխարհին բնորոշ կոլեկտիվ կապերի և հարաբերությունների հարուստ համակարգը»[134]: Ժամանակակից հասարակությունները, հայտնվելով ճգնաժամային փուլում, ձեռք են բերում որակական նոր հատկանիշներ՝ քաոսային վարքագիծ, անորոշություն, անկանխատեսելիություն, որոնք էլ համակարգի երկատման հիմնական պատճառներ են[135]: Բազմազանության ընդունումն ու տարածումը ստեղծում են այնպիսի սոցիոմշակութային միջավայր, որտեղ այլևս չի գործում մշակութային, արժեքաբանական որևէ համակարգի համար անհրաժեշտ արժեքային ուղղահայացը: Եթե ընդունելի են վարքի զանազան դրսևորումները, որոնց հիմքում եթե նույնիսկ առկա էլ չեն բռնության դրսևորումները, ապա վերանում են ընդօրինակելի վարքանմուշները, կյանքին իմաստ տվող ուղղորդիչները, ինչն էլ հանգեցնում է կենսիմաստային ճգնաժամերի, մարդիկ կորցնում են կյանքում կողմնորոշվելու և ինքնանույնականացվելու համար անհրաժեշտ մշակութային կամ արժեքաբանական առանցքները: Վարքի, կենսիմաստային ուղղորդիչների երկակիության ու հարաբերականության պայմաններում հասարակություններում տարածում է գտնում այսպես կոչվող *անոմիա* երևույթը, որի պայմաններում մարդիկ հաճախ կորցնում են բարոյական, արժեքաբանական, ինչպես

---

[134] **Սողոմոնյան Գ. Ա.**, Ժամանակակից մարդաբանական ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2016, № 1 (19), էջ 19:

[135] Տե՛ս **Wallerstein I.**, Globalization or the Age of Transition?, International Sociology, Vol 15, № 2, SAGE (London, Thousand Oaks, CA and New Delhi), 2000, էջ 251:

նաև գեղագիտական կողմնորոշիչները: Համաշխարհայնացման հետևանքով առաջացած կենսիմաստային ճգնաժամի և անորոշության պայմաններում ի հայտ է գալիս սոցիալական կեցության մի տեսակ, որը մասնագիտական գրականությունում հայտնի է «անոմիա» եզրույթով: Անոմիան հասարակության այնպիսի վիճակ է, որի դեպքում նրա անդամներից շատերը գիտակցաբար խախտում են էթիկայի և իրավունքի հայտնի նորմերը[136]: Այն ավանդական արժեքների և նորմերի համակարգի փլուզումն է, այն արժեքների և նորմերի, որոնցով կազմակերպվում է հասարակության բնականոն կենսագործունեությունը: Հաճախ նոր սոցիալական համակարգերը բացասական ազդեցություն են գործում հասարակության առանձին անդամների վրա՝ նրանց ուղղորդելով ոչ թե համընհանուր նորմերի և սկզբունքների վրա հիմնված կառուցվածքաստեղծ վարքի դրսևորմանը, այլ անհանդուրժողականության և չենթարկվելու ցանկության առաջացմանը[137]: Նախկին սոցիալական համակարգերում գերիշխող բոլոր այն նորմերն ու արժեքները, որոնք կարողանում էին պահպանել ավանդական հասարակական կարգը, նոր սոցիալական համակարգերի առաջացման պայմաններում այլևս անզոր են գործառնել, քանի որ չեն համապատասխանում նոր պահանջներին: Անոմիային բնորոշ է ինչպես հասարակության ապակառուցողականությունը (բռնություն, հանցագործություններ), այնպես էլ ընկճվածությունը (հոգնածություն, ինքնասպանություն, հոգեկան խանգարումներ), ինչն ուղեկցվում է «իրականությունից կոլեկտիվ փախուստի» տարբեր եղանակներով: Արդյունքում, ըստ Ժ. Բոդրիարի, «affluent society» կամ «permissive society» (հանդուրժող հասարակություն) հասարակություններին բնորոշ այս միտումները հանգեցնում են արմատական անհավասարությանը[138]: Առաջանում է մի վիճակ, երբ այլևս լավի և վատի, բարու և չարի, գեղեցիկի և տգեղի մասին պատկերացումներն աղճատվում են՝ երբեմն դառնալով ցինիզմի, անտարբերության, նիհիլիզմի տարածման պատճառ, ինչն էլ խախտում է սոցիալական վարքի նորմավորվածությունը, որի պայմաններում սկսում են դրսևորվել հասարակության

---

[136] Տե՛ս **Кара-Мурза С. Г.,** Аномия в России: причины и проявления, М., Научный эксперт, 2013, էջ 4:

[137] Տե՛ս **Мертон Р.К.,** Социальная структура и аномия// Социальная теория и социальная структура, М., изд. АСТ Москва “Хранитель”, 2006, էջ 243-254:

[138] Տե՛ս **Бодрийяр Ж.**, Общество потребления. Его мифы и структуры, М., Республика, Культурная революция, 2006, էջ 222:

կողմից անընդունելի համարվող վարքի այնպիսի ձևեր, ինչպիսիք են հարբեցողությունը, թմրամոլությունը, հանցագործությունները, մարմնավաճառությունը և այլն: Փաստորեն արժեքային, մշակութային և բարոյական համահարթեցման սկզբունքներով առաջնորդվող հանդուրժողականությունը կարող է հանգեցնել հակասական արդյունքների:

Համաշխարհայնացման պայմաններում նոր սոցիալական համակարգերին բնորոշ «անսահմանափակ ազատությունը» հաճախ ուղեկցվում է ավանդական մշակութային արժեքների իմաստազրկմամբ: Սոցիոմշակութային արդի իրականությունում ավանդական արժեքները կորցնում են երբեմնի ազդեցությունը՝ իրենց տեղը զիջելով «արդիական» արժեքներին: Եթե նախկին սոցիալական համակարգերն իրենց բարոյական, մշակութային հիմնական արժեքներով և սկզբունքներով կազմակերպում էին հասարակության սոցիալական կյանքը, ապա նոր սոցիալական համակարգերը, որոնք ղեկավարվում են երբեմն անհասկանալի, անորոշ և խորթ արժեքներով և «անսահմանափակ ազատությամբ», պարզապես ի վիճակի չեն ապահովել հասարակության անդամների անվտանգությունը: «Այդ փոփոխությունը ենթադրում է, ի թիվս այլոց, անհատի պատասխանատվության ոլորտի ընդլայնում սոցիալական հարաբերություններում և բարոյական պատկերացումների արդիականացում: Լայն իմաստով դա նշանակում է նոր ինքնության ձևավորում, որով պայմանավորված է մարդկանց տվյալ հանրույթի՝ գլոբալ սոցիումին ներգրավվելու և հետագա զարգացման հնարավորությունը»[139]: Նոր սոցիալական համակարգերում անհատն օժտված է անսահմանափակ ազատությամբ, ինչը ենթադրում է անհատի կողմից պատասխանատվության բարձր աստիճան, քանի որ ազատությունը և պատասխանատվությունը պայմանավորված են մեկը մյուսով և գտնվում են դիալեկտիկական միասնության մեջ: Այս իմաստով կարելի է համաձայնել, որ «ազատությունն այն գաղափարի գիտակցումն է, որ ազատությունը վտանգված է»[140], այսինքն՝ ազատության իրական արժեքը կարող է գիտակցել միայն նա, ով պատասխանատվություն է կրում ազատության համար: Արդի փոխակերպումների

---

[139] **Դեմիրճյան Մ.Հ.,** Ազգային ինքնությունը արժեհամակարգի փոխակերպման ժամանակակից պայմաններում, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 140.4, Եր., 2013, էջ 35:

[140] **Левинас Э.,** Избранное. Тотальность и бесконечное, М., СПБ., Университетская книга, 2000, с. 75.

պայմաններում չկարողանալով կողմնորոշվել «անսահմանափակ ազատությամբ» օժտված նոր սոցիալական համակարգում՝ անհատը երբեմն սկսում է ուղիներ փնտրել և փախչել այդ ազատությունից: Արդի հասարակություններում, որտեղ գործում են ազատության և հավասարության սկզբունքները, անհատը հաճախ նախընտրում է լռել, ընտրում է «քաղաքական համրություն» ցուցաբերելու մարտավարությունը: Արդի սոցիոմշակութային իրողությունների համատեքստում առկա նման ազատությունը էկզիստենցիալիստ մտածող Ա. Քամյուն անվանում է «աբսուրդային ազատություն»՝ գտնելով, որ մարդուն միայն թվում է, թե նա ազատ է իր գործողություններում, մինչդեռ նա միայն այդ ազատության ստրուկն է և ոչ այդ ազատության պատասխանատվության կրողը[141]:

Արդի հասարակություններում, որտեղ ավանդույթներն իրենց տեղը զիջում են «արդիականության արժեքներին», մարդիկ հայտնվում են սոցիոմշակութային մի նոր տարածությունում, որտեղ վարքի գլխավոր կողմնորոշիչներն են ազատությունն ու ինքնուրույնությունը: Իհարկե, չի կարելի պնդել, որ ժամանակակից աշխարհում կամ արդի քաղաքակրթությունում ավանդական հասարակություններին բնորոշ սոցիոմշակութային արժեքներն ու նորմերը ընդհանրապես դադարել են կատարել վարքի կողմնորոշիչի կամ կենսիմաստային ուղղորդիչի դեր, սակայն ներկայում ընթացող մի շարք սոցիոմշակութային գործընթացները վկայում են, որ ձևավորվում է նոր մի սոցիոմշակութային տարածություն, որը հիմնված է արդիականությանը բնորոշ սոցիոմշակութային արժեքների և սկզբունքների վրա: Սակայն առաջին հայացքից դրական թվացող այս միտումն ունի մի շարք բացասական կողմեր ևս: Մասնավորապես, արդիականացված հասարակություններում, որտեղ ավանդական արժեքները կորցրել են իրենց ազդեցությունն ու նշանակությունը, պահանջում են անհատից որոշումների կայացման ինքնուրույնություն, ինչն անշուշտ դրական գործոն է, սակայն մյուս կողմից էլ զանգվածային մշակույթի, սպառողական հասարակության ներկայացուցիչ անհատը հաճախ նախընտրում է խուսափել պատասխանատվության ծանր բեռից: Եթե նախկինում անհատի ընտրության պատասխանատվությունը կրում

[141] Տե՛ս **Камю А.**, Миф о Сизифе. Эссе об абсурде// в книге Сумерки богов, М., Политиздат, 1990, էջ 262-264:

էին ավանդական սոցիալական համակարգերը, ապա այժմ անհատն ինքն է իր որոշումների միակ հեղինակն ու պատասխանատուն:

Բրիտանացի ժամանակակից մտածող Զ. Բաումանն իրավացիորեն նկատում է, որ ժամանակակից հասարակություններում մարդն այլևս ազատված է ըմբոստանալու, ընդվզելու «պարտականությունից», քանի որ ազատությունն արդեն իսկ ներառված է արդի հասարակությունների սոցիոմշակութային կարգի մեջ: Այս համատեքստում Բաումանը նշում է, որ մարկուզեական «մեծ հրաժարման» նախագիծն այլևս կորցրել է իր արդիականությունը, քանի որ ժամանակակից հասարակությունը մարդուն տալիս է ողջախոհության սահմաններում անհրաժեշտ ազատության չափաբաժին[142]: Ֆրանկֆուրտյան դպրոցի ներկայացուցիչ սոցիալական հոգեբան և փիլիսոփա Է. Ֆրոմը նույնպես, անդրադառնալով արդի մարդու ազատության երկակի բնույթին, նկատում է, որ թեև «անսահմանափակ ազատությունը» մարդուն անկախության զգացում է պարգևում, բայց և միաժամանակ կտրում է աշխարհից՝ նրա հոգին լցնելով սեփական ապագայի և ճակատագրի նկատմամբ կասկածի և վախի զգացումներով: Նման պայմաններում մարդը սկսում է փնտրել հնազանդության և ենթակայության, ստրկության նոր ձևեր՝ հայտնվելով անորոշ, ոչ ռացիոնալ իրականությունում[143]: Այսինքն՝ ազատության, բանապաշտության և ինքնավարության սկզբունքներով կառուցարկված արդի սոցիոմշակութային իրականությունում մարդը հաճախ նախընտրում է ոչ թե «լինել ազատ», այլ «ունենալ ազատություն»: Այլ կերպ սա կարելի է կոչել նաև «գիտակցված կախվածություն», որի նպատակը սեփական անվտանգության ու անվրդովության ապահովումն է: «Առաջնորդին» ենթարկվելու, հավատալու, երկրպագելու զգացումներն են, որոնք ապահովում են յուրաքանչյուրի անվտանգ կյանքը[144]: Այս համատեքստում կարելի է համաձայնել այն մտքի հետ, որ սոցիալական կարգի առաջացումն ու պահպանումը հնարավոր է միայն սոցիալական աստիճանակարգման շնորհիվ, և առանց աստիճանակարգման ցանկացած համակարգային գործոն կարող է փոփոխվել, ուստիև չեն կարող լինել համակարգային վարքի որևէ նորմ և կանոն, ուստիև միայն աստիճանակարգությունն է ձևավորում

---

[142] Տե՛ս **Бауман З.**, Текучая современность, СПБ., изд. Питер, 2008, էջ 29:
[143] Տե՛ս **Фромм Э.**, Бегство от свободы. Человек для себя, Мн., ООО «Попурри», 1998, էջ 128-129:
[144] Տե՛ս **Фромм Э.,** Иметь или быть? М., АСТ, Астрель, 2011, էջ 189:

սոցիալական կարգ[145]: Մինչդեռ այն հասարակություններում, որտեղ տարածում է գտել անոմիան, սոցիալական ցանկացած աստիճանակարգություն և արժեհամակարգ կարող է կասկածի ենթարկվել, ինչի հետևանքով մարդը հաճախ հայտնվում է կենսիմաստային ճգնաժամի մեջ, ինչն էլ տվյալ հասարակությունում պարարտ հող է նախապատրաստում անհանդուրժողականության զանազան դրսևորումների համար:

4. Հետարդիական սոցիոմշակութային տարածության ձևավորումով.

Յուրայինի և Օտարի փոխհարաբերությունը համաշխարհայնացման պայմաններում պայմանավորված է նաև ժամանակակից աշխարհում ընթացող սոցիոմշակութային մեկ այլ փոխակերպումով, որն է հետարդիականության սոցիոմշակութային տարածության ձևավորումը: Ինչպես արդեն նշվեց՝ ժամանակակից աշխարհն ընթանում է ինչպես միաչափության, համահարթեցման, այնպես էլ եզակիության, ինքնուրույնության, անհատակենտրոնության հաստատման ճանապարհով: Բանն այն է, որ ժամանակակից քաղաքակրթական տարածությունում ձևավորվել և տարածում են ստանում հետարդիականության սոցիոմշակութային հարացույցները, որոնք մարդուն առաջարկում են կենսիմաստային նոր կողմնորոշիչներ: Եթե մինչարդիական կամ արդիական հասարակություններում կենսիմաստային կողմնորոշիչներ էին հանդիսանում համայնքակենտրոն կամ սոցիոկենտրոն արժեքները, ապա հետարդիական հասարակություններում կենսիմաստային կողմնորոշինչեր են անհատակենտրոն արժեքներն ու սկզբունքները: «Մակրոսոցիալական» կողմնորոշինչերը փոխարինվում են միկրոսոցիալական կողմնորոշիչներով, անհատը հայտնվում է մարդկանց հոգածության և խորհրդածությունների կենտրոնում: Սոցիոմշակութային նախկին արժեքներն ու վարքի կողմնորոշիչները, որոնք ժամանակին ընկած էին սոցիալական հանրույթների կազմակերպման կամ կառուցարկման հիմքում, հետարդիականության սոցիոմշակութային տարածությունում կորցնում են երբեմնի ազդեցիկությունն ու նշանակալիությունը: Սոցիոմշակութային արդի փոխակերպումներն արժեզրկում են նախկինում հաստատված հասարակական կապերն ու հարաբերությունները: Խոսելով հետարդիականության շրջանում հասարակական նոր կապերի և դրանց

[145] Տե՛ս **Մկրտիչյան Ա. Ե.,** К вопросу о факторах социального порядка (Սոցիալական կարգի գործոնների շուրջ), «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (125), Եր., 2008, էջ 66:

հեռանկարների մասին՝ պոստմոդեռնիստ մտածող Ժ. Լիոթարը նկատում է, որ «նույնականացումն» ազգային հերոսների հետ այլևս հրապուրիչ չէ[146]: Փոխարենը հետարդիական սոցիոմշակութային կարգերը ստեղծում են այնպիսի հասարակական կապեր և հարաբերություններ, որոնց դեպքում ժամանակակից մարդը հաճախ աշխարհն ընկալում է որպես իրեն օտար մի իրականություն, որում նա փորձում է հաղթահարել սեփական անկարողության և մեկուսացման զգացումները: Բանն այն է, որ հետարդիականության սոցիոմշակութային տարածությունում «ազատությունը» հռչակվել է որպես վարքի և կենսադիրքորոշման կարևոր գործոն: Հետարդիականության մարդն այլևս ազատ է ընտրելու, թե որ կենսիմաստային ուղղորդիչներին պետք է հետևել, թե որն է լավի և վատի տարբերակման իր չափորոշիչները, թե արժե արդյոք հետևել ավանդույթներին, թե՝ ոչ: Ազատությունն այս դեպքում կարող է ունենալ ինչպես կառուցողական նշանակություն, այնպես էլ՝ դառնալ սոցիոմշակութային ճգնաժամի առաջացման մի նոր պատճառ, քանի որ մարդուն կտրում է սոցիոմշակութային արմատներից, ավանդույթներից, ամբողջի հետ նույնականանալու այլևայլ համահասարակական արժեքներից, հասարակության հետ ամբողջականանալու հնարավորությունից և այլն: Այս համատեքստում հայտնի տեսաբան Է. Ֆրոմը նշում է, որ իհարկե, ազատությունը երբեք մարդուն չի կարող ետ վերադարձնել իր նախկին օրգանական ամբողջականությունն աշխարհի և հասարակության հետ, այն ամբողջականությունը, որը նա ունեցել է մինչև «բացարձակ ազատ անհատ» դառնալը, քանի որ անհատի մեկուսացման գործընթացը հասարակությունից արդեն իսկ տեղի է ունեցել և այն այլևս անդառնալի է[147]:

Հետարդիականության պայմաններում ավանդական արժեքներն ու կենսիմաստային ուղղորդիչները ենթարկվում են ապակառուցման, ինչի հետևանքով Յուրայինի և Օտարի հակադրման սահմանները նույնպես ձևախեղվում են: Բանն այն է, որ Յուրայինի և Օտարի սահմանների հստակեցման համար անհրաժեշտ է ինքնանույնականացման որոշակի արժեհամակարգ, մշակութային առանձնահատկությունների ամբողջություն, ինչը թույլ է տալիս որոշել, թե ով է

---

[146] Տե՛ս **Лиотар Ж.-Ф.,** Состояние постмодерна, М., Институт экспериментальной социологии. СПБ., Алетейя, 1998, էջ 43-44:

[147] Տե՛ս **Фромм Э.**, Бегство от свободы. Человек для себя, Мн., ООО «Попурри», 1998, էջ 174:

Յուրային, ով՝ Օտար: Սակայն մշակութային համահարթեցման, ավանդական արժեհամակարգերի քայքայման և իմաստազրկման հետևանքով սեփական մշակութային արժեհամակարգի սահմանները նույնպես չքանում են: Աստիճանաբար արժեզրկվում են նաև սոցիոմշակութային այն սահմանները, որոնք մարդկանց բաժանում էին Յուրայինների և Օտարների: Հետարդիականության պայմաններում, երբ այլևս բացարձակության և հանրանշանակության հավակնող «ճշմարտությունները» արժեզրկվում են, կենսադիրքորոշման հիմնական եղանակ է դառնում հարաբերապաշտությունը: Հետարդիական հարաբերապաշտության պայմաններում Յուրային-ի և Օտար-ի փոխհարաբերությունների հաստատումը հնարավոր է միայն կառուցողական հանդուրժողականության առկայության պայմաններում:

5. Ծայրահեղականության դրսևորումներով.

Ժամանակակից աշխարհում ընթացող սոցիոմշակութային փոխակերպումներն ուղեկցվում են քաղաքական կյանքի ժողովրդավարացման և ազատականացման վեկտորով, համենայնդեպս՝ այդպես են հայտարարում աշխարհի գրեթե բոլոր առաջատար քաղաքական ու հասարակական գործիչները: Սակայն համաշխարհայնացման, ժողովրդավարացման և ազատականացման գործընթացներին զուգահեռ լայն տարածում են գտնում ծայրահեղականության (էքստրեմիզմ) տարբեր դրսևորումները՝ քաղաքական, կրոնական, ազգային և այլն: Մի կողմից ընթացող մշակութային համահարթեցման, զանգվածային մշակույթի տարածման, կրթական համընդհանրական համակարգերի ներդրման պայմաններում ձևավորվում է սոցիոմշակութային նոր միջավայր, որն ուղղված է բազմազանության հաստատմանը, մյուս կողմից էլ բազմամշակութային հասարակության հաստատման այդ նախագիծը բախվում է կրոնական, ազգային և քաղաքական տարբեր ինքնություն ունեցող մարդկանց երբեմն բռնության տեսքով արտահայտվող հակադրությանը: Հակադրությունն այդ հաճախ դրսևորվում է ծայրահեղականության տեսքով: Ծայրահեղականությունն ունի դրսևորման երեք հիմնական եղանակներ՝ ծայրահեղական գաղափարախոսություն, ծայրահեղական կազմակերպություն, ծայրահեղական գործունեություն: Արդի աշխարհում տեղի ունեցող գործընթացները

վկայում են, որ ծայրահեղականության հիշյալ երեք եղանակները դրսևորվում են ահագնացող տեմպերով: Ըստ էության ժամանակակից աշխարհում տեղի ունեցած գրեթե բոլոր ահաբեկչական գործողությունների հիմքում ընկած է որևէ ծայրահեղական գաղափարախոսություն, ինչը վկայում է ծայրահեղականության հարուցած սոցիոմշակութային վտանգների մասին: Ընդ որում՝ սովորաբար ավանդական գաղափարախոսություն ունեցող ծայրահեղական կազմակերպությունները, լինելով ծայրահեղական գաղափարախոսության կրողներ, կարողանում են «արդյունավետորեն» կիրառել ժամանակակից քաղաքակրթության կողմից ընձեռված տեխնոլոգիական հնարավորությունները, ինչի միջոցով աշխարհի այս կամ այն անկյունում կարողանում են արագորեն կազմակերպվել, տարածել և քարոզել սեփական գաղափարախոսությունը, իրականացնել հասարակության համար բազում վտանգներ պարունակող գործողություններ: Ծայրահեղականության արդի դրսևորումները սոցիոմշակութային տարածությունը դարձնում են անկանխատեսելի և անորոշ, ինչի հետևանքով տագնապը դառնում է մարդկանց կյանքի մշտական ուղեկիցը: Տագնապի, անորոշության տևական առկայության պայմաններում տվյալ սոցիոմշակութային տարածությունում նվազում է հանդուրժողականության մակարդակը, ինչը թերևս բնականոն գործընթաց է, քանզի ծայրահեղականության դրսևորումները ոչ միայն Օտարին էլ ավելի են օտարում Յուրայինից, այլև ընդհանրապես յուրաքանչյուր Յուրային դիտվում է որպես պոտենցիալ Օտար: Եթե հանդուրժողականությունը խաղաղ ճանապարհով հնարավոր է դարձնում Յուրայինի և Օտարի փոխհարաբերությունը, ապա ծայրահեղականությունը խոչընդոտում է նման փոխհարաբերության իրականացմանը՝ բռնությունը համարելով կոնֆլիկտների լուծման գլխավոր եղանակ: Հաճախ ծայրահեղականության հիմնական դրսևորումներն են ահաբեկչությունը, բռնությունը, անհանդուրժողականությունը, ռազմական տարբեր բնույթի գործողությունները: Հարկ է նկատել նաև, որ ծայրահեղականության տեսական հիմք են հանդիսանում արմատական գաղափարախոսությունը, կրոնական արմատականությունը, ազգայնականությունն ու ազգայնամոլությունը[148]: Ծայրահեղականության զանազան դրսևորումներն այսպիսով խոչընդոտում են

[148] Տե՛ս **Малахова О.В.,** Философия толерантности в контексте межконфессионального диалога// Философия и проблемы гуманитарного знания. Среднерусский вестник общественных наук, № 4, 2010, էջ 16:

Յուրայինի և Օտարի միջև հանդուրժողականության սկզբունքով երկխոսության հաստատմանն ու այդպիսով լուրջ մարտահրավեր են արդի հասարակությունների համար:

Ժամանակակից աշխարհին բնորոշ վերը նշված առանձնահատկություններով (ավանդականության ճգնաժամ, միաչափության, մշակութային համահարթեցման տարածում, հետարդիական սոցիոմշակութային տարածության ձևավորում, անոմիայի և ծայրահեղականության դրսևորումներ) է պայմանավորված Յուրայինի և Օտարի միջև փոխհարաբերությունների հաստատման հնարավորությունը: Անշուշտ, դեռևս նախնադարյան համայնական հասարակություններում անծանոթը (Օտարը) Յուրայինի կողմից ընկալվում էր որպես «ոչ մարդ» և թշնամի, որը ենթակա է ոչնչացման[149]: Սակայն քաղաքակրթական և սոցիոմշակութային զարգացման արդի միտումների պայմաններում Յուրայինի և Օտարի միջև հանդուրժողականության սկզբունքով փոխհարաբերության և համագործակցության հաստատումը դարձել է կենսական խնդիր: Արդի աշխարհում ներդաշնակ հարաբերությունների հաստատման համար շատ կարևոր է Յուրայինի կողմից Օտարին հասկանալու ֆենոմենը: Հարկավոր է ընդունել, որ «Եսը և Ուրիշը ինքնաճանաչողության՝ որպես մեկ ընդհանուր գործողության երկու կողմերն են և չեն կարող գոյություն ունենալ առանց մեկը մյուսի»[150]:

Հարկ է նկատել, որ Եսի կողմից առաջին արձագանքն Ուրիշի նկատմամբ ժխտումն է, քանի որ Ուրիշի ի հայտ գալը խախտում է Ես-ի (սուբյեկտի) «կեցություն ինքն իր մեջ»-ը, այսինքն՝ սովորական կեցությունը՝ իր հետ բերելով նորն ու առաջին հայացքից անճանաչելին[151]: Ժխտումից հետո Եսի և Ուրիշի միջև սկսում է հայացքների, արժեքների բախման և պայքարի փուլերը: Ինչ-որ իմաստով Եսը բովանդակություն է ստանում Ուրիշի հետ հակադրության արդյունքում, քանի որ ճանաչելով Ուրիշին՝ մարդն ուրվագծում է այն առանձնահատկությունները, որով ինքը տարբերվում է Ուրիշից: Այս առումով էկզիստենցիալիստական այն մոտեցումը, ըստ որի կեցությունը

---

[149] Տե՛ս **Назаретян А. П.,** Нелинейное будущее: Мегаисторические, синергетические и культурно-психологические предпосылки глобального прогнозирования, М., Институт востоковедения РАН, 2013, էջ 92:

[150] **Лотман Ю. М.**, Культура и взрыв, М., Гнозис, Издательская группа «Прогресс», 1992, с. 54.

[151] Առավել մանրամասն տե՛ս **Сартр Ж. П.**, Бытие и ничто. Опыт феноменологической онтологии, М., Республика, 2000, էջ 379-425:

նախորդում է էությանը[152], լավագույնս մեկնաբանում է Եսի կերտման սոցիոմշակութային գործընթացը: Ապրելով այլոց մեջ՝ մարդը նախ սահմանում է իր անձնային հատկությունները, այնուհետև ազգային, կրոնական, քաղաքական և այլն: Ըստ էության Եսի գոյությունը պայմանավորված է Ուրիշի գոյությամբ: Այս իմաստով սեփական անկատարության և սխալականության գիտակցումը Եսի կողմից հնարավոր է միայն Ուրիշի առկայության դեպքում[153]: Եսը ձգտում է դեպի Ուրիշը՝ հույս ունենալով նույնականանալ ինքն իր հետ, ճանաչել և ըմբռնել ինքն իրեն: Ուրիշին հասկանալու մղումը փոխում է Եսի ընկալումներն ու պատկերացումներն արտաքին աշխարհի մասին: Եսը սկսում է բացահայտել իր մեջ նորանոր հատկություններ և կարողություններ, որոնք նախկինում չի նկատել և որոնց միջոցով ճանաչում է ինչպես ինքն իրեն, այնպես էլ Ուրիշին: Այս համատեքստում մշակութաբան և փիլիսոփա Է. Լևինասը կատարում է հետևյալ հարցադրումը. արդյո՞ք Եսի կողմից շարժումը դեպի Ուրիշը հակվածություն է, թե պարզապես մարդասիրության և բարության դրսևորում, և գտնում է, որ դա նախ և առաջ բացարձակ Ուրիշի հետ ամբողջականանալու նպատակաուղղվածություն է ճիշտ այնպես, ինչպես տեքստն է ամբողջանում իր ենթատեքստի հետ[154]:

Քաղաքակրթական և սոցիոմշակութային արդի իրողությունների պայմաններում Յուրայինի և Օտարի, Եսի և Ուրիշի միջև փոխհարաբերության, համագործակցության հաստատումը հնարավոր է միայն կառուցողական հանդուրժողականության դրսևորման համատեքստում: Ընդ որում՝ սոցիոմշակութային հիշյալ իրողությունների համատեքստում Յուրայինի և Օտարի, Եսի և Ուրիշի սահմանները ձևախեղվում են, այսինքն՝ մարդիկ բախվում են նույնականացման և ինքնորոշման խնդրին: Այս իմաստով կառուցողական հանդուրժողականությունը մարդու համար ունի կենսական անհրաժեշտություն սոցիոմշակութային նոր իրողություններին և քաղաքակրթական արդի փոխակերպումներին հարմարվելու գործում: Մասնավորապես կառուցողական հանդուրժողականությունն ավանդականության ճգնաժամի պայմաններում հնարավորություն է ընձեռում դիմակայել կենսիմաստային ճգնաժամերին, չտրվել

[152] Տե՛ս **Сартр Ж. П.,** Экзистенциализм-это гуманизм// в книге Сумерки богов, М., Политиздат, 1990, էջ 321:
[153] Տե՛ս **Левинас Э.,** Избранное. Тотальность и бесконечное, М., СПБ., Университетская книга, 2000, էջ 301:
[154] Տե՛ս **Левинас Э.,** Время и другой. Гуманизм другого человека, СПб, Высшая религиозно-философская школа, 1998, էջ 165-167:

միաչափության և համահարթեցման սոցիոմշակութային գործընթացներին, հաղթահարել անոմիայի ապակառուցողական դրսևորումները, հետարդիականության խճանկարային մշակույթի պայմաններում փնտրել և գտնել կենսիմաստային նոր ուղղորդիչներ, և ի վերջո խուսափել այս կամ այն կրոնական և քաղաքական ծայրահեղական ուսմունքներին կամ գաղափարախոսություններին տրվելու «գայթակղությունից»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդի քաղաքակրթական, քաղաքական և մարդաբանական փոխակերպումների համատեքստում հանդուրժողականության՝ որպես սոցիալական համակարգի կառուցարկման կարևոր բաղադրիչի ուսումնասիրությունը ստանում է տեսական և գործնական մեծ հնչեղություն: Ժամանակակից աշխարհն իր սոցիոմշակութային և քաղաքակրթական նկարագրով նախորդներից տարբերվում է առաջին հերթին տարածական և ժամանակային հեռավորությունների սերտացման գործընթացով, ինչի պայմաններում մարդիկ հաճախ «հարկադրված» կամ «կամավոր» կերպով առերեսվում են մշակութային, սոցիալական, քաղաքական և նույնիսկ քաղաքակրթական առումով այլ սոցիոմշակութային նկարագիր ունեցող մարդկանց հետ: Այս պայմաններում արդի հասարակությունները կանգնած են պատմական նոր մարտահրավերների առաջ, որոնցից թերևս կարելի է առանձնացնել բազմամշակութայնության պայմաններում սոցիոմշակութային անվտանգության և սոցիալ-քաղաքական կայունության պահպանման մարտահրավերները: Այս համատեքստում հանդուրժողականությունը վերլուծվել է սոցիոմշակութային կարգի և անվտանգության պահպանման համատեքստում, և ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներն ու եզրակացությունները.

- Հանդուրժողականությունը, որպես փիլիսոփայական եզրույթ, ի սկզբանե գործածվել է կրոնական տարբեր ուղղությունների միջև երկխոսության հաստատման նկատառումներով, սակայն արդի քաղաքակրթական, քաղաքական և սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում հանդուրժողականության բովանդակությունն ու կիրառելիության անհրաժեշտությունն ընդլայնվել է՝ ճյուղավորվելով այնպիսի ուղղությունների, ինչպիսիք են քաղաքական, միջսեռային, միջսերնդային, միջկրոնական, միջազգային և միջմշակութային հանդուրժողականությունները և այլն: Արդի հասարակություններին բնորոշ սոցիոմշակութային կարգի պայմաններում հանդուրժողականությունը դարձել է սոցիոմշակութային իրականության կառուցարկման կարևորագույն նախապայման:

- Արդի սոցիոմշակութային փոխակերպումների պայմաններում հանդուրժողականությունը հասարակական համակարգերին բնորոշ անորոշության և անկայունության հիմնարար կարգավորիչ գործոն է, որը հասարակական համակարգերին հաղորդում է ներքին կազմակերպվածություն և կանոնավորություն: Հանդուրժողականության խնդիրն էլ ավելի է կարևորվում հատկապես անցումային կամ փոխակերպվող հասարակությունների պարագայում: Այս դեպքում սոցիոմշակութային կարգի և անվտանգության ապահովման տեսանկյունից հանդուրժողականությունը կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական գործառույթ, քանզի եթե հանդուրժվում և ընդունվում է սոցիոմշակութային ցանկացած արժեք և սկզբունք, ապա կարող է խաթարվել ինչպես փոխակերպական փուլում գտնվող հասարակության քաղաքական, այնպես էլ մշակութային և ազգային դիմագիծը: Այս պարագայում ատենախոսությունում առանձնացվում է հանդուրժողականության ընկալման մի շարք մակարդակներ, որոնք են օրինակ՝ համբերատարությունը, անտարբերությունը, ներողամտությունը և այլն: Հանդուրժողականության ընկալումների հստակ տարանջատումը հնարավորություն է տվել կատարելու համեմատական վերլուծություն տարբեր քաղաքական համակարգերում հանդուրժողականության դրսևորումների միջև, և հիմնավորվել է, որ մի դեպքում (օրինակ՝ բաց հասարակության պարագայում) հանդուրժողականությունը կարող է կատարել դրական գործառույթ, և նպաստել հասարակական համակարգի բարելավմանն ու զարգացմանը, իսկ մեկ այլ դեպքում՝ (օրինակ՝ փակ հասարակություններում) նպաստել ավտորիտար և ամբողջատիրական կարգերի լճացմանն ու հարատևմանը:

- Ժամանակակից քաղաքացիական հասարակության բնականոն գործունեության ապահովման համար հանդուրժողականությունը՝ միանգամայն անհրաժեշտ և կարևոր պայման է: Քաղաքացիական հասարակության գաղափարախոսության իրացման հիմքում ընկած է հասարակության բոլոր անդամների իրավահավասարության սկզբունքը: Իսկ հավասար իրավունքներով, պարտականություններով և ազատություններով օժտված քաղաքացիներն անպայման պետք է լինեն հանդուրժող միմյանց մշակութային, քաղաքական, սոցիալական տարբերությունների նկատմամբ:

- Արդի ազատական-ժողովրդավարական քաղաքական կազմակերպվածություն ունեցող հասարակություններում հանդուրժողականությունը հասարակական կյանքի կազմակերպման սոցիոմշակութային կարևոր նորմ է: Հասարակական կյանքն ազատական-ժողովրդավարական սկզբունքներով կազմակերպվելու պայմաններում ի հայտ է գալիս մրցակցող անհատականությունների սոցիոմշակութային փոխհարաբերությունների այն տեսակը, որի պայմաններում հասարակության անդամները քաղաքական, սոցիալական և տնտեսական առաջխաղացման նպատակով «հարկադրված են» մրցակցելու միմյանց հետ: Մրցակցող անհատականությունների սոցիոմշակութային կարգի պայմաններում հանդուրժողականության սոցիոմշակութային նորմի որդեգրումը տվյալ հասարակությանն ապահովագրում է հնարավոր կոնֆլիկտներից:

- Քաղաքական, տնտեսական և սոցիոմշակութային համաշխարհայնացման համատեքստում հանդուրժողականությունը ձեռք է բերում առանձնակի նշանակություն, քանզի ժամանակակից աշխարհում քաղաքական, տնտեսական և մշակութային տարբեր համակարգերի միջև առկա փոխհարաբերություններն էլ ավելի են սերտանում, որն անհրաժեշտաբար հանգեցնում է քաղաքակիրթ երկխոսություն հաստատելու մշակույթի ձևավորմանը: Այս համատեքստում առանձնացվել են հանդուրժողականության երկու հնարավոր դրսևորումներ՝ կառուցողական և ապակառուցողական հանդուրժողականություն: Կառուցողական հանդուրժողականության հիմքում ընկած է Ուրիշին հարգելու, նրա սոցիոմշակութային տարբերությունները ճանաչելու միջոցով ինքնազարգանալու և ինքնակատարելագործվելու, աշխարհայացքային բազմազանությունը պահպանելու սկզբունքը, իսկ ապակառուցողական հանդուրժողականության հիմքում ընկած է անտարբերությունը, այլընտրանքի բացակայությունը, կրավորական համբերատարությունը և այլն:

- Մշակութային բազմազանության կամ բազմամշակութայնության պայմաններում տարբեր մշակութային համակարգերի միջև հակասություններից ու բախումներից հնարավոր կլինի խուսափել միայն այն դեպքում, եթե տարբեր մշակութային համակարգեր ունեցող ազգերն ի վերջո ընդունեն, որ որքան էլ փորձեն

գերագնահատել սեփական ազգային արժեքներն և գերիշխանություն հաստատել այլ մշակութային համակարգերի նկատմամբ, սոցիոմշակութային փոխակերպումների պայմաններում գործող մշակութային բազմազանությունն ու բազմակարծությունն անխուսափելի երևույթներ են: Անհրաժեշտ է ստեղծել սոցիոմշակութային այնպիսի աշխատակարգեր, որոնք կնպաստեն մշակութային երկխոսության հաստատմանը և մշակութային բազմազանության պահպանմանը: Արդի աշխարհը պետք է ընդունի, որ հնարավոր չէ ստեղծել համընդհանուր արժեքային համակարգ, որն ընդունելի կլինի բոլորի կողմից: Համաշխարհայնացման նման միտումները, այն է՝ հաստատել միասնական արժեքային համակարգ, որը համընդհանուր բնույթ կունենա, դատապարտված է ձախողման: Առանձին քաղաքակրթություններն ու հասարակությունները պետք է հրաժարվեն սեփական արժեքներն ու կյանքի մշակույթի նորմերը համընդհանուր հռչակելու միտումից՝ չխոչընդոտելով մշակութային բազմազանության պահպանմանն ու ամրապնդմանը:

Քաղաքակրթական և քաղաքական արդի զարգացման միտումները հարուցում են նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարման հնարավորությունից է կախված մարդկության հետագա ճակատագիրը: Բազմամշակութային հասարակության ձևավորման նախագծի իրականացման, ժողովրդագրական հոսքերի, անկայուն քաղաքական համակարգերի, տնտեսական համաշխարհային ցնցումների և միջմշակութային փոխհարաբերությունների սերտացման հետևանքով ի հայտ եկած այդ մարտահրավերները հնարավոր է հաղթահարել միայն այնպիսի մշակութային և քաղաքական արժեհամակարգի հաստատման դեպքում, որի հիմքում ընկած կլինի Ուրիշին հանդուրժելու, այլոց տեսակետների, կարծիքների, աշխարհայացքների լինելիության իրավունքը համբերատար տանելու և ընդունելու, մի խոսքով՝ հանդուրժողականության՝ որպես սոցիոմշակութային նորմի ընդունման սկզբունքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Արենդթ Հ.,** Մենք՝ փախստականներս, Եր., Հայաստանի Ամերիկյան Համալսարան, 2016, 272 էջ:
2. **Դեմիրճյան Մ.Հ.,** Ազգային ինքնությունը արժեհամակարգի փոխակերպման ժամանակակից պայմաններում, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 140.4, Եր., 2013, 35-41 էջ:
3. **Հարությունյան Է.Ա.,** Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Մակմիլան-Արմենիա, Եր., 2004, 152 էջ:
4. **Հարությունյան Է.Ա.,** Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., ԵՊՀ, 2000, 268 էջ:
5. **Հարությունյան Է.Ա.**, Համոզմունքների գերակայության օրենքը, «Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումներ», Պրակ VIII, Եր., 2011, 3-12 էջ:
6. **Հարությունյան Է.Ա.**, Հնարավորությունների հավասարություն և շահերի հավասարակշռություն, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 141.4, Եր., 2013, 3-13 էջ:
7. **Հարությունյան Է.Ա.**, Վարքի սոցիոմշակութային շարժառիթների մարդաբանական բնութագիրը, Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ, Պրակ 5, Եր., Լիմուշ, 2008:
8. **Հարությունյան Է.Ա.,** Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրը անցումային հասարակությունում, Եր., Նորավանք, 2002, 81 էջ:
9. **Հարությունյան Մ.Ա.**, Իշխանության լեգիտիմության ժամանակակից տեսություն, Եր., Նաիրի, 2016, 224 էջ:
10. **Հովսեփյան Ա.,** Սոցիալական փիիսոփայության հիմունքներ, Եր., Դե-ֆակտո, 2003, 288 էջ:
11. **Մելքումյան Գ.Ա.,** Մշակութաբանություն, Եր., Վան Արյան, 2001, 236 էջ:

12. **Մկրտիչյան Ա.Ե.,** К вопросу о факторах социального порядка (Սոցիալական կարգի գործոնների շուրջ), «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (125), Եր., 2008, 65-81 էջ:
13. **Սարգսյան Ա.Հ.,** Մշակույթի տեսություն, Եր., «Տնտեսագետ», 2003, 176 էջ:
14. **Սողոմոնյան Գ.Ա.**, Ազգային ինքնություն և սոցիոմշակութային անվտանգություն, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 141.4, Եր., 2013, 14-26 էջ:
15. **Սողոմոնյան Գ.Ա.**, Անհապաղը որպես արդիականության կառուցարկման սոցիոմշակութային ֆենոմեն, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 139.4, Եր., 2013, 3-16 էջ:
16. **Սողոմոնյան Գ.Ա.**, Ժամանակակից մարդաբանական ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2016, № 1 (19), 18-33 էջ:
17. **Սողոմոնյան Գ.Ա.,** Փողը որպես ռացիոնալության փոխակերպումների սոցիոմշակութային որոշարկիչ, «Բանբեր Երևանի Համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2010, 132.4, 15-25 էջ:
18. **Артемьева В.А. Данилова М.В.,** Анализ понятия «толерантность» в современной научной литературе, Казань, Молодой ученый, № 2, 2015, 471-474 էջ:
19. **Асмолов А.Г.,** Историческая культура и педагогика толерантности// Мемориал, 2001, № 24, 61-63 էջ:
20. **Асмолов А.Г.,** Толерантность от утопии к реальности// На пути к толерантному сознанию/ Отв. ред. А.Г. Асмолов, М., Смысл, 2000, 255 էջ:
21. **Баева Л.В.,** Толерантность: идея, образы, персоналии: монография, Астрахань, Издательский дом «Астраханский университет», 2009, 217 էջ:
22. **Бауман З.,** Глобализация. Последствия для человека и общества, М., «Весь мир», 2004, 188 էջ:
23. **Бауман З.,** Индивидиуализированное общество, М., изд. «Логос», 2005, 390 էջ:
24. **Бауман З**., Текучая современность, СПб., Питер, 2008, 240 էջ:

25. **Бахтин М.М.,** Эстетика словесного творчества, М., Искусство, 1986, 445 էջ:
26. **Бергер П., Лукман Т.,** Социальное конструирование реальности. Трактат по социологии знания, М., Медиум, 1995, 323 էջ:
27. **Бердяев Н.,** Судьба России. Самосознание, Ростов-на-Дону, «Феникс», 1997, 544 էջ:
28. **Библер В.С**., От наукоучения-к логике культуры. Два философских введения в двадцать первый век, М., изд. Политической литературы, 1991, 413 էջ:
29. **Бодрийяр Ж**., Символический обмен и смерть, М., Добросвет, 2000, 387 էջ:
30. **Бодрийяр Ж**., Общество потребления. Его мифы и структуры, М., Республика, Культурная революция, 2006, 269 էջ:
31. **Бубер М.,** Два образа веры, М., Республика, 1995, 464 էջ:
32. **Бурдье П**., Социология социального пространства, М.-СПб., Институт экспериментальной социологии, Алетейя, 2007, 288 էջ:
33. **Вольтер Ф.,** Философские трактаты и диалоги, М., Эксмо, 2005, 432 էջ:
34. **Волков Ю. Кривопусков В.,** Доверие и креативный класс: факторы консолидации российского общества, Ер., Тигран Мец, 2013, 247 էջ:
35. **Ганди М.К**., Моя жизнь, М., Издательство Восточной Литературы, 1959, 444 էջ:
36. **Грей Дж.,** Поминки по Просвещению: Политика и культура на закате современности, М., Праксис, 2003, 368 էջ:
37. **Гречко П**., О границах толерантности, Свободная мысль- XXI, № 10, М., 2005, 173-183 էջ:
38. **Губин В.Д.,** Русская культура и феномен насилия, Вопросы философии. Российская академия наук, М., Наука, № 5, 1995, 3-5 էջ:
39. **Гусейнов А.А.,** Возможно ли моральное обоснование насилия, Вопросы философии. Наука, М., 2004, №3, 19-28 էջ:
40. **Гусейнов А.А.,** Моральная демагогия, как форма анологии насилия// Вопросы философии. Российская академия наук. Наука, № 5, М., 1995, 5-12 էջ:
41. **Гусейнов А.А.,** Понятия насилия и ненасилия, Вопросы философии, Наука, № 6, М., 1994, 35-41 էջ:

42. **Гусейнов А.А.,** Этика ненасилия, Вопросы философии. Наука, № 3, М., 1992, 72-81 էջ:
43. **Декларация принципов толерантности** Принята резолюцией 5.61 Генеральной конференции ЮНЕСКО от 16 ноября 1995 года
http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/toleranc.shtml (11.07.2015)
44. **Жижек С.,** Интерпассивность. Желание: влечение. Мультикультурализм, СПб., Алетейя, 2005, 156 էջ:
45. **Зайцев А.В.,** Политическая толерантность в публичном диалоге государства и гражданского общества, Общество; Политика; Экономика; Право. № 2, М., 2012, 18-23 էջ:
46. **Каган М.С**., Введение в историю мировой культуры, СПб., ООО Издательство «Петрополис», 2003, 368 էջ:
47. **Камю А**., Миф о Сизифе. Эссе об абсурде// Сумерки богов, М., Политиздат, 1990, 398 էջ:
48. **Капустина Н.Г.,** Формирование толерантности в структуре этического мировоззрения. Известия Уральского государственного университета, № 60, Екатеринбург, 2008, 61-69 էջ:
49. **Кара-Мурза С.Г.,** Аномия в России: причины и проявления, М., Научный эксперт, 2013, 264 էջ:
50. **Кара-Мурза С.Г.,** Манипуляция сознанием, М., Эксмо, 2011, 864 էջ:
51. **Клименко Е.В.,** Толерантность и различие в социокультурном пространстве современной России, Вестник Санкт-Петербурского университета культуры и искусств, № 1, СПб., 2011, 64-67 էջ:
52. **Кораблева А.А.,** Аксеологический подход к определению толерантности, Ярославский педагогический вестник, № 2, Т2, Ярославль, 2012, 42-46 էջ:
53. **Купрейченко А.Б., Мерсиянова И.В.**, Проблема оценки уровня и содержания социального доверия // Доверие и недоверие в условиях развития гражданского общества, отв. ред. Купрейченко А.Б., Мерсиянова И.В., Издательский дом НИУ ВШЭ, М., 2013, 564 էջ:

54. **Леви-Стросс К.,** Раса и история// Путь масок, М., Республика, 2000, 399 էջ:
55. **Левинас Э.,** Избранное. Тотальность и бесконечное, М.- СПб., Университетская книга, 2000, 416 էջ:
56. **Левинас Э.,** Время и другой. Гуманизм другого человека, СПб., Высшая религиозно-философская школа, 1998, 265 էջ:
57. **Лекторский В.А.**, О толерантности, плюрализме и критицизме, Вопросы Философии. № 11, М., 1997, 46-54 էջ:
58. **Лиотар Ж.-Ф.,** Состояние постмодерна, М., Институт экспериментальной социологии, СПБ., Алетейя, 1998, 160 էջ:
59. **Локк Дж.,** Послание о веротерпимости, Сочинение в 3т, Т.3, М., Мысль, 1988, 668 էջ:
60. **Локк Дж., Толанд Д., Коллинз А.**, Английское свободомыслие, М., Мысль, 1981, 302 էջ:
61. **Лотман Ю.М.,** Культура и взрыв, М., Гнозис, Издательская группа «Прогресс», 1992, 272 էջ:
62. **Лотман Ю.М.**, Семиосфера: культура и взрыв. Внутри мыслящих миров. Статьи. Исследования. Заметки, СПб., "Исскуство-СПб", 2000, 704 էջ:
63. **Малахова О.В.,** Философия толерантности в контексте межконфессионального диалога, Философия и проблемы гуманитарного знания. Среднерусский вестник общественных наук, № 4, М., 2010, 14-17 էջ:
64. **Маркузе Г.**, Одномерный человек, М., «REFL_book», 1994, 368 էջ:
65. **Мертон Р.К.,** Социальная структура и аномия// Социальная теория и социальная структура, М., изд. АСТ Москва "Хранитель", 2006, 873 էջ:
66. **Мирзоян В.А.**, Управление "Сизифовым трудом": к проблеме кризиса трудовой мотивации, Издательство Вестник РАУ, № 2, Ереван, 2011, 4-20 էջ:
67. **Мкртичян А.Е.,** Некоторые атрибутивные характеристики "общества ни войны, ни мира", Социология и право № 1, (12), Санкт-Петербургский университет управления и экономики, СПб., 2012, 34-38 էջ:

68. **Назаретян А.П.,** Антропология насилия и культура самоорганизации: Очерки по эволюционно-исторической психологии, М., Издательство ЛКИ, 2007, 256 էջ:
69. **Назаретян А.П.,** Нелинейное будущее: Мегаисторические, синергетические и культурно-психологические предпосылки глобального прогнозирования, М. Институт востоковедения РАН, 2013, 437 էջ:
70. О кризисе мультикультурализма// http://thedecline.info/ru/part1 (04.06.2016)
71. **Панарин А.С**., Искушение глобализмом, М., Эксмо, 2003, 416 էջ:
72. **Парсонс Т.,** Система современных обществ, М., Аспект Пресс, 1998, 270 էջ:
73. **Погосян Г.А**., Армянское общество в трансформации, Ер., Издательский Дом "ЛУСАБАЦ", 2003, 460 էջ:
74. **Поппер К.Р**., Логика и рост научного знания, М., «Прогресс», 1983, 605 էջ:
75. **Поппер К.Р.,** Открытое общество и его враги, Т. 2. Время лжепророков: Гегель, Маркс и другие оракулы. М., Феникс, Культурная инициатива. М., 1992, 528 էջ:
76. **Поппер К.Р.,** Предположения и опровержения: Рост научного знания, М., ООО «Издательство АСТ», ЗАО НПП «Ермак», 2004, 638 էջ:
77. **Рац М.В.,** Диалог в современном мире, Вопросы философии. Наука, №10, М., 2004, 20-32 էջ:
78. **Розин В.М.,** Предпосылки и особенности античной культуры, М., ИФРАН, 2004, 297 էջ:
79. **Ролз Дж**., Теория справедливости, Новосибирск, изд-во НГУ, 1995, 532 էջ:
80. **Руссо Ж.-Ж**., Об общественном договоре или принципы политического права, М., Соцэкгиз, 1938, 123 էջ:
81. **Рянжина М.Н**., Толерантность как феномен культуры, социальной действительности и воспитания, Среднее профессиональное образование: Ежемесячный теоретический и научно-методический журнал, №3, М., 2011, 23-25 էջ:
82. **Сартр Ж.П**., Бытие и ничто. Опыт феноменологической онтологии, М., Республика, 2000, 639 էջ:

83. **Сартр Ж.П.,** Экзистенциализм-это гуманизм// Сумерки богов, М., Политиздат, 1990, 398 էջ:

84. **Смирнов А.И.,** Факторы формирования доверия к российской армии, Социологические исследования, № 12, М., 2009, 100-108 էջ:

85. Словарь философских терминов/ науч. ред. **В.Г. Кузнецов,** М., ИНФРА-М., 2005, 731 էջ:

86. Современный словарь иностранных слов, М., Русский язык, 1993, 740 էջ:

87. **Солдатова Г.У., Шайгерова Л.А., Шарова О.Д.** Тренинг "Учимся толерантности" // в книге На пути к толерантному сознанию, М., Смысл, 2000, 177-186 (255) էջ:

88. **Сорокин П.А.**, Человек. Цивилизация. Общество, М., Политиздат, 1992, 543 էջ:

89. **Сутор Б.,** Малая политическая этика, М., Директ-Медиа, 2013, 138 էջ:

90. Теперь и Саркози признал, что политика мультикультурализма провалилась http://inosmi.ru/europe/20110211/166444540.html (01.06.2016)

91. **Тишков В.А.,** Реквием по этносу: Исследования по социально-культурной антропологии, М., Наука, 2003, 544 էջ:

92. **Тойнби А. Дж.,** Постижение истории, М., Прогресс, 1991, 736 էջ:

93. **Тойнби А. Дж.,** Цивилизация перед судом истории. Мир и Запад, М., АСТ, Астрель; Владимир: ВКТ, 2011, 318 էջ:

94. «Толерантность» , Обш. ред. **М. П. Мчедлова**, М., Республика, 2004, 416 էջ:

95. **Толстой Л.Н.**, Путь жизни: сборник, М., Республика, 1993, 431 էջ:

96. **Уолцер М.,** О терпимости, М., Идея-Пресс, Дом интеллектуальной книги, 2000, 160 էջ:

97. **Фарушкин М.Х., Юртаев А.Н.,** От культуры конфронтации к культуре диалога, Политические исследования. «Полис», № 3, М., 1992, 148-152 էջ:

98. **Фливберг Б**., Хабермас и Фуко- теоретики гражданского общества, Социологические исследования, № 2, М., 2000, 127-136 էջ:

99. **Фукуяма Ф.,** Великий разрыв, М., АСТ: АСТ МОСКВА, 2008, 474 էջ:

100. **Фукуяма Ф.,** Доверие: социальные добродетели и путь к процветанию, М., ООО «Издательство АСТ»: ЗАО НПП «Ермак», 2004, 730 էջ:

101. **Фукуяма Ф**., Конец истории и последный человек, М., АСТ, АСТ МОСКВА, Полиграфиздат, 2010, 588 էջ:

102. **Фромм Э**., Бегство от свободы. Человек для себя, Мн., ООО «Попурри», 1998, 672 էջ:

103. **Фромм Э.,** Иметь или быть?, М., АСТ, Астрель, 2011, 314 էջ:

104. **Хабермас Ю.,** Когда мы должны быть толерантными? О конкуренции видений мира, ценностей и теорий, Социологические исследования, № 1, М., 2006 45-53 էջ:

105. **Хабермас Ю.,** Моральное сознание и коммуникативное действие, СПб., Наука, 2001, 380 էջ:

106. **Хантингтон С.,** Столкновение цивилизаций, М., АСТ, 2014, 571 էջ:

107. **Хомяков М.Б.,** Толерантность и ее границы, Национальный психологический журнал. № 2 (6), М., 2011, 25-33 էջ:

108. **Шалин В.В.,** Толерантность. Культурная норма и политическая необходимость. Монография, Ростов-на-Дону, 2000, 356 էջ:

109. **Шипилов А.Б.,** Демократия и толерантность, Социологические исследования. Социс, № 3, М., 2005, 38-43 էջ:

110. **Штомпка П.,** Социология социальных изменений, М., Аспект Пресс, 1996, 416 էջ:

111. **Штомпка П.,** Доверие-основа общества, М., Логос, 2012, 440 էջ:

112. **Шютц А**., Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии, М., Институт фонда «Общественное мнение», 2003, 336 էջ:

113. **Эко У.,** Пять эссе на темы этики, СПб., Симпозиум, 2003, 158 էջ:

114. **Ясперс К., Бодрийяр Ж.,** Призрак толпы, М., Алгоритм, 2007, 272 էջ:

115. **Bertram G. Katzung**., Basic and clinical pharmacology, Singapore, Tenth Edition. International Edition, Mc Graw Hill, 2007, 1179 էջ:

116. **Brown W.,** States of injury: Power and freedom in late modernity, Princeton University Press, Princeton, 1995, 219 էջ:

117. **Carson D.A.**, The Intolerance of Tolerance, Wiliam B. Eerdmans Publishing Company, Cambridge, 2012, 196 էջ:

118. **Clarke S., Powell R., Savulescu J.**, Religion, Intolerance and Conflict, Oxford University Press, Oxford, 2013, 304 էջ:

119. **Gibson J.L.,** Alternative Measures of Political Tolerance: Must Tolerance be "Least-Liked"?, American Journal of Political Science, Volume 36, University of Wisconsin Press, Madison, 1992, 560-577 էջ:

120. **Giddens A.**, The consequences of modernity, Stanford, Stanford University Press, 1996, 186 էջ:

121. **Mill J. S.**, On Liberty, Kitchener, Batoche Books, 2001, 109 էջ:

122. **Sabl A.**, The last artificial virtue: Hume of toleration and its lessons// Political theory, Vol. 37, № 4, University of California, Los Angeles, 2009, 511-538 էջ:

123. Speech by Angela Merkel, Chancellor of the Federal Republic of Germany, to the European Parliament in Strasburg on Wednesday, 17 January 2007, http://www.eu2007.de/en/News/Speeches_Interviews/January/Rede_Bundeskanzlerin2.html (01.10.2016):

124. **Wallerstein I.**, Globalization or the Age of Transition?// International Sociology, Vol 15, № 2, SAGE (London, Thousand Oaks, CA and New Delhi), 2000, 251-267 էջ:

125. **Walter B.F.**, Does Conflict Beget Conflict? Explaining Recurring Civil War// Journal of Peace Research. Vol 41, № 3, SAGE Publications (London, Thousand Oaks, CA and New Delhi), 2004, 371-388 էջ:

126. **Widmalm S.,** Political tolerance in the global South, Routledge, Taylor and Francis group, London-New York, 2016, 268 էջ: